


9

9147.9251

4 - 87.



6119

ԴՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԻՆ

19 AUG 2011  
24 JAN 2006

9(47-925)

Ա-87

Զ.

այ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԻՍՏԱԿԱԿԵԱՅ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԼԱՍՏԻՎԵՐՏՅՈՒՅ


Ձ

ԸՆԴ

ԹԻՖԼԻՍ  
Էդեմատայ. Օր. Ն. Աղանեսի, Փոլից. 7  
1912

22 FEB 2013

BOOKS WALK + S



ՅԱԺՐՈՅՑՈՒՄ  
ԱՅՍԻՖԱՆ

Ի ԵԱԿԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ԱՐԵՏԻՔԱՅ ԲԱԼԱՅԵԱՆ

ԴՈՒԿԱՍԵԱՆՑ

Ծուշեցւոյ

Արիստակէս Լաստիվերտցու այս սպազմութիւնն  
արտատպուած է 1844 թուի վենետիկ հրատա-  
րակուած օրինակից:

Տառման աշխատանք այսուհետեւ առաջ դիմումն այ-  
ստիւ և գլուխընակ մայրա յանձնաբանու

ան մեջ առ ԶԵԿՈՒՄՆ այսի Պ

Մատենագիրս ողբերգակ եկաց պատմիչ յընդ-  
միջել մետասաներորդ գարուն, ծնեալ 'ի Լաս-  
տիվերտ աւանի առ երի Սրծնոյ: Սկսանի զպատ-  
մութիւնն 'ի թուականէն Քրիստոսի 989, յորում  
թագաւորէր 'ի Հայո Գագիկ Բագրատունի մա-  
կանուանեալն Շահնշահ, և գայ հասանէ մինչէ  
ցամն 1071: Գլխաւոր նպատակ պատմագրիս է  
ստորագրել զաղէտալի և զարիւնուշտ աւերումն  
մարդաշատ Սնի մայրաքաղաքին որ 'ի սահմանս  
Շիրակայ, զոր արար Ալփալան երկրորդ թա-  
գաւոր Պարսից յամին 1064:

Ոճ մատենագրիս է քաջ հայկաբան. սակայն  
են 'ի նմա դարձուածք ինչ շարամանութեան  
թերի յուղղադատութենէ. թէպէտ այդ մարդ է  
պատահել բազում մասամբք յանհմտութենէ օրի-  
նակագրաց: Քանզի 'ի բաղդատութեան օրինա-  
կացն էին 'ի ձեռս մեր օրինակք չորք անթուա-  
կանք նօտրագիրք, զործք՝ որպէս յայտնի ցու-  
ցանի յեղանակէ դարձուածոյ գրչացն, 'ի վերջ  
ութեատասաներորդ դարուն գրեալք, և կամ 'ի  
սկիզբն առաջիկայ իննետասաներորդիս եւ յա-  
ռուրս տպագրութեան եհաս 'ի ձեռս մեր միւս

այլ ձեռագիր գրեալ՝ թուփն 1825, յոյժ նուազ գանագանեալ յայլոցն մասնկամբ և տառիւք հեթ:

Ի վարդապետութեանն յայտնէ զանձն մատենագիրս գոլ այր ներկուռ իմաստից աստուածաշունչ գրոց՝ յաճախ վերծանութեամբ ՚ի միւիթարութիւն դառնացեալ մատացն յայնպիսի տառապագին ժամանակս։ Որոյ և այնչափ են քաղցրացեալ միտք յիմաստս սուրբ գրոց, զի առ ՚ի զամենայն պատահարս աշխարհի առ Աստուած վերաբերել, որպէս և է իսկ ճշմարտիւ, վառեալ եռանդ նորա անցանէ ըստ չափ. և զամենայն զբանս իւր ՚ի կամեն հաստատել բանիւք աստուածաշունչ սուրբ գրոց՝ է զի կրուսանէ և գկարդ վիպասանութեանն։ Սակայն և այնպէս՝ խոստովանելի է յոյժ նպաստաւոր գոլ մատենիս որոց կամիցինն ստուգագոյնս ինչ պատմագրել յաղագս անցիցն անցելոց զայնու ժամանակաւ ՚ի Հայս յերեսաց անընդհատ արշաւանաց Պարսից, Հագարացոց և արեելեան կայսերաց. զորոց պատմեալքն ՚ի մատենիս թերեւ նոր իմն լոյս տայցեն և օտարագոյն պատմագրաց ժամանակիս առ ՚ի հին անցիցն ճշգրտագոյն հմտութիւն։

ՑԱՆԿ ԳԼԽՈՅՑ

Նախելուանք	.	.	.	.	.	.	.
Ա. Անցը ընդ աշխարհն Հայոց.	.	.	.	.	.	.	3
Բ. Յաղագս թագաւորութեան Հայոց	.	.	.	.	.	.	7
Գ. Թէ որպէս թագաւորն երկրորդ անգամ դարձ առնէ ՚ի վերայ աշխարհին Տայոց, յորում պարտեցան զօրքն Վեռիցացւոց	.	.	.	.	.	.	18
Դ. Վասն վերջին պատերազմին որ ՚ի Շղփայ	.	.	.	.	.	.	23
Ե. Թագաւորութիւն Կոստանդեայ	.	.	.	.	.	.	30
Զ. Թէ որպէս թագաւորեաց Ռոմանոսն.	.	.	.	.	.	.	32
Է. Առումն Ռւսնա քաղաքին	.	.	.	.	.	.	35
Ը. Մահ Ռոմանոսի	.	.	.	.	.	.	37
Թ. Թագաւորութիւն Միսայելին	.	.	.	.	.	.	38
Ժ. Թագաւորութիւն Կոստանդեայ որդւոյ Թէո- դոսի որ կոչի Մոնոմախ.	.	.	.	.	.	.	48
ԺԱ. Յաղագս կոտորածին որ եղև ՚ի գաւառն Բասենայ և ՚ի լեառն որ կոչի Սմբատայ.	.	.	.	.	.	.	65
ԺԲ. Վասն Արծինն անողորմ կոտորածին	.	.	.	.	.	.	78
ԺԳ. Յաղագս մեծի պատերազմին որ եղև ՚ի մեծ դաշտին Բասենոյ յորում պարտեցան Հո- ռոմը	.	.	.	.	.	.	86
ԺԴ. Թէ որչափ եղև հայրապետին Պետրոսի մնալ ՚ի Կոստանդնուպօլիս, կամ որպէս դարձն.	.	.	.	.	.	.	89
ԺԵ. Թէ որպէս անհնարին հարաւ քաղաքն յղփա- ցեալ որ կոչի Կարս.	.	.	.	.	.	.	91
ԺԶ. Վասն գալոյն Սուլտանայ	.	.	.	.	.	.	92

- ԺԵ. Կատարած թագաւորութեանն Մոհոմախին . 107  
 ԺԵ. Թագաւորութիւն Թէոլոսին որ թարգմանի  
 Աստուածատուը . . . . . 116  
 ԺԹ. Վասն աւերանաց երկրին Միջագետաց, և որ  
 ինչ 'ի նմա քաղաքք, և անշտոփ կոտորածին. 130  
 ի. Թագաւորութիւն Կոմիանոսի . . . . . 132  
 ԻԱ. Կործանումն Մելտինոյ շահաստան քաղաքի . 133  
 ԻԲ. Վասն չար աղանդին Թոնդբակեցւոց, որ երե-  
 ւցաւ 'ի գաւառն Հարքայ և զբաղումն  
 խովիաց . . . . . 142  
 ԻԳ. Թէ որպէս և 'ի Մանանաղւոյ սահմանն ըոր-  
 բոքեցաւ հրդեհ մոլորութեանն ասելի է . 151  
 ԻԴ. Վասն տիեզերահոչակ քաղաքին Մնւոյ խող-  
 խողմանն սրով . . . . . 162  
 ԻԵ. Ցաղագս թագաւորին Յունաց, որ 'ի թագա-  
 ւորէն Պարսից ձերբակալ հղե . . . . . 168  
 Ցիշատակարան մատենիս . . . . . 175


## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ժամանեցին մեզ աւուրք չարչարանաց, և  
 զտին զմեզ նեղութիւնք անհնարինք. քանզի լցեալ  
 զեղաւ<sup>1</sup> չափ մեղաց մերոց, և ել աղաղակ մեր  
 առաջի Աստուծոյ. ապականեաց ամենայն մար-  
 մին զանապարհս իւր, և երկիր լցաւ յանօրէ-  
 նութենէ. արդարութիւնն նուազեաց, և անա-  
 սակութիւնն յաճախեաց, ժողովուրդ և քահանայ  
 ստեաց Աստուծոյ: Որոյ աղագաւ ազգք օտարա-  
 ծնաց օտարացուցին զմեզ 'ի բնակութենէս մեր-  
 մէ: Եւ գարձան փառք մեր յապականութիւն.  
 շունչ 'ի մեզ ոչ մնաց, և կորեաք ի հատման յու-  
 սոյ մերոյ. զօրացաւ մահ և եկուլ, և դժոխք  
 շատ ասել ոչ կամեցան. ամենեցուն յարձակեցան  
 'ի մեզ ձեռք, և յանգման<sup>2</sup> յաւուրս մեր ժամա-  
 նակ ոչ ծանեաւ զմնացորդս պատուհասին վճար-  
 մամբ անցելոց: Յաջորդք 'ի յաջորդաց փոխանա-  
 կեցին, և նուազեաց արդիւն արծարծիչ շնչոյ կեն-  
 դանութեան. հաստատունք յաշխարհի 'ի պանդըլս-  
 տութեան իւրեանց պանդխտեցան երկրորդ ան-  
 գամ, և եղեն վտարանդիք ի ձեռանէ պանդըլս-  
 տաց ապստամբաց: Ի սիրելեաց քակտեալք՝ զորս

<sup>1</sup> Յօրինակի միում Լցաւ    <sup>2</sup> Ամենայն օրինակ յանզ-  
 զելսու և յայլում զեղու:    ման, մին և թ յանդիման:

նչ սուր մատակեցաց, ցըռւեցան գօրէն աստեղաց  
մոլորական կոչեցելոց: Յոր յաւուրս մէր զարթեան  
պատերազմունք ՚ի չորից կողմանց. յարեւելից  
սուր, յարևմտից սպանումն, ի հիւսիսոյ հուր և  
ի հարաւոյ մահ. բարձան ուրախութիւնք յերկրէ,  
լուեցին ձայնք քնարաց, լուեցին բոմբիւնք թըմբ-  
կաց, բարձրացան աղաղակք լալեաց: (Եւ այսո-  
քիկ այսքան. բայց ժամ է<sup>1</sup> մեզ ՚ի գլուխ պատ-  
մութեանս ընթանալ, և աստի սկիզբն առնել  
որպէս զի գիւրածան լիցի մեզ բանս:

1 Urh opjhū. dawm' bñjbl:



ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԴՅՈՒՆՎՈՐԱՅՑ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

# ԼԱՍՏՎԵՐՏՏՈՅՑ

ՎԱՄՆ ԱՆՑԻՑՆ ԱՆՑԵԼՈՅ Ի ՑԱՅԼԱՍԵՐՆ ԱԶԳԱՅ  
ՈՐՔ ՇՈՒՐՉ ԶՄԵՅՔ ԵՆ

፩፻፲፭፻፯፻

ԱՆՑՔ ՀԱԴՐ ԱՇԽԱՄՀԱՀՈ ՀԱՅՈՑ:

Եւ եղե յետ մահուան Դաւթի կիւրապա-  
ղատի, որ էր այլ հզօր և աշխարհաշէն, մեծա-  
պարզե և աղքատասէր, որ էր արդարև սահման  
խաղաղութեան. քանզի յաւուրս նորա հանգչէր  
ամենայն մարդ, ըստ մարգարէութեանն, ընդ  
որթով իւրով և ընդ թղենեաւ. իսկ զինի մա-  
հուան նորա խաղայ ինքնակալ թագաւորն Հռոռ-  
մոց Վասիլն՝ 'ի քսան և հինգերորդ ամի թագա-  
ւորութեանն իւրոյ ծանր զինու. և դէմ եղեալ  
դայ հասանէ յԵկեղեաց գաւառ, զանց արարեալ

զբագում օթևանօք: Եւ ընդառաջ ընթանան նմա  
աղատագունդ զօրքն Տայոց, և առատատուր պար-  
գեօք<sup>1</sup> մեծարեալ ի նմանէ իւրաքանչիւր ոք ըստ  
արժանեաց՝ յիշխանութիւն, ի պատիւ, ի գահ  
ժամանեալ՝ ցնծացեալ բերկրեցան յոյժ: Բայց  
կատարեցաւ առ նոսա մարդարէութիւն հոգեր-  
գողին Դաւթի, թէ «Հնդ առաւօտս որպէս դա-  
լարի բուսցին, ընդ առաւօտս որպէս դալարի  
զուարձասցին և ծաղկեսցին. ընդ երեկոյս թար-  
շամեսցին չորասցին և անկցին»: Քանզի թագա-  
ւորն անցեալ յաշխարհն Ազօրի՝ մերձ յամուրն  
որ Հաւաճիչն կոչի, երեկօթս առնէ: Եւ ոչ գի-  
տեմ յորպիսի պատճառանաց ընդ միմեանս ան-  
կեալ արեմտական զօրն, որ կոչի Ըստովք, և ա-  
զատագունդն, և 'ի նմին տեղովջ մեռան յազա-  
տացն երեսուն այր 'ի յոյժ պատուաւորացն: Եւ  
այս ոչ եթէ առաւիր և 'ի զուր անց ընդ նոսա,  
այլ քանզի նոքա յաւուր մեծի հինգշաբաթին դեղ  
մահու խառնեալ ի խորհուրդ պատարագին՝ ար-  
բուցին նմա, և հեղձամահ արարեալ զերանելի  
անձն՝ բարձին ի կենացս, ձանձրացեալ կենօք  
նորա, վասն առաջիկայ խոստմանցն՝ որ 'ի թա-  
գաւորէն ակն ունէին. վասն այնորիկ Աստուծոյ  
արդարադատ իրաւունքն՝ ըստ գործոց նոցա հա-  
տոյց նոցա: Եւ յայնմ օրէ և այսր ոչ յաջողե-  
ցաւ երեք ազատ 'ի տանէ Տայոց ելանել, եթէ

<sup>1</sup> Մի օրինակ պարզեւեալ:

յերկարեաց զկեանս իւր, այլ վաղահուպ մահու  
վճարեցան և բարձան ի կենաց: Կշտամբեալ յան-  
դիմանէ, զնոսա բարձրն Եսայիաս՝ յորս անէ.  
«Փոխանակ զի ոչ ախորժեաց ժողովուրդդ այդ  
զջուրն Սելովմայ որ գնայր խաղաղ, այլ կտմե-  
ցան առնել իւրեանց թագաւոր զհռասիմ և զոր-  
դին Տաբելայ, վասն այնորիկ այսպէս ասէ տէր.  
Ես ածեմ ի վերայ ձեր զջուր գետոյն գհզօրն և  
զյորդն, զարքայն ասորեստանեայց և զփառ  
նորա»: Եւ այսորիկ այսքան:

Եւ 'ի նմին տեղովջ գայ հանդիպի թագա-  
ւորն Ավիսազաց Բագարատ, և հայր նորա Գուր-  
դեն, և մեծապէս փառաւորէ զնոսա ինքնակալ  
թագաւորն: Եւ տայ Բագարատայ զպատիւ կիւ-  
րապաղատութեան, և հօր նորա զՄագիստրոսու-  
թեան, և արձակէ զնոսա խաղաղութեամբ. և  
ինքն երթեալ անցանէ ընդ Հարք և ընդ Մա-  
նազկերտ. և վագ առեալ<sup>1</sup> դառնայ ի վերայ Բագ-  
րեանդայ և գայ ի քաղաքն Ուխտեաց, և տիրէ  
բազում գաւառաց և բերդից և քաղաքաց: Եւ  
կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և դատա-  
ւորս և վերակացուս. և ինքն դառնայ զճանա-  
պարհս իւր խաղաղութեամբ, և հասանէ 'ի թա-  
գաւորական քաղաքն իւր 'ի Կոստանդնուպօլիս:  
Այս եղե 'ի չորեքհարիւր յիսուն թուականիս և  
դադարեալ երկիրն հանգեաւ ամս ժոր:

<sup>1</sup> Երկու օրին. վաղ առեալ: Եւ յայլում զետի առեալ:

Եւ ինքն թագաւորն երթեալ վճարէ զհողս  
արևմտական կողմանն. քանզի տիրէ Բուլղարաց  
աշխարհին, գաւառաց և քաղաքաց նոցա, զոր՝ի  
բազում ժամանակաց հետէ ՚ի սկզբան թագաւոր-  
ութեան իւրոյ՝ անհանգիստ պատերազմօք ոչ  
կարաց ընդ ձեռամք առնել. իսկ այժմ պատե-  
հութիւնքն նմա ՚ի դէպ ելանէին, Քանզի որ ու-  
նէր զաշխարհն՝ յաղթողն ՚ի պատերազմունս,  
վախճանեցաւ իւրային մահուամք. իսկ որդիք  
նորա՝ քանզի ոչ հնազանդեցան միմեանց, անձ-  
նատուր եղեալ ելին առ թագաւորն. քանզի «Ա-  
մենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ ոչ  
կարէ կեալ»: Այս է Բուլղարաց երկրի առնլոյն  
օրինակ: Իսկ թագաւորն զորդիս Բուլղարաց բռո-  
նակալին հանեալ ՚ի ժառանգութենէ իւրեանց  
զարմօք և աղգաւ, և տայ նոցա տեղիս յաշխարհն  
չուռմոց. իսկ զգօրն աշխարհին՝ խաբանօք ՚ի մի  
վայր ժողովէ, որպէս թէ պարզես տալ նոցա,  
և գրով զհամարս նոցա կալեալ՝ առաքէ զնոսա  
յարեելս անդառնալի եկիւք: Որք եկեալ զաշ-  
խարհն յաւեր դարձուցին. վայ նոցա գալոյն յա-  
րեելս, և վայ ուր նոքա անց և դարձ արարին.  
ահա ազգ չար և անողորմ, ազգ դառնասիրտ և  
հարկանող. ՚ի դէպ է ասել առ նոսա զմարգա-  
րէականն ողբս. «Առաջ նորա զրախտ փափկու-  
թեան, և վերջ նորա դաշտ ապականութեան»:  
Եւ այսոքիկ այսքան. բայց մեք ի կարգ պատ-

մութեանս դարձցուք:

Յամի չորեքհարիւրերորդի և վաթսներորդի  
չորրորդի թուականիս մերոյ՝ մեռաւ թագաւորն  
Ափխազաց Բագարատ, և թագաւորէ Գէորգ որդի  
նորա<sup>1</sup>. առ որ գրէ ինքնակալ թագաւորն Վասիլ  
հրովարտակ, որ ունի օրինակ զայս. եթէ Զոր ՚ի  
Կիւրապաղատին բաժնէ եաուլ<sup>2</sup> հօր քում ՚ի պար-  
դև թող, և քո հայրենեացն միայն լեր իշխան:  
Իսկ նա ոչ առնու յանձն. այլ ՚ի մանկական տիսն  
հղարտացեալ՝ զընդդէմսն առնէ պատասխանի,  
թէ Զոր իմ հայրն կալեալ է իշխանութեամք,  
յայնմանէ և տուն մի չտամ ումեք: Իսկ ինքնա-  
կալին լուեալ զայս, զօր առաքէ բռնութեամք  
տիրել աշխարհին: Որոց ընդդէմ եկեալ քաջացն  
Տայոց՝ մօտ ՚ի մեծ աւանն Ուխտեաց, ՚ի փա-  
խուստ դարձուցին զգօրս Հոռոմոց. բայց քաղա-  
քին և այլ շինանիստ տեղեացն՝ չմեղան ինչ:  
Այս եղև սկիզբն կործանման տանն Տայոց:

### ԳԼՈՒԽ Բ.

ՅԱՂԱԳԸ ԹԱԳԱԼՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ:

Յայնմ ժամանակի էր և Հայոց աշխարհին  
թագաւոր Գագիկ որդի Աշոտոյ, եղբայր Սմբա-  
տայ և Գուրգենայ, ՚ի ցեղէն Բագրատունոյ,

<sup>1</sup> Մի օրին. յաւելու ընդ 2 Մի օրին. ի տուն:  
նորա:

այլ հզօր և յաղթօղ՝ի պատերազմի. սա 'ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց: 'ի սորաժամանակս պայծառացան կարգք եկեղեցւոյ, և լուսաւորեցան մանկունք ուխտի սրբութեան. 'ի սորա աւուրս «Լցաւ երկիր գիտութեամբ տեառն՝ իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծովս» ըստ մարգարէին կանխաձայնութեան: Քանզի ունէր զաթոռ հայրապետութեան տէր Սարգիս, մնեալ սրբութեամբ՝ 'ի ծոց եկեղեցւոյ. և վարժեալ կրօնաւորական ճգնութեամբ՝ 'ի կրօնաստանն՝ որ կոչ Սևանայ կղզի. զոր շնորհիւն Աստուծոյ կոչեն ըստ արժանաւորութեան, և նստուցանեն յաթոռ մերոյ Լուսաւորչին. որ նորին կարգօքն քաղաքավարեալ՝ 'ի մարմնի, բարի հանդիսիւք աւարտեաց զկեանս իւր:

Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք՝ Սարգիս և Տիրան անուն և Յենովք, որ կաթուղիկոսարանին էին վարդապետք. և Սամուէլ, որ կամրջացն ձորոց վանացն առաջնորդութեամբ հովուէր. և Յովսէփ որ Հնցուց էր նախազահ. և Ստեփաննոս Տարոնացին որ զաշխարհապատում գիրսն շարագրեաց սքանչելի յօրինուածովք, սկսեալ՝ 'ի մարդն առաջին և գայ բովանդակէ զպատմութիւն իւր 'ի վախճանն Գագկայ, վասն որոյ պատմութիւնս է. և Յովհաննէս 'ի նոյն գաւառէ, զոր վերագիր անուամբ կողեոն կոչէին, որ զհաւատոյ գիրսն գրեաց. և Գրիգոր

յոյժ խմաստունն բանիւք, և այլք բազումք, յուրոց աւուրս բարձրանայր յոյժ եղջիւր եկեղեցւոյ ուղղափառ խոստովանութեամբ: Իսկ որք իմէթ աչօք հայէին 'ի մեզ, 'ի սոցա վարդապետական հանդիսիցն կորակնեալք իբրև զմկունս ի ծակս որմոց սոզոսկեալ մտանէին: Եւ այսոքիկ այսքան:

Իսկ թագաւորն Գագիկ յերկար ժամանակաւ վարեալ<sup>1</sup> զթագաւորութիւնն, և բարի յիշատակաց արժանի լեալ, 'ի խորին ծերութեան լուծանէ զկեանս իւր. և պայտագատեն զիշանութիւնն որդիք նորա Սմբատ՝ զոր Յովհաննէս կոչէին, և Աշոտ նորին հարազան: Եւ էր Սմբատ մարմնով հարստի և յոյժ թանձր, բայց իմաստութեամբ ասէն առաւել զոլ քան զյուգունս. իսկ Աշոտ բարեկարգ ունելով զդիրս մարմնոյ, քաջասիրտ և պատերազմաէր զոլով: Սոքա ընդմիմեանս անկեալք հակառակութեամբ վասն բաժնից երկրին՝ կարօտացան իրաւանց և դատաստանի: Որոց եկեալ թագաւորն Ավիսազաց Գէորգ՝ 'ի խաղաղութիւն համոզեաց զնոսա. և տայ բաժին երկանուանն Սմբատայ՝ զամուլն Անի և որ շուրջ զնովաւ գաւառք, վասն անդրանկութեան. իսկ Աշոտայ զներքին կողմն աշխարհին՝ որ հայի 'ի վերայ Պարսից և Վրաց: Եւ հաւանեալ Սմբատ դարձաւ ի քաղաքն իւր. և 'ի ճանապարհին իջևանս արարեալ վասն ծանրութեան 1 երկու օրին. զկեանս եւ զթագաւորութիւնն:

մարմնոյն, յանհոգս ննջէր. իսկ մի ոմն յիշատանացն՝ ի կողմանէն Աշոտոյ՝ ի դատ կացեալ առաջի Գէորգի, առէ՝ թէ Շատիկ իմ բնական տեղի է, զոր անիրաւաբար տարաւ յինէն Աըմբատ: Զոր լուեալ Գէորգի, մեծասաստ ցամամամք՝ ի բարկութիւն բրգեալ՝ զօրս առաքեաց զկնի նորա. որք եկեալ հեղան յանկարծուստ՝ ի վերայ նորա, և նա վասն ծանրութեան մարմնոյն ոչ կարաց նստել յերիվարն. իսկ իշխանքն որ գհետ նորա, քաջապէս՝ ի փախուստ գարձեալ՝ բազում կոյտս դիականց զհետ մտելոցն՝ ի ճանապարհին կացուցանէին մինչև՝ ի դուռն Անւոյ: Եւ անտի գարձեալ, զեկեղեցիս կաթուղիկոսարանին՝ ի զարդուց կապուտ կողոպուտ արարին. և զբեռոս խաչին<sup>1</sup> հանեալ՝ նախատանօք ասէին, թէ Տանիմք և ձիոցն լուսին առնեմք. զոր ի դիպող ժամու հատոյց նոցա արդարադատն Աստուած՝ ի ձեռն Հոռոմոց, զոր յիւրում տեղեռջն ասասցուք: Իսկ զԱմբատ կալեալ տարան առ Գէորգին, զոր հրամայեաց ունել ի պահեստի. և ապա առեալ երիս բերդս՝ արձակեաց զնա:

Իսկ Աշոտ՝ վասն զի որ շուրջ զսահմանաւ նորա մեծամեծք էին, զբազումս ի տեղեաց նորա տարեալ էին անիրաւաբար, առ որս ոչ կարաց համբերել. վասն որոյ թողեալ զաշխարհն՝ եր-

1 Երեքին ևս այսպէս ունէին:

թեալ հասանէ՝ ի դուռն<sup>1</sup> Հոռոմոց. և հաճոյ եղեալ նմա՝ խնդրէր զօրս յօդնականութիւն, և առեալ դայ անցանէ յաշխարհն իւր: Եւ յաջողեալ նմա՝ յԱստուծոյ, տիրէ բազում գաւառաց և բերդից. և զօրանայ քան զամենեսին և որ յառաջ քան զնա էին. մինչ զի բազումք՝ ի մեծամեծացն՝ զհայրենի տեղիս իւրեանց՝ ի նա թողեալ, նմա զանձինս կամօք՝ ի հնագանդութիւն ետուն: Մինչև ցայս վայր պատմութիւնս մեզ հեշտալի է:

Իսկ՝ ի չորեքհարիւր վաթսուն և եօթն ամի թուականիս մերոյ՝ առաքէ ինքնակալ թագաւորն<sup>2</sup> զնիկոմիտացի լշխան ոմն, որ եկեալ մարդարկարկանէ յերկրիս. և ժողովեալ բազմութիւն մարդկան՝ սկիզբն առնէ վերստին շինելոյ<sup>3</sup> զթէորուպոլիս:

Եւ՝ ի չորեքհարիւր վաթսուն և ութ թուականին՝ ձեռնադրի տէր Պետրոս՝ ի կաթողիկոսութիւն առ կենօքն տէր Սարգսի: Եւ՝ ի չորեքհարիւր եօթանասուն թուականին՝ դարձեալ խաղայինքնակալ թագաւորն ծանը զօրու, և գայ յարևելս. և եկեալ իջեանս առնէ յընդարձակ դաշտն կարնոյ. և առաքէ զեսպանս առ Գէորգի վրաց իշխեցողն, գալ ինքեան՝ ի հնագանդութիւն: Քան-

1 Երկու օրին. Թագաւորացի, և միւս զկոմինիցիցի: որին Հոռոմոց:

3 Մի օրին. Թէոդոս:

2 Այլ օրին. զկոմինիւ պոլիս:

զի և եպիսկոպոս ոմն վրացի ազգաւ՝ որ նստէր  
՚ի քաղաքն Վաղարշակերտ, երթեալ թագաւորին  
ընդառաջ, վատահութիւն տայր բանից, թէ Յոր-  
ժամ յԵկեղեց կամ ՚ի կարին ելանես, քեզ ընդ-  
առաջ զայ: Եւ նա նորին բանիցն հաւատացեալ,  
և յայն ապատան՝ մնայր նորա գալստեանն օթե-  
ւանէ յօթեանս փոխելով: Այլ նա ոչ առնոյր  
յանձն գալ ՚ի կոչ թագաւորին. քանզի բազումք  
՚ի նորայոցն ահ արկանէին նմա, թէ ՚ի տեսանել  
գքեղ՝ կամ մեռանիս, կամ արդելական առնէ, և  
ոչ ժամանես ՚ի քո պատիւն: Իսկ թագաւորն ան-  
ցեալ ՚ի Բասեան, երկուս և երիս պատգամաւորս  
առաքէ, քանզի յոյժ կամէր խաղաղութեամբ  
վճարել զիւր ճանապարհուդութիւնն, և աշխարհի  
մնալ ՚ի շինութեան: Ապա ՚ի սպառել<sup>1</sup> պատգա-  
մացն, ի բարկութիւն շարժեալ թագաւորն՝ հրա-  
ման տայր հրով և սրով և գերութեամբ ապա-  
կանել զմեծ աւանն՝ որ կոչի Օկոմի, և որ շուրջ  
զնովաւ գիւղը և ապարակը որ ՚ի բաժնին էին.  
զորոյ զգերին առեալ, հրաման տայ խաղացու-  
ցանել ՚ի գաւառսն Խաղակեաց, և ինքն դէմ եգեալ  
անցանէ ընդ Բասեանն, և հասանէ ՚ի Վանանդ<sup>2</sup>  
կամ ՚ի Փորակ: Իսկ Գէորգի գիւղօղ ժամ գտեալ՝  
հասանէ ՚ի վերայ քաղաքին Ուխթեաց, և հրամայէ  
զօրացն հրով կիզուլ զգեղեցիկ դաստակերտս

1 Մի օրին. ղիմարսեան պատուէր տայ մի՛ ողոր-  
միլ, և այլն:

նորա, և յաւարի վարել զինչս նորա, բայց մար-  
դոյ մի ինչ մեղանչել: Իբրև լուաւ զայս թագա-  
ւորն, ևս քան զիս ՚ի բարկութիւն բրդեալ՝ դառ-  
նայ ՚ի վերայ նորա. և պատահեալ զօրքն մի-  
մեանց մերձ ՚ի ծովակն որ կոչի Պաղակացիս,  
ահազին դղրդմամբ զմիմեանս հարկանէին: Ուստի  
՚ի շողալ սուսերացն և ՚ի վայլիւն սաղաւարտացն՝  
հրոյ փայլատակունք զլերամբն անկանէին, և ՚ի  
կոփիւն սուսերացն կայծակունք հրոյ հատեալ՝  
յերկիր անկանէին: Ընդ որ և ինքն իսկ թագա-  
ւորն նայեցեալ՝ զարմանայր ընդ քաջութիւն պա-  
տերազմողացն, զի իբրև զյորձանս զետոց ընդ  
վիմի հարեալ, այսպէս զօրքն Հոռոմոց ընդ նոսա-  
հարեալ՝ ընդ կրունկն դառնային: Յորում տեղ-  
ւոջ մեռաւ մեծ իշխանն Ըստ, մօրից սլատա-  
հեալ երիվարին՝ ոչ կարաց անցանել. յորոյ վե-  
րայ սուր եղեալ սպանին զգովելի անձնն, որ  
սուդ մեծ հասոյց տանն Տայոց: Իսկ Գէորգի զօ-  
րօք իւրովք երթեալ ամրանայ յամուրն Ափիսա-  
զաց. և թագաւորն ընդ կողմանս աշխարհին զօրս  
առաքէ, ասպատակ արձակէ, պատուէր տայ<sup>1</sup>  
մեծասաստ հրամանաւ մի ողորմիլ ծերոյն և մի  
երիտասարդին, մի տղային և մի հասակաւ կա-  
տարելոյն, մի առն և մի կնոջ, և մի ամենին  
ամենայն հասակի: և այսու ձեռնարկութեամբ

1 Մի օրին. ղիմարսեան պատուէր տայ մի՛ ողոր-  
միլ, և այլն:

քանդեալ ապականէ գաւառս երկոտասան։ Յորս  
էր տեսանել տեսութիւն ողորմելի և բազում  
արտասուաց արժանի. քանզի բարձրածեղուն ա-  
պարանք արքունաշէն տաճարաց՝ որք մեծամեծ  
ծախիւք և հնարագիտութեամբ ճարտարաց՝ ՚ի  
սքանչանս տեսողաց և ՚ի վայելս ուրախութեան  
բնակողացն շինեալ էին, հրայրեացք անկեալ կոր-  
ծանեցան, և որք նոցին տեարքն՝ առ նմին սրա-  
կոտորք։ Աւաղ պատմութեանս, աւաղ չար արա-  
րուածին. զիարդ կարացից ես աղքատս գիտու-  
թեամբ և տխմարս քան զամենեսեան ընդ գրով  
արկանել զայն ժամու զլեալսն, և կամ ողբալ  
ըստ արժանւոյն զմեր թշուառութիւնս. այսոքիկ  
երեմիայի հոգւոյն են, որ զիտէ զողբսն ըստ  
թշուառութեանն յօրինել։ Բայց մեք խուն բա-  
նիւք զերկանս զայսոսիկ արձանացուցանեմք  
զպատմութիւնս ՚ի լուր լսելեացն ազգի՝ որ զա-  
լոցն է. որպէս զի որդիք որ ծնանիցին՝ յարի-  
ցեն և պատմեացեն զայս որդոց իւրեանց. որ-  
պէս զի մի մոռասցին զգործս Աստուծոյ, որ  
արդարակ<sup>1</sup> կշռով հատուցանէ ամենեցուն՝ որք  
խոտորին յիրաւանց նորա, ըստ Յորբայ բանիցն  
«Հատուցէ, ասէ, յանդիման ատելեացն իւրոց,  
և ոչ յամեցուացէ»։

Արդ եկ համարեա ինձ զօրինակն զայն ժա-

1 Մի օրին. արարուա-

մու արարուածին<sup>1</sup> և զպատուական և զհարկեոր  
ալիս ծերոցն ընդ արիւն և ընդ ապաժուժ թա-  
թաւեալ, զերիտասարդմն սրակոտորս, զմնթիւ և  
զանհամար զաշացուսն զորոց զլուսարանս խա-  
ւարեցուցին։ Կարծեմ թէ այսոքիկ ՚ի դէպ անց  
ընդ նոսա, փոխանակ զի զարքունաղըոշմ նշա-  
նին բեկոսն հանեալ ՚ի դուռն կաթուղիկէին, նա-  
խատանօք ասէին՝ լուսին առնել երիվարացն. այս  
իրաւամբք անց ընդ նոսա, և որ առ սոքօք դառն  
տեսութիւնն։ Ազատ կանայք ՚ի հրապարակս ե-  
ւեալ, և զքօղն ՚ի գլխոցն ՚ի բաց տոեալ. անպատ-  
կառ ընդդէմ արեու ՚ի խայտառականս անկեալ՝  
և որք հետի ոտիւք ՚ի տես հիւանդաց կամ յուկ-  
տի տեղիս հազիւ երթային, այժմ մերկ զըր-  
խով և ոտամբ<sup>2</sup> առաջի գերչացն գնան, մերկ  
՚ի զարդուց, անկեալ ի պատույ, մատնեալ ընդ  
բիւր անարգանօք։ Իսկ զկաթնասուն տղայսն,  
զկէսն ՚ի զրկաց մարցն առեալ զքարի հարկա-  
նէին. և զայլս ՚ի զիրկս մարցն աշտէիւք խոցեալ՝  
ընդ կաթն մարցն զարիւն մանկանցն խառնէին.  
և զկէսն ՚ի կիցս ճանապարհացն ընկեցեալ ՚ի  
սմբակս երիվարացն՝ առհասարակ սատակէին։  
Ռվ Աստուծ քո յայնժամ ներողութեանն։ Սա-  
կայն այսու ամենայնիւ ոչ շիջաւ բարկութիւն

1 Մի օրին. արարուա-  
ծոցն։ 2 Մի օրին. ստեամբ:

նորա. այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է մյս՝ ի վերայ սորին յաւելուլ չարիս. Եւ այսու գործով զբարեշէն երկիրն անմարդի արարեալ յաւեր յամայի կացուցանէր մինչև՝ ի գալ ձմերայնոյն.

Բայց ոչ գիտեմ որպիսի օրինակաւ անց ընդ նոսա այս ամենայն. Եթէ ըստ կարգի իրատու, եթէ վասն առաւելեալ ամբարշտութեան բնակչաց երկրին, եթէ վասն դժնաբարուց արևմտական զօրացն՝ ի խուժադուժ ազգաց ժողովելոցն: Իսկ թագաւորն զառնայ՝ ի ձմերոցն՝ ի մարմանդս. Պոնդոսի, և ի ջեալ՝ ի գաւառն Խաղաքեաց՝ երեկօթս առնէ: Որում զհետ եկեալ հայրապետին Պետրոսի հանդիպի նմա յաւուրս Ս.ստուածայայտնութեան մեծի տօնին, և մեծարեալ պատուի՝ ի նմանէ:

Իսկ՝ ի լուսաւորութեան աւուրն, յորում օրէն է քրիստոնէից թագաւորաց և իշխանաց՝ ի բարեպաշտութեան կացելոց՝ զի ընդ առաջնորդս եկեղեցւոյ հաւասարեն զանձինս, և հետի ոտիւք՝ ի ջուրս իջանեն, և անդ կատարեն զվարհուրդ տէրունական մկրտութեան. արդ՝ ի հանդիպման աւուրն՝ հրամայէ թագաւորն հայրապետին Պետրոսի օրէնել զջուրն ըստ մերոյ կանոնիս, և չոռոմոց եպիսկոպոսացն, որ անդ զիալեցան՝ ըստ իւրեանց կանոնին: Եւ՝ ի հեղուլ հայրապետին պտէրունական իւղն՝ ի ջուրսն, ցնցուղս լուսոյ

ձառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն. զոր տեսին առ հասարակ ամենեքեան, և փառաւորեցին զԱստուած. և բարձրացաւ եղջիւր հաւատոյս մերոյ: Եւ ևս առաւել պատուվ մեծարեալ ի թագաւորէն և ի սպայլցն՝ հայրապետն Պետրոս, դառնայ ի տուն իւր: Բայց անդ եղեւ չայոց կորստեան զիր և նամակ. քանզի Յովհաննէս պատուէր տուեալ էլ Հայրապետին, եթէ զրէ զիր և տներ կտակ թագաւորին, զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն. քանզի իւր ոչ գոյր որդի թագակալ թագաւորութեանն. վասն զի որդին նորա<sup>1</sup> վախճանեցաւ, և ոչ ժամանեաց ի պատիւ հօրն: Եւ թագաւորն երթեալ հասանէ ի ձմերոց յառաջասացեալ տեղին. և զօրքն զմարդագերին վաճառակուր արարին ի հեռաւոր ազգս:

Ի սոյն ժամանակս փոխի յաշխարհէ սուրբ և արժանաւոր հայրապետն տէր Սարգիս, և է գերեզման նորա ի Հոռոմոսի վանքն:

<sup>1</sup> Այլ օրին. որդին նորա երկաթ վախճանեցաւ. միւսն՝ որդին նորա վաղ վաղճանեցաւ եւ չժամանեալ.

## ԳԼՈՒԽ Գ.

Թէ ՈՐՊԵ՛Ս ԹԱԳԱՒԽՈՐՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԴԱՐՁ  
ԱՌՆԵ ՚Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ՏԱՅՈՅՑ, ՅՈՐՈՒՄ ՊԱՐ-  
ՏԵՑԱՆ ԶՈՐՅՆ ՎԵՌԻԱՑԻՈՑ:

Իսկ ինքնակախն զձմերոցմն ՚ի գլուխ հանեալ  
՚ի մարմանդուն Պոնդոսի, ՚ի հասանել գարնանա-  
բեր ժամանակին, խաղայ դարձեալ նոյն հետայն  
՚ի վերայ Տայոց. և անցեալ ընդ բազում օթե-  
ւանօք՝ գայ ընակի ՚ի գաւառն Բասենոյ: Իսկ  
բազումք յիշանացն Հուումոց, զորս ընդ ժամա-  
նակս ժամանակս յայլեայլ պատճառս ՚ի պա-  
տուոյ իշխանութենէ ընկեցեալ էր թագաւորին,  
որք իբրև առիւծունս ՚ի գառագիզս մոնչէին,  
աստ գիպօղ ժամ գտեալ՝ ՚ի մի վայր ժողովե-  
ցան. և խորհուրդ վատ ՚ի մէջ առեալ, խորհուրդ՝  
զոր ոչ կարացին հաստատել, խորհեցան միաբա-  
նութեամբ ապստամբել ՚ի թագաւորէն, կացու-  
ցանել թագաւոր զոր ինքեամնք կամիցին: Եւ իբ-  
րև յայս հաստատեցան, ապա լուսացուցին զխոր-  
հուրդսն, յընդարձակ դաշտին բանակ կապեցին.  
յորում անթիւ բազմութիւն մարդկան ՚ի մի վայր  
ժողովեցան, և սկսան զթագաւորական պատիւն<sup>1</sup>  
յիրեարս հարկանել: Եւ ապա միաբանեալ ամե-

1 Մի օրին, առ յիրեարս:

նեցուն բուռն հարին զորդւոյն Փոկասայ, զոր  
Ծուալիզն կոչէին, որ վասն հօրն մեղանաց ՚ի  
վաղնջուց հետէ յիշխանութեան պատուոյ ան-  
կած էր: Որ ոչ հաւանեալ՝ չառնու յանձն. որք  
ոչ թուլացան ՚ի ինդրոյն, այլ բռնադատեալ հա-  
ւանեցուցին մինչև յանձն էտ:

Զոր իբրև լուաւ ինքնակախն՝ ՚ի մեծի տա-  
րակուսանաց միջի անկեալ կայր, և երթեալ ամ-  
րանայ յամուրս բերդի միոջ որ կոչի Մազդատ.  
քանզի հին սովորութիւնն է այս տանն Յունաց:  
Բայց ոչ գիտեմ եթէ աստուածային իրաւունք  
են այս, որ չէ պարտ ծառայից ՚ի վերայ տե-  
րանց յառնել, և եթէ թագաւորին յայնժամ ա-  
ռանձինն բարեշնորհութիւնն էր. զայս հաւաստեաւ  
գիտեմ, և աչօք իմովք տեսի, զի որք յարեան ՚ի  
վերայ նորա՝ ծիծաղելի մահուամբ ելին ՚ի կե-  
նացս. որպէս յառաջինսն ՚ի սկզբան թագաւո-  
րութեան իւրոյ ապստամբեաց ՚ի նմանէ Վարդ  
որ կոչի Սիլլառոս, և տարաւ զհոռումս՝ համա-  
րեա թէ ընաւ զամենայն զհետ իւր, մինչ զի  
թագաւորին ինքել զօր յօդնականութիւնն ՚ի  
վրաց կիւրապաղատէն. որովք հարեալ զբոնա-  
կախն՝ փախստական հանեն յաշխարհէն. որ եր-  
թեալ անկանի ՚ի Բարելովս ՚ի քաղաքն Քաղդէա-  
ցւոց: Եւ ապա զհետ նորա զնոյն ախտ ախ-  
տացաւ նորին անուանակիցն Փոկաս, և տիրեաց  
ամենայն արևելից ամս եօթն: Որ և չորս հազար

մարդով միայն անցեալ գիշերի ընդ ծով, 'ի վերայ անկանի բիւրաւոր զօրաց ապստամբին, և յայնքան բազմութեան ոչ ոք մեռանի, բայց միայն ինքն ապստամբն զլսովին. զորոյ զգլուխն հատեալ՝ հրամայէ հարկանել փող խաղաղութեան. և 'ի դադարել պատերազմին՝ իւրաքանչիւր 'ի զօրացն դառնան 'ի տունս իւրեանց. և ինքն թագաւորն մեծաւ յազմութեամբ երթեալ մտանէ 'ի քաղաքն իւր 'ի կոստանդնուպօլիս:

Նոյնպէս և աստ ոչ ինչ յերկարեցաւ նոցամանկան խաղուն արարուած, և կամ 'ի վերայ աւազոյ շինուած, որ 'ի բախել հեղեղացն վաղվաղակի անկեալ կործանեցաւ: Քանզի Դաւիթոր<sup>1</sup> Սենեքերիմ կոչիւր, որ նեղեալ 'ի Պարսից՝ տայ զհայրենի ժառանգութիւն իւր զտունն վասպուրականի յինքնական Վասիլ, և առնու փոխարէն զքաղաքն Սերաստիա և որ շուրջ գնովաւ գաւառք: Եւ այսոքիկ ոչ հեռի ժամանակաւ, այլ երկու կամ երեք ամօք յառաջ զործեցաւ. և յայնմհետէ և այսր տիրեցին Հոռոմք արևելից: Սա յայնժամ 'ի խորհուրդ միաբան ապստամբացն էր, և հաւատարիմ առ նոսա. որ յանկարծակի իբրե 'ի քնոյ զարթուցեալ, կամ իբրե զհօր այր՝ զի թափէ զգինի, տեսեալ զգործսն անպատեհութեան, և զի ոչ դոյր այլ իւիք հնար խափան առնել չար միաբանութեանն, ապա 'ի 1 երկու օրին. Սենեքարիմ:

միում աւուր յեղակարծ ժամու՝ առնուն զոր թագաւորն անուանեցին, ելին արտաքս 'ի բանակէն որպէս թէ 'ի խորհրդական բանից<sup>1</sup> ոլութենութիւն. և յանկարծակի սուր 'ի վեր առեալ սպան զնա. և հատեալ զգլուխն և տուեալ ցնառայս իւր՝ փութապէս հասուցանէ առ թագաւորն:

Իսկ ժողովուրդքն՝ 'ի լինել այսորիկ այսպէս, այլ զարամբ ելանէին փութապէս զանելաբար 'ի առնսս իւրեանց հասանել. և առժամայն խափանեցան ամենայն խորհուրդք նոցա:

Իսկ թագաւորն տեսեալ զգլուխ բռնակալին, հըամայեաց 'ի վերայ ձողոյ բարձրացուցանել 'ի տեսիլ ամենայն բանակին. քանզի էին բազումք 'ի նոցանէ որ թէպէտ ոտին ընթացիւք զիետ թագաւորին էին, այլ բանիւ և խորհրդով ընդ ապստամբին միաբան էին: Զայս առնէ ըստ իւր խորին իմաստութեանն, որպէս զի տեսեալ զայն՝ 'ի բաց կացցեն 'ի նանիր խորհրդոցն, և ուղեսցին 'ի սիրտս իւրեանց 'ի հնազանդութիւն թագաւորին:

Յետ այսորիկ իջանէ թագաւորն զօրօք յընդարձակ դաշտն Բասենոյ, և առաքէ հեծեալս 'ի հեթանոսուկան զօրացն կալանաւորս ապստամբին Փերսի. և ինքն խաղացեալ հասանէ 'ի սպառուածն Բասենոյ, 'ի տողովն որ կոչի Սալբորա,

1 Մի օրին. 'ի խորհուրդ պատեհութեան:

և խոր փոսիւ պատճէչ արարեալ շուրջ զբանական՝ դադարէ անդ ամսական աւուրբք կամ ևս առաւելագունիւք:

Իսկ առաքեալքն ՚ի թագաւորէն կալեալ զՓերս և զԱնդրոնիկէ զնորուն փեսայն, որ էր համախորհ նորին, և ածեալ մինչև յամուրն որ կոչի Խաղաոյ առիճ<sup>1</sup> ՚ի սպառուածն կարնոյ, և հասեալ յագարակն՝ որ հայի ընդդէմ ամրոցին, իջևանս արարեալ, և յառաջ ածեալ զՓերսն և Անդրոնիկոսն՝ հատին զգլուխս նոցա: Քանզի զայն պատուէր տուեալ էր նոցա թագաւորին. վասն զի նոքա յապսատամբելն իւրեանց դաշնաւորք եղեն Ավիսազին և խոստացան մինչև յայն տեղի տալ նմա ՚ի բաժին<sup>2</sup>. վասն զի յառաջ ժամանակաւ կալեալ էր զայն Դաւթի կիւրապաղատի, բայց ոչ իբրև զիւր հայրենի ժառանգութիւն, այլ պարզեք էին այսոքիկ ՚ի թագաւորէն վասն նորա միամիտ հնագանգութեանն. և զի խոստացեալ էր՝ յետ իւր վախճանին զիւր դաւառն տալ ՚ի թագաւորն<sup>3</sup>, նոքա զայն չածէին զմտաւ, այլ առատամիտ ՚ի պարզես լինէին՝ որ չէր իւրեանց: Վասն այնոքիկ անդ հրամայեաց թագաւորն զգլուխս նոցա բառնալ:

1 Երկու օրին. Խաղաոյ 2 Երեք օրին. ՚ի բաժնի, առին:  
3 Մի օրին. թագաւորին:

## ԳԼՈՒԽ Դ.

ՎԱՍՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ՚Ի ՇՂՓԱՅ:

Այլ թագաւորն զաւուրսն զորս եկաց ՚ի Աալբորայ, քանզի երիս բերդս իւրեանց դաստակերտօքն ինդրէր ՚ի Գէորգէ, զոր Գուրգինայ տարեալ էր ՚ի բաժնէն կիւրապաղատէն անիրաւըար, առաքէր առ նմա դեսպանս, և քաղցրական բանիւք զրէր առ նա, թէ զոր քո ոչ է հայրենի ժառանգութիւն՝ թնդ, և կաց խաղալութեամբ ՚ի քո բաժնիդ, և մի խափան առնէր իմ ճանապարհին որ ՚ի Պարսիկո: Այլ նա ոչ առնույանձն. յետոյ առաքէ զԶաքարիա՝ զոր յառաջ սակաւ մի յիշեցաք, զեպիսկոպոսն Վաղարշուկերտոյ. որոյ երթեալ հաւանական բանիւք պատրեալ զԳէորգի, որում<sup>1</sup> յանձն առնու, և զրէ առ թագաւորն տալ զոր ինդրէրն որոյ առեալ զգիրն դարձաւ ուրախութեամբ:

Եւ եկեալ օրագնաց մի ճանապարհ<sup>2</sup>, յիշավանսն՝ յոր օթեանս առնլոց էր, փութանակի հասին զինի նորա սուրհանդակք ՚ի ինդիր զրոյն, քանզի զղչացաւ անմիտն. և տոեալ դարձան անդ-

1 Մի օրին. զոր:

2 Այլ օրինակք. զօրագնաց մի ՚ի ճանապարհին իջավանսն:

բէն։ Իսկ նա երթեալ հանդիպի թագաւորին, և պատմէ զեղեալսն, ապա հարցանէ թագաւորն վասն զօրացն, և վասն կազմ լինելոյ նոցա 'ի պատերազմական հանդէսն։ Պատասխանի տուեալ Զաքարիայն ասէ, թէ Բազում զօրս ունի որպէս ոչ այլ ոք, և հզօրս զօրութեամբ և պատրաստ առ 'ի պատերազմել։ Զոր լուեալ թագաւորին, 'ի բարկութիւն շարժեալ ասէ, թէ Եւ դու յապըստամբիցն ես եկեալ, ահ արկանես ինձ։ Եւ հրամայէ խաղաղացուցանել զնա 'ի Կոստանդնուպոլիս, ասելով. Երթ դադարեա անդ, մինչև ես փախստական 'ի քեզ եկից։ Եւ հրամայէ տարուղացն հաստանել զիեզու նորա։ Որոյ երթեալ և ոչ ևս դարձաւ 'ի տեղի իւր. այլ մնաց 'ի նոյն մինչև յօր մահուան իւրոյ։

Յետ այսորիկ թողեալ թագաւորին զբանակետ իջեանին Սալքորայ, խաղայ զօրօքն յառաջ՝ 'ի տեղուջ որ կոչի Շղփայ։ Զոր իմացեալ Ափ խազին, մինչդեռ չե էին բանակեալ և պատնշաւ ամրացեալ, խորամանկի այսպիսի օրինակաւ։ Գլխաւոր զոմն յիւրոց եպիսկոպոսացն դեռալան առաքէ. և ինքն զկնի դեսպանին զօրօքն զհետ ընթանայ՝ որպէս թէ յանպատրաստից 'ի վերայ հասեալ՝ զարհուրանօք զնոսա 'ի փախուստ դարձուցանիցեն։ Որք ելեալ սթափ ձիով՝ այր զընկեր յառաջէր ոչ պատերազմի օրինակաւ, այլ որպէս թէ առ յապուռ. որպէս 'ի հնումն յաւուրսն Յով-

րամայ՝ Մովաբացիքն 'ի վերայ հսրայէլի եկեալ հարան 'ի սուր դառնութեան, նոյնպէս և սոցա հանդիպեցաւ։ Վասն զի յանդզնաբար հասեալ 'ի վերայ երիվարացն, 'ի զօրութենէ պակասեալ՝ վասն ծանրութեան և վասն երկաթակուռ զինուցն, և վասն արագ և յերկար ընթացիցն, որք առժամայն անաշխատ 'ի մէջ առեալ զնոսա զօրացն հոռոմոց, կոտորեցին անթիւ բազմութիւն։ Իսկ մնացեալքն թագաւորաւն իւրեանց փախըստական եղեալ՝ անկանէին յամուրն<sup>1</sup> Ափխազաց. որոց զհետ երթեալ զօրացն՝ կոտորեցին մինչև 'ի մուտս արեւուն։ Ապա հրամայէ թագաւորն զզուխ սպանելոցն 'ի մի վայր հաւաքել, և առ մի մի բերողացն տալ մի մի դահեկան։ որք խոյզ արկեալ ընդ ամենայն սահմանն՝ զանկելոցն զգըւուսն առաջի թագաւորին բերելով<sup>2</sup> 'ի մի վայր հաւաքէին. զոր հրամայէ 'ի վերայ ճանապարհին կոյտս կոյտս զնել 'ի զարմանս և յերկիւղ տեսողացն։

Յետ այսորիկ իբրև ետես Գէորգի զինքն անկեալ յամենայն յուսոյ, ապա աղաչէ զթագաւորն դալ 'ի խաղաղութիւն։ Զոր լուեալ գթացաւ 'ի նա, և<sup>3</sup> զրէ հրովարտակ առ նա օրինակ զայս. Մի կարծէր, ասէ, թէ յաղթեցի քեզ, ա-

<sup>1</sup> Երկու օրին. անկան 'ի յամուրն։

<sup>2</sup> Յերկու օրինակ չիք բերելով։

<sup>3</sup> Երկու օրին. հրաման։

ւելի ինչ խնդրեմ՝ ի քէն՝ քան զոր յառաջն. այլ  
տուր զիմ հայրենիքն՝ զոր կիւրապաղատն ինձ  
տուեալ է, և տուր զըռ որդիդ ինձ պատանդ. և  
այլ ընդ իս և ընդ քեզ խաղաղութիւն է: Որում  
հաւանեալ յանձն առնու. և թագաւորին իշխանս  
՚ի վերայ գաւառին կացուցեալ, բաժանեն տուն  
առ տուն և գեօղ առ գեօղ և ագարակ առ ա-  
գարակ, որպէս յառաջինն լեալ էր: Եւ թագա-  
ւորին Վասլի առեալ զպատանդսն՝ և խոստանայ  
զկնի երից ամաց գարձուցանել. և ինքն խաղա-  
ցեալ զօրօքն պատի զչայովք, և իջանէ բանակի  
յընդարձակ դաշտն Հերայ հեծելովք. և հրամայէ  
զօրացն կոտորել զծառատունկս քաղաքին: Իսկ  
որ քաղաքին իշխանն էր, աղաչէր հարկօք պաշ-  
տել զթագաւորն և կալ նմա 'ի հնագանդութիւն:  
Եւ մինչ նա յայս խորհրդի էր, քանզի ա-  
մենայն աշխարհն Պարսից տո հասարակ զարհու-  
րանօք պաշարեալ կային յերկիւղի, և ինդրէին  
հնարս փրկութեան, յանկարծակի խտացան ամ-  
պովք երկինք և յորդութիւնք անձրեաց յերկիր  
հեղան. և զկնի այնը շնչեաց հիւսիսային կծու  
հողմ, և դարձոյց զանձրեն 'ի կարկուտ և 'ի  
ձիւն և 'ի սառն, և թանձրամած իջիւք ծածկեաց  
զերես երկրին. քանզի և ժամանակն իսկ ձե-  
ռնտու<sup>1</sup> էր այնմ, զի քաջ 'ի ձմերոց հասեալ  
էր: Եւ յերկարեալ յորդութեան ձեանն, և խըս-  
1 երեք օրին. ձեռնատու,

տութեան սառնամանեացն, ջոկք ձիոցն և ջո-  
րեացն ընդարձացեալ ոչ կարացին շարժել: Իսկ  
հետեակքն՝ ՚ի զօրացն՝ ՚ի գառնութենէ սառնա-  
մանեացն ծայրք ոտիցն և ծայրք ձեռացն իբրև  
՚ի հրոյ կիգեալք, հատեալք անկանէին. և վրա-  
նացն լարքն և ցիցքն ընդ երկիր կապեալ ՚ի  
սաստկութենէ գառնութեան արկածիցն՝ անշարժ  
մնացին: Եւ այս որպէս ինձ թուի հտառացումն  
նոցա անողորմ սրոյն, զոր նոքա 'ի վերայ քրիս-  
տոնէիցն ածին. այլ թէպէտ նոքա վասն մեղացն  
մատնեցան, այլ սոցա պարտ էր ողորմել, որպէս  
և ցԲաբելացին ասէր Աստուած. «Ես մատնեցի  
զժողովուրդ իմ՝ ՚ի ձեռս քո. և դու ոչ արարեր  
՚ի վերայ նոցա ողորմութիւն»: Վասն այսորիկ  
դառն սառնամանեօք տանջեցան, ոչ՝ ՚ի բարձր  
լերինս, այլ՝ ՚ի խորագոյն դաշտս և ՚ի կարի  
ջերմինս՝ ՚ի տեսիլ թշնամեացն իւրեանց. որ-  
պէս առ Մովսէսիւն Եփիպտոս հարաւ կարկտիւ  
և եղեմամբ, որ չէր ըստ բնութեան երկրին.  
ուստի բարբարոսքն ծանեան յայտնապէս, եթէ  
ձեռն ամենակալին պատերազմի ընդ նոսա: Եւ  
՚ի լինելն այսորիկ այսպէս, որք ուժով և զօրու-  
թեամբ մնացին՝ ելեալ յերիվարս թագաւորաւն  
հանդերձ, իբր՝ ՚ի թշնամեաց հալածեալք ՚ի սառ-  
նամանեացն՝ ոչինչ փոյթ առնելով ընչից, ան-  
ցանէին՝ ՚ի գաւառն Արծրունեաց: Զոր տեսեալ  
քաղաքին, յանկարծակի գրոհ տուեալ ՚ի դուրս

ելանէին, և մեծաւ խնդութեամբ դիմեալ՝ ի վերայ, լցան աւարաւ՝ ի ձիոց և՝ ի ջորեաց և՝ ի վրանից և յայլ կազմածէ, զոր նոքա ոչ կարացին պէտ առնել, այլ՝ ի ցըտոյն վարանսն էին։ Իսկ թագաւորն նախատեալ յաւարառուացն՝ ծանեաւ յայտնապէս թէ ձեռն տեառն մատնեաց գվիրս՝ ի ձեռս նորա, որպէս՝ ի գիրս թագաւորութեանն գրեալ է։ «Ոչ, ասէ, իւրով զօրութեամբ զօրանայ հզօրն, այլ տէր<sup>1</sup> տկարացուցանէ զհակառակորդն»։ Ապա շարժեալ թագաւորն զօրօքն՝ անցանէ բազում օթևանօք, երթեալ հասանէ՝ ի քաղաքն իւր՝ ի կոստանդնուպօլիս։ և կացեալ ամս երիս, արձակէ բազում պարզեօք զորդի Ափիսազին, և ինքն զմահու ցաւ ջերանի։ Բայց քանզի կոստանդին նորին հարազատն և թագակիցն՝ ի նիկիացոց գաւառին էր<sup>2</sup> որ հրամայէ թագաւորն խնդրակս առաքել, որպէս զի փութով առ նա հասցէ։ Իսկ որք հրամանատարք էին՝ բանիւր հաւանութիւն տային, բայց թագուցանէին առ ինքեանս զհրամանս թագաւորին։ Քանզի ոչ կամէին եթէ կոստանդին թագաւորեացէ։ Զոր յետ բազում հրամայական բանին ծանուցեալ ինքնակալին<sup>3</sup> զիսորամանկութիւն նո-

<sup>1</sup> Երկու օրին. տկար բամանկութիւն ինքնակապնէ։

<sup>2</sup> Երեք օր. զոր։

<sup>3</sup> Յօր. ծանուցեալ զիս-

ցա, հրամայէ սպասաւորացն՝ եթէ Զի ածէք ինձ. և յարուցեալ՝ ի մահճացն նստաւ՝ ի վերայ ձիոյն, և ելեալ արտաքս՝ ի պալատէն՝ ի տեսիլ քաղաքին։ զոր տեսեալ բազմաց՝ յերկիւղէն՝ ի խաւարչտին տունս երթեալ սուզանէին։ Ապա խընդրակը ելեալ զկոստանդին փութապէս անդը հասուցանէին, զոր տեսեալ թագաւորին՝ եղ զթագ թագաւորութեանն ՚ի գլուխ նորա և հաստատեաց զնա թագաւոր, և պատուէր ետ նմա՝ որպէս Դաւիթ Սողոմոնի, զիսովիչս թագաւորութեանն, և զայնոսիկ որ ոչ կամէին զիթագաւորելն նորա՝ ի վերայ իւրեանց, ոչ պահել կենդանի։ Բայց ոչ որպէս Դաւիթ, թէ պատճառաւ որսասջրի։ Եւ ինքն առեալ զոտս՝ ի մահիճո իւր՝ պակասեաց, և զկնի երկու աւուր բարձաւ՝ ի միջոյ. որ թագաւորեաց ամս յիսուն։ Բայց և՝ ՚ի մահուաննորա նշան իմն սքանչելեաց ցուցաւ յերկնից.՝ ՚ի ժամու երեկոյին՝ յորում նա զհողին փչեաց, վերին եթերն հերձեալ հրոյ փայլակն յանկարծակի՝ ՚ի<sup>1</sup> ստորս անկեալ. զոր առհասարակ ամենեցուն տեսեալ, Զմահ թագաւորին, ասեն, գուշակէ։

<sup>1</sup> Երեք օր.՝ ի դուրս։

## ԳԼՈՒԽ Ե.

ԹԱԳԱՀՈՐՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ:

Թագաւորեաց զկնի Վասլին կոստանդին նոռըուն հարազատն՝ ամս չորս. և քանզի այր խաղաղամէր էր և առատ, յառաջին ամին իւրոյ թագաւորութեանն եկաց 'ի լոռութեան. և հանգեաւ երկիր 'ի մեծամեծ տագնապէ. և զիշանսս որ գաւառակալք էին, զորս մեծն Վասիլ կարգեալ էր, 'ի նոյն հաստատեաց: Իսկ կոմիանոս ոմն՝ այր քաջ և պատերազմասէր, զոր կացուցեալ էր եղբայր նորին՝ տէր գաւառին Վասպուրականի, սա մեծամեծ գործս արութեան ցուցեալ 'ի դուռն Պարսից, և եղեւ անուանի յամենայն արևելս. սա 'ի մահուան թագաւորին խորխուրդ վատ 'ի մտի<sup>2</sup> եղեալ, դաշնակից լինի Գէորգեայ թագաւորել յարևելս: Զոր ծանուցեալ կապուտակացի գօրուն, միաբանեալ յանկարծակի 'ի վերայ հասին, և զլարս վրանին հատեալ 'ի վերայ ընկերին. և կալեալ զնա և զնորին խորհրդակիցսն՝ եղին 'ի բերդի միոջ 'ի բանափ, և ծանուցին թագաւորին: Այս եղեւ յառաջին ամի թագաւորութեանն կոստանդիանոսի, յորում էր

1 Մի օրին. Կոմինասս:

2 Այլ օրինակ 'ի մտի արկեալ:

թուականիս մերոյ ամք չորեքհարիւր եօթանառն և հինգ:

Իսկ թագաւորն իբրև լուաւ, առ տեղեան չէած ինչ նմա պատուհաս. այլ ներեաց զամն ողջոյն, մինչև քաջ 'ի վերայ եհաս իրացն: Ապա 'ի գալ երկրորդ ամին, առաքեաց գահիճ, որ եկեալ խաւարեցոյց զլուսսարանս նորա և զորս ընդ նմա՝ արանց իբրև ութից, որ յոյժ ապաշաւանաց արժանի է. թէ զիարդ զառածեալ անկաւ 'ի մտաց այնպիսի պատուական այր և<sup>1</sup> բարեաց յիշատակաց արժանի. քանզի զԱրձէշ իւրով դաստակերտօք նա էած ընդ ձեռամբ Հոռոմոց:

Իսկ 'ի գալ երկրորդ ամին՝ առաքէ թագաւորն յարևելս վերակացու աշխարհին զնիկիառմ ներքինի, որ եկեալ անցանէ 'ի գաւառն Վրաց, և պատիր բանիւք բազումս յազատաց աշխարհին հանեալ 'ի հայրենեաց՝ առաքէ 'ի դուռն թագաւորին: Զոր տեսեալ և ուրախացեալ՝ մեծամեծ պարզեօք և իշխանական գահու պատուէ զնոսա, և տայ նոցա ըստ արժանեաց գեօդս և աւանս զրով և մատանեաւ ժառանգութիւն յաւիտենից: Իսկ 'ի մտանել երրորդ ամին՝ ելանէ յարեելս Սիմովս ներքինի բազում զօրօք, որ ունէր զիշխանութիւն կէս թագաւորութեանն, զոր ըստ յունական լեզուին Պառեկիմանոս<sup>2</sup> անուանեն. որ եկեալ անցանէ յաշխարհն Վրաց, բայց չժամանակու օր. բարի:

1 Երկու օր. բարի:

2 Մի օր. անուանէին:

մանեաց գործ ինչ վճարել, զի բօթ մահու թագաւորին զհետ եկն. զոր իբրև լուսւ՝ առանց յապաղանաց դարձեալ զօրօքն չոգաւ՝ ի կոստանդնուպօլիս:

### ԳԼՈՒԽ Զ.

Թէ ՈՐՊէՍ ԹԱԴԱՀՈՐԵՍՑ ՌՈՄԱՆՈՍՆ:

Քանզի Վասիլին, հզօրն ՚ի թագաւորս և միշտ յաղթօղն ՚ի պատերազմունս, որ զբագում աշխարհս կոխեաց <sup>1</sup> ընդ ոտիւք, յարիական քաջութեանց ոչ պարապեաց առնուլ կին, և յարուցանել որդիս ժառանգ թագաւորութեանն, որպէս օրէն է ամենայն թագաւորաց: Զկնի նորա փոխանորդէ զթագաւորութիւն յառաջասացեալն կոստանդիանոս նորին հարազատն: Եւ սորա ևս քանզի որդի ոչ գոյր, այլ էին դստերք երկու, տայ զԶոյի անդրանիկն ՚ի կնութիւն Ռումանոսի, որ էր մի ՚ի զօրաց սպայիցն Հոռոմոց, և թագաւորեցուցանէ զնա փոխանակ իւր, և ինքն մահուամբ ձեզի զհետ <sup>2</sup> ամենայն երկրածնաց:

Սա յառաջին ամի իւրոյ թագաւորութեանն զօրաժողով լինի, և ճանապարհ առնէ ՚ի կողմանս Սնտիռքացւոց, և կամէր երթալ ՚ի վերայ քաղա-

1 Այլ օրինակք ոտիւք:

2 Մի օր զհետ երկրածնաց. Այլ օր զհետ ամենայն երկրայնոց:

քին որ կոչի Հալպ, առնուլ աւերել զնա: Եւ եկեալ հանդիպի լերինն որ կոչի Սեաւ, և տեսանէ անդ բազմութիւն վանորէից և զմենաստանս միայնակեցաց, որք ՚ի մարմնի գոլով զանմարմնոցն բերէին զնմանութիւն. որք միով այծէիւ կամ բաճկոնաւ շատանան, զՅովհաննու բերելով զնմանութիւն. բայց միայն զի նա մարախով և վայրենի քաղցու կերակրեալ լինէր, իսկ սոքա երկաթի բըիչ ՚ի ձեռն առեալ՝ խոնջեալ աշխատին ՚ի <sup>1</sup> գարի սերմանեաց պատրաստեալ զօրապահիկն կերակուր. այլ զանազան խորտիկս և զքաղցրահամ կերակուրս հանդերձ ուրախարար գինեաւ՝ զոր մատուակեն որթք այգեաց, զայսոսիկ զամենեսեան աշխարհասիրաց թողին. ՚ի գլուխ լերինն բարձրացեալ նախամարդարէին կաճառակից գոլով՝ միշտ ընդ Աստուծոյ խօսին:

Զսոսա տեսեալ թագաւորին՝ հարցանէր արժանաւորաց իւրոց, Զինչ են այն բազմութիւն հերետիկոսացն: Եւ նոքա ասեն, Սոքա ամենեքեան երամք աղօթողաց են, որք աշխարհի իսակաղութեան և կենաց ձերոց առողջութեան միշտ խնդրուածս առնեն: Պատասխանի տուեալ թագաւոր ասէ. Զէ ինձ պիտոյ աղօթք նոցա. այլ <sup>2</sup> գերեցէք յամենայն վանորէիցն աղեղնաւորս ՚ի

1 Մի օր ՚ի գար սերմանեաց:

2 Երկու օր զրեցէք:

ծառայութիւն իմում թագաւորութեանս։ Քանզի յոյժ հաւանեալ էր քաղկեդոնական սահմանադրութեանն՝ ատելի գոլով ամենայն ուղղափառ հաւատոց։ Որ և զԱսորոց եպիսկոպոսն տարեալ՝ ի կոստանդնուպօլիս, <sup>1</sup> ձաղ և ծանակ արարեալ, հրամայէ խուզել զմորումն, և 'ի վերայ իշոյ եղեալ շրջեցուցանել ընդ հրապարակս և ընդ փողոցս, թքակոծ առնել զնա. զոր յետոյ հրամայեաց 'ի մետաղս տանել զնա, որ և 'ի նմին իսկ փախճանեցաւ։ Այսպէս խակամիտ ոմն էր թագաւորն. որ և զառաջին թագաւորսն չէած զմտաւ, թէ որպէս խնամակալութիւն ցուցին առ ազգս՝ զորս ընդ ձեռամբ ունէին. այլ ինքնօրէն հրամանաւ կամէր նորաձես առնել յեկեղեցիս Աստուծոյ՝ ոչ յիշելով զաէրունական զանսուտ հրամանն, թէ «Ամենայն որ հարցի ընդ վիմիս ընդ այսմիկ՝ փշրեսցի. և յոյր վերայ անկցի՝ հուսեսցէ զնա»։ Վասն որոյ 'ի մօտոյ հասանեն արժանահաս դատաստանքն Աստուծոյ 'ի վերայ նորա։ Որ 'ի նմին ճանապարհի ելեալ զօր 'ի տաճկացն՝ ոչ աւելի քան զութ հարիւր կամ զհազար այր, և անկեալ 'ի վերայ բիւրաւոր բազմութեանցն, անչափ կոտորուածս առնէին. և զգանձսն թագաւորին և զօրաց առեալ յաւարի՝ դարձան 'ի քաղաքն իւրեանց։

1 Մի օր. ծաղը եւ ծանակ։

Իսկ թագաւորն մեծաւ անարգանօք փախըստական եղեալ՝ ձիաթափ անկանի 'ի քաղաքն թագաւորութեան իւրոյ։ Ապա ցածուցեալ 'ի սաստիկ ամբարտաւանութենէն, կարաց ածել զմտաւ զբան դաւթական երգոյն որ ասէ, թէ Բարի է յուսալ 'ի տէր և յաղօթս սրբոց, քան յուսալ յիշխանս և 'ի գանձուց առատութիւնս. Քանզի ոչինչ <sup>1</sup> օգնեն ինչք յաւուր բարկութեանն եւ յայնմ հետէ և առ յապայ ոչ ևս յաւել ելանել 'ի թագաւորանիստ քաղաքէն մինչկ ցօր մահուան իւրոյ։

## ԳԼՈՒԽ Է.

ԱՌՈՒՄՆ ՈՒՇՀԱ ՔԱՂԱՔԻՆ.

Որ քաղաքին իշխանն էր, զոր ինքեանք Ամիրա կոչէին, որ 'ի նախնեացն ունէր զժառանգութիւն <sup>2</sup> տեղւոյն, մեռաւ անորդի. իսկ կին նորա զմի 'ի ծառայից իւրոց՝ որում անունն էր Սալամայ, առ արփական ցանկութեան սիրեաց զնա, և կացոյց զնա տէր քաղաքին 'ի տեղի առն իւրոյ։

Իսկ նա երկուցեալ 'ի գլխաւորաց քաղաքին՝ թէ ոչ հնազանդին նմա, առաքէ զմին 'ի

1 Միօր. օգտեն։

2 Մի օր. տեղեացն։

հաւատարիմ ծառայիցն իւրոց առ Մանեակ, որ յայնժամ ունէր զիշխանութիւն յեղերս գաւառին Հոռոմոց, որ հատէր՝ ի քաղաքին որ կոչէր Սամուսատ, զոր ասուն՝ ի հինսն շինեալ Սամփասնի. որպէս զի զգացուցէ թագաւորին, զի տացէ նմա իշխանութիւն և ժառանգութիւն յափտենից, զրով և թագաւորական մատանեաւ յաշխարհն Հոռոմոց. Եւ ես տաց. ասէ, առանց պատերազմի զքաղաքս՝ ի ձեռս նորա: Զոր լուեալ թագաւորին Ռոմանոսի, զրէ նմա զիր հաւանական. և առնէ զնա<sup>1</sup> Սնթիպատոս Պատրիկ, և զկին նորա պատուէ մեծ և երևելի պատուով:

Իսկ քաղաքացիքն իբրև լուան զձայն աղաղակին և զնչիւն փողոցն, սրտաթափ լի դողութեամբ՝ ի դուրս ելանէին զարհուրեալք և խոռվեալք, իբրև զալիս ծովու կուտակեալք զմիմեամբք զեղուին: Եւ իբրև ոչ կարէին զելս իւրացն իմանալ, որք մահմետական օրինօքն սովորեալ էին, ելեալ՝ ի գիշերի՝ անկանէին՝ ի մօտաւոր քաղաքս, պատմելով նոցա զյանկարծահաս շտապ տագնապին որ եհաս նոցա: Իսկ նոքա իբրև լուան, ձայն տուեալ՝ ի մի վայր ժողովեցան բազմութիւնք զօրաց. և եկեալ՝ ի վերայ քաղաքին՝ խրամատեցին զպարիսալ նորա, և

<sup>1</sup> Երկու օր. անթիպատոս պատրուիկ:

մտեալ՝ ի ներքս՝ բազում կոտորուածս առնէին: Ուստի բազումք՝ ի քաղաքէն՝ ի մեծ կաթուղիկէն ելեալ ամրանային, և այլք յամուը տեղիս կամ յաշտարակս: Իսկ պաշտարիչքն զբազում տեղիս հրով<sup>1</sup> այրեցին, մինչև՝ ի նոյն ինքն՝ ի սուրբ Կաթուղիկէն հուը ընկեցին. և բացեալ զգանձարանս տանն սրբութեան՝ զոր<sup>2</sup> յառաջին թագաւորացն Հայոց ամբարեալ էր՝ ի սպաս պիտոյից տաճարին տեառն, և հանեալ զամենայն մեծաւ շտապով՝ զնացին՝ ի տեղիս իւրեանց: Եւ յայնմօրէ և այսը նուաճեցաւ քաղաքն՝ ի ձեռն Հոռոմոց:

### ԳԼՈՒԽ Ը.

#### ՄԱՀ ՈՂՄԱՆՈՍԻ:

Իսկ թագաւորն ոչինչ բարի յիշտապակաց արժանի լեալ, յաւուը մեծի հինգշաբաթուն ելեալ՝ ի պալատանն՝ հրապարակախօս լինել ընդ զօրս իւր, մինչև՝ ի հասարակ աւուրն տալ ըստ իշխանութեան<sup>3</sup> զարքունատուր պարզեան. և ապա պարապեալ՝ ի գործոյն՝ հրաման տայ ոսկի լականաւ ջուր պատրաստել առ՝ ի<sup>4</sup> լուանալ նմա:

<sup>1</sup> Այլ օրինակ՝ ապականեցին.

<sup>2</sup> Մի օր. յառաջ:

<sup>3</sup> Մի օր. արքունական:

<sup>4</sup> Երեք օր. Լոգանալ:

Եւ իբրև եմուտ յոսկի ծովակն լցեալ ջերմ ջրով, սպասաւորքն բուռն հարեալ զգիսոյ գլխոյ նորա ծածկեցին ընդ ջրովս. մինչև վճարեցաւ 'ի կենաց՝ թագուհւոյն կամակից լինելով առնելեացն, որ կալաւ զթագաւորութիւնն ամս եօթն:

## ԳԼՈՒԽ Թ.

ԹԱԳԱՀՈՐՈՒԹԻՒՆ ՄԻԽԱՅՅԵԼԻՆ:

Դանիէլ յիւրում մարգարէութեանն՝ զոր ետես, որոյ գլուխ ոսկի էր, և թիկունքն և ձեռքն արծաթի, իսկ մէջքն և կողքն պղնձի, սոքա անցեալ են. իսկ սրունքն և ոտքն երկաթի խառնեալ ընդ խեցի, որ է Հոռոմոց թագաւորութիւնն. զի ոչ ըստ ազգի վարի, որպէս և այլ ազգաց թագաւորն և որդի թագաւորի: Որ 'ի հարց և 'ի հաւուց ունի զիշսանութիւնն՝ այն երկաթն է. իսկ եկամուտն՝ որ ոչ է 'ի թագաւորական տոհմէ՝ այն խեցին է: Եւ այս յոլովակի լինի առ նոսա, որպէս և այժմ իսկ տեսանեմք յառաջի կացեալ թագաւորս: Սա ոչ 'ի թագաւորական տոհմէ, և ոչ որդի թագաւորի, և ոչ իշխանութեամբ յերեւելի սպայիցն. այլ այր մի աննշան՝ 'ի պալատին պաշտօնէից, յոր տրփացեալ թագուհւոյն պոռնկական մոլեգին ախտիւն, 'ի պատճառս նորա ջրահեղձոյց արար զայրն իւր որ

և 'ի սպանողացն մի զսա ասեն լինել: Իսկ զկնի սատանայական գործոցն ՚ի գլուխ և ելանելոյ, հրամայէ թագուհին զգլխաւորս քաղաքին կոչել առ ինքն. և ցուցանէ զթագաւորն վախճանեալ՝ յանկարծամահ զնա համբաւելով. և ապա հուպ ընդ հուպ զՄիխայէլս զայս յառաջ ածեալ թագաւորեցուցանէ՝ այր իւր առնելով, որոյ գործն յայտնի եղեւ ամենեցուն: Սա քանզի բազում ազգականս ունէր և եղբարս, զգլխաւորագոյն իշխանութիւնն ետ ՚ի ձեռս նոցա: Զմի յեղբարցն առնէ Մագիստրոս, և տայ գթէսաղոնիկն՝ ՚ի ձեռս նորա, և հաւատայ ՚ի նա զնոգս Բուղարացն և արևմտական կողմանցն. և զմինն անուանէ Դեմեսլիկոս, և առաքէ ՚ի մեծն Անտիոք, զտածկաստանի և զհարաւային կողման զնոգսն յանձն առնելով նմա: Իսկ զերկրորդն յեղբարցն՝ որ էր այր ներքինի և աբեղայ, որում անուն կոչիւր Օռթանոռոս, կացուցանէ զնա ՚ի թագաւորական քաղաքն ՚ի Կոստանդնուպօլիս՝ առնելով զնա Սինկլիտոս, զամենայն հոգս և զիրաւունս պալատին տալով ՚ի ձեռս նորա:

Եւ ինքն քանզի չարապէս հարաւ ՚ի գիւէն, մինչև յեկեղեցիս և 'ի հանգիստ սրբոցն ընթաշնայր. բայց ոչ գիտեմ եթէ վրէժինզրութիւն էր այս Ռումանոսին մահուն՝ որ անիրաւապէս մե-

1 Մի օր. ելելոյ. Այլ օր. եղելոյ:

ուաւ, եթէ<sup>1</sup> 'ի բնէ ունէր զդիւահարութիւնն: Բայց ասեն և այլ պատճառս, եթէ վասն զի չէր անգ նմա թագաւորութիւնն, վասն որոյ երթեալ 'ի քաղաքն Թեսաղոնիկեցւոց առ կին մի կախարդ, որպէս 'ի հինան առ Բարսղիւ երիտասարդին պատմին գործք 'ի ձեռն կախարդին, տուեալ զինքն 'ի ծառայութիւն հօրն ամենայն չարեաց. որ 'ի ձեռն պոռնկական դիւխն ջեռեալ թագուհւոյն՝ առ զնա և կացոյց զնա թագաւոր 'ի վերայ<sup>2</sup> աշխարհաց: Իսկ յետ գործոյն 'ի գլուխ ելանելոյ, ըստ օրինի թագաւորաց յեկեղեցիս 'ի հարկէ երթեալ 'ի տօնս տէրունականս, ոչ կարացեալ համբերել չար դիւխն, յիւրմէ ապստամբ զնա կարծելով: Եւ զայս այնու հաւատարմացուցանեն՝ որ ասեն, զի յաճախ թագաւորն 'ի Թեսաղոնիկն կայր, զոր կարծէխն առ կախարդին լինել: Այլ թէպէտ այսպէս, թէպէտ այնպէս, սակայն մինչ 'ի վախճանն ոչ հեռացաւ 'ի նմանէ այսն<sup>3</sup> որ լլկէր զնա:

Ի սորա թագաւորութեան եղե մեծ կոտորած զօրացն Հոռոմոց՝ 'ի բերդաքաղաքն որ կոչի Բերկրի, որ է 'ի վիճակի Արծրունեաց աշխարհին, զոր վաղնջուց յափշտակեալ էր Պարսից՝ հանդերձ իւրովք դաստակերտօքն, և ունէին ընդ

1 Ի միում օր. 'ի բնէ անտի:

2 Երկու օր. 'ի վերայ ամենայն աշխարհաց:

3 Երկու օր. այսն չար:

ձեռամբ: Յորոց վերայ եկեալ կաւասիլաս ոմն՝ որ Վասպուրականի գաւառապետն էր՝ բազում զօրու, առ զքաղաքն և կացոյց գունդս հեծելոց պահապան քաղաքին: Յայնժամ այլ ոմն փոխանորդեաց զիշխանութիւն նորա, և առեալ զզօրսն երթեալ դադարեաց հեռագոյն 'ի տեղւոջ ուրեք որ կոչի Արծակ, վասն առատութեան գարմանին և այլ պիտոյից հեծելոց: Իսկ տէր քաղաքին, ուրում անուն կոչիւր Խարիկ, 'ի բերդին արդելական եղեալ ազդ առնէ առ գլխաւորս Պարսից աշխարհին: Որք յանկարծակի ձայն տուեալ միմեանց՝ 'ի մի վայր ժողովեցան, և հասեալ 'ի վերայ քաղաքին պաշարեցին զնա պատնիշաւ: Իսկ զօրքն Հոռոմոց յանառակ գործոց և 'ի գինւոյ թմբրեալ, ոչ կարացին զգուշանալ անձանց: Այլ և պահապանն Իսրայէլի զերծ 'ի նոցանէ զօդնականութիւն իւր. յորոց վերայ սուր եղեալ կոտորեցին արս իբրև քսան և չորս հազար: Եւ այս եղե ոչ վասն արդարութեանն Պարսից, այլ վասն անօրէնութեանն մերոց զօրացն, որք հարան 'ի սուր դառնութեան ըստ տեառն բանի, եթէ «Զչարսն չարաւ կորուսցէ»: Իսկ զօրքն որ յԱրծակ՝ ոչ ժամանեցին նոցայունութիւն: Եւ առեալ զօրացն Պարսից զկապուտ և զաւար սպանելոցն՝ չոգան յաշխարհն իւրեանց: Բայց 'ի ճանապարհին, քանզի ունէին բազում կալանաւորս, հրամայէ Խարիկն յիշեանին ըստ անձին

փորել գերկիր, և զկապեալսն զենուլ 'ի վերայ փորուածոյն՝ մինչև լի իսկ լինել, և մտաւ լուացաւ արեամբ սպանելոցն առ ՚ի հանգուցանել զայրուց սրտին:

Իսկ ՚ի գալ երկրորդ ամին, դարձեալ այլ զօրք առաքեցան ՚ի թագաւորէն, որք եկեալ մեռքենայս և մանգղիոնս եղեալ, սկան փլուզանել զպարիսպ ամրոցին: Եւ տեսեալ որք ՚ի բերդին էին՝ թէ ոչ գոյ նոցա հնար ալլրանաց, քանզի և բազումք իսկ մեռան ՚ի նոցանէ, աղաչեցին զզօրբազլիսն՝ զի արձակեցեն զնոսա առանց վսասու յաշխարհն. իւրեանց. և ինքեանք կալցեն զամուրս և զդաստակերտս նորա: Որք իբրև լուան՝ արարին որպէս և ուսանն. և յայնմ օրէ և առ յապայ բարձաւ տէրութիւնն Պարսից ՚ի տեղոջէ անտի:

Իսորա ՚ի սկզբան թագաւորութեանն՝ խաւարեցաւ<sup>1</sup> արեգակն յամսեանն Արաց, յաւուրն ուրբաթու ՚ի դառնալ աւուրն, էր և թուականիս մերոյ չորեքհարիւր ութսուն և երկու ամ: Զոր տեսեալ բազումք ՚ի զիտնոց, կարծեցին գոյ զծնունդ նեռինն զօրն զայն, կամ մեծամեծ չարեաց գուշակ: Որ եղև իսկ յաւուրս մեր, յորս պատմութիւն բանիս առաջնորդեալ տանի զմեզ, զոր տեսաք աչօք մերովք զաստուածասաստ հարուածն, և զնորանշան պատուհան որ եհաս ՚ի 1 երկու օր. արեգակն յամենայն արեանց:

վերայ տանս Հայոց վասն մեղաց մերոց: Նաև յառաջ ժամանակաւ այլ իմն մեծ նշան երևեցաւ, որ յոյժ հիացումն բերէր տեսողացն. որ էր նման նշանացն վերջին աւերածին երուսաղեմի, զորմէ սպանալով Փրկիչն ասէր, թէ «Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց՝ որպիսիք ոչ եղեն ՚ի ներքոյ երկնից ՚ի սկզբանէ արարածոց, և մի այլ լիցի»: Վոխանակ զի ՚ի տէրն և յարարիչն իւրեանց կատաղեցան՝ մարդ կարծելով զնա: Այր մի Անանիաս անուն ՚ի մէջ քաղաքին երուսաղեմի կացեալ՝ բարձրածայն աղաղակաւ ողբս առեալ. ասէր. Վայ երուսաղէմ, վայ քաղաք արեան. հասին աւուրք վրէժինութեան քո, և որ այլ ևս. զոր մեծն եւսերի յեկեղեցական պատմութիւնս նշանակէ: Նոյնպէս և աստ ՚ի մերում ժամանակիս, նմին նման այր մի անձանօթ ամենեցունց, անոք, անուրեք, յարևելից կողմանէ ելեալ, ընդ Ապահունեաց և ընդ Հարքայ զաւառն անցեալ, ՚ի Մանանաղի իջեալ և յեկեղեց անդառնալի գնացիւք, զայսոսիկ ՚ի բերան առեալ ասէր անդադար ՚ի տուէ և ՚ի զիշերի. Եղուկ զիս, եղուկ զիս, բարձր բարբառով, և այլ աւելի չասէր ինչ: Եւ եթէ ոք հարցանէր թէ Ուստի կամ յորմէ զաւառէ ես, կամ վասն էր ասեսն զայդ, չտայր ինչ պատասխանի. այլ հանապազ զնոյն ասէր և յասելոյն ոչ դադարէր: Զոր տեսեալ անմիտ մարդիկ՝ իմացան անկեալ

'ի մտացն. բայց իմաստունքն ասէին. Այդ եղուկդ ամենայն երկրի լինելոց է: Արդ այս աստանօր զկայ առցէ բանս. այլ մեք 'ի կարդ պատմութեանս դարձուք յառաջ ասացեալ թագաւորս:

Սա զքեռորդին իւր կեսար անուանէ. և կեցեալ 'ի թագաւորութեան ամս եօթն և ամիսս ութ, հիւանդացեալ զքուն մահու ջերանի: Իսկ թագուհոյն զկեսարն՝ իւր յորդեզիր արարեալ, թագաւորեցուցանէ 'ի տեղի առն իւրոյ. այլ նա փոխանակ շնորհ առնելոյ նմա վասն բարեացն՝ զոր արար նմա թագուհին, խորհեցաւ ազգականօք իւրովք 'ի հեռաբնակ կղզիս յաքսորս առաքել զթագուհին, որպէս զի սեփհական իւրեանց լիցի իշխանութիւնն, զոր և արարին իսկ: Իսկ քոյր թագուհոյն՝ որում անուն ճանաչիւր թէոթուրա, կոչէ զգլխաւորս քաղաքին և ծանուցանէ նոցա զեղեալմն: Որք իբրև լուան, ձայն տուեալ արևմտուկան զօրուն՝ առ ինքեանս հաւաքեցին. և բռնութեամբ 'ի վերայ հասեալ, խնդրէին թէ ցնյց մեզ զմեր ծիրանեփառ թագուհին, որ 'ի հաւուց և 'ի հարց ունի զժառանգութիւն թագաւորութեանդ. քանզի բազմաց կարծիւր թէ մեռեալ իսկ է: Իսկ նա իբրև ետես զըռնութիւն և զմիաբանութիւն նոցա, յերկիւզի լեալ՝ փութապէս դարձուցանել հրամայեաց յաքսորանացն զթագուհին: Զոր իբրև ետես թէոթուրա զքոյրն իւր, իսկոյն հրաման տայ ունել զթագաւորն

իւրեանց ազգականօքն և որք նոցա մտերիմք էին: Իսկ թագաւորն փախստական եղեալ՝ կամէր յաւագ յեկեղեցին մտանել, և ընդ սեղանովն թագչել և այնու ապրիլ: Բայց ոչ կարաց ժամանել. քանզի հետամուտքն փութով հասեալ և կալեալ դարձուցին, և յանսուրբ տեղուջ յերկիր ընկեցեալ՝ խաւարեցուցին զլուսարանս նորա, և որ Դիմեսլիկոսն կոչիւր և զայլոց բազմաց. և հրամայէ զտունս նոցա յաւար, յաւեր և յապականութիւն դարձուցանել: Յորս շարժեալ քաղաքն առ հասարակ, բազում աւարառութիւնս արարին. և զմեծամեծ և զգեղեցիկ ապարանս մինչև 'ի հիմունս քակեալ՝ յապականութիւն դարձուցին: Եւ այնպէս<sup>1</sup> ծանրացաւ խոռվական ամբոխն յաւարառութիւնս խանձեալ, մինչ զի զպարիսպն պալատին խրամատեալ՝ բազում զանձս 'ի թագաւորական գանձուցն արտաքս պեղեցին. զոր հազիւ կարացին դադարեցուցանել զամբոխն զլիսաւորքն քաղաքին, արեգակն օգնական լինելով նոցա՝ զծայրս արևուն առ ինքն ժողովելով:

Իսկ թագաւորն որ երեկ յոսկի աթոռ նըստեալ՝ հրաման տայր տիեզերաց, այսօր խաւարեալ 'ի լուսոյ՝ նստի յաթոռ նանրութեան և նախատանաց. և որ կարծէին ծովու և ցամաքի տիրել յաւիտենից, 'ի միում վայրկենի և զանձանց ևս կորուսին զփրկութիւն: Եւ եղեն ար-

<sup>1</sup> Երկու օր. այնքան:

գարե ըստ մարգարէին, որպէս խոտ տանեաց, որ  
մինչչե ՚ի բուռն եկեալ էր՝ չորացաւ. յորմէ ոչ  
լցաւ բուռն հնձողին և ոչ լցան գիրկք բարձողաց  
զորայն. նաև բարեբանութիւն անցաւորացն ոչ  
կաթեաց ՚ի լսելիս. Այսոքիկ են առօրեայ սլատ-  
մութիւնք կեսարուն, որ թագաւորեաց ամիսս  
վեց:

### ԳԼՈՒԽ Ժ.

ԹԱԳԱՀՈՐՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ՈՐԴԻՈՅ ԹԵՌԴՈՍԻ,  
ՈՐ ԿՈՉԻ ՄՈՆՈՄԱԽ:

Եւ սա ըստ մարգարէին տեսողութեան՝ ՚ի  
խեցի մասնէ. քանզի հայր սորա ՚ի պալատին՝<sup>1</sup>  
զգայիսոսութեան ունէր զղատիւ, յորմէ ամենայն  
դատաւորք աշխարհին առաքին: Ցետ անկատար  
թագաւորութեան կեսարու՝ մոնչեալ մատակ ա-  
ռիւծն՝ ՚ի վերայ ընկերին՝ ՚ի խշտիս իւր, քանզի  
ոչ սակաւ տարակոյսք զնա պաշարեալ պահէին,  
զի զոք յիւրայնոց չունէր արժանաւոր թագաւո-  
րութեան. և զոր առ յորդեգիրս, և արար տէր և  
թագաւոր աշխարհաց, նա փոխարէնս զայն հա-  
տոյց նմա, զոր խուն մի յառաջ նշանակեցաք:  
Եւ ապա զի՞նչ առնէ. ելանէ արտաքոյ կանոնա-  
կան կարգաց, և կոչէ զայրս զայս յառաջ և առ-

<sup>1</sup> Մի օր. զլայիսութեան:

նէ այր իւր. և նստուցանէ զնա յաթոռ թագա-  
ւորութեան: Զօր բազումք կարծեցին սեղեկ գոլ  
նմա, բայց ես ոչ գիտեմ, եթէ այսպէս է և եթէ  
այնպէս. որպէս ինքն յիւրում հրովարտակին  
զրեալ էր յերախտիս աշխարհի, եթէ վասն աշ-  
խարհի խաղաղութեան ոչ խնայեցի յիս, և վասն  
այսորիկ յանարժան գործ համարձակեցայ:

Ի սորա առաջին ամին ապստամբեաց որ-  
դին Մանեակ, որ ունէր զարկմտից կողմն, այր  
քաջ և անուանի, և զբազումս միաբանեաց ընդ  
իւր: Եւ եկեալ բազում զօրօք մինչև ՚ի դուռն  
թագաւորական քաղաքին, այնքան բռնացաւ ՚ի  
վերայ ըստ ուժոյ քաջութեան, մինչ զի բա-  
զումք ակամայ կամօք ետուն զանձինս նմա ՚ի  
հնազանդութիւն. քանզի կարծեցին զնա գոլ թա-  
գաւոր վասն բազում պատեհութեանցն որ ելա-  
նէին նմա: Քանզի երկիցս և երիցս ելին զօրք  
թագաւորին և ճակատեցան ընդ նմա և պար-  
տեալ՝ ՚ի նմանէ, դարձան առ թագաւորն մե-  
ծաւ անարգանօք: Իսկ ՚ի գալ վերջին պատե-  
րազմին, յորում ուշ եղեալ էր ամենեցուն, զի  
զինի այնը յաղթութեանցն՝ ամէնն նմա հնա-  
զանդեցին և արացեն զնա թագաւոր. բայց  
քանզի չխորհեցաւ Աստուծով թագաւորել, այլ  
՚ի զօրութիւն ուժոյն իւրոյ ապաստան եղե, զԱ-  
բիսողոմայն ՚ի հեռուստ ախտացեալ, արթեալ

<sup>1</sup> Երկու օր. պարտաւորեալ:

ամբարտաւանութեամբ, վասն որոյ զնորայն հաստոց գդատաստան, ի մէջ ճակատուն գտին զնա անկեալ, հզօր հրեշտակի աւանդեալ զողի նորա, առանց ուրուք նմա 'ի դիմի հարեալ: Զայս արարեալ և առնէ ամենիմաստապէս ամենեցուն տէրն և արարիչն, որ կարօդն է քաղել զողիս իշխանաց, ահաւոր գոլով քան զամենայն թագաւորս երկրի. զի մի պարծեսցի հզօրն 'ի զօրութիւն իւր, և մի մեծն 'ի մեծութիւն իւր, և կամ իմաստունն յիմաստութիւն իւր, որպէս 'ի գրոց լուաք. այլ տերամբ պարծեսցի որ պարծին և արասցէ իրաւունս և գործեսցէ զարդարութիւն 'ի վերայ երեսաց երկրի: Որ է արդարեւ յոյժ պարծանաց և գովութեանց արժանի, և յիշատակ նորա կայ մնայ յաւիտեան, և եղջիւր նորա բարձր եղիցի փառօք, որպէս 'ի սաղմոսարանի անդ գրեալ է: Այսպիսի էր և մեծն Դաւիթ. որ թէպէտ 'ի տեսանողէն օծաւ թագաւոր, և ընդ օծութեանն ընկալաւ ողի զօրութեան և մարգարէութեան, որ զգազանսն 'ի բուռն հարեալ իրը զուլս այծից ձեղքէր. յորս վստահացեալ, անպարտելի սկայազնին ընդդէմ ճակատեալ, զիսելապատակ նորա պարսաքարիւ ջարդեալ յերկիր ընկենոյր, բառնալով զնախատինս յիսրայելէ. բայց սակայն բազում անգամ հալածեալ 'ի Սաւուղայ, ներէր և անսայր կոչողին հրամանի. ոչ միայն չխնդրէր բռնութեամբ

տիրել թագաւորութեանն, այլև երկիցս 'ի ձեռն անկեալ հալածիչն, ինայեաց 'ի նա իրը 'ի բարեգործ. և որ սպանանելն կամէր, սաստեալ նմա ասէր. «Մի միսէր զձեռն քո 'ի դմա, զի օծեալ տեառն է»: Վասն որոյ համեալ Աստուած ընդ կամս նորա ասէր. «Գտի այր ըստ սրտի իմոյ, որ արացէ զհաճոյս իմ»: Իսկ սա ոչ ած այսպիսի զմտաւ ինչ, և ոչ անսաց Աստուծոյ հրամանին. այլ կամեցաւ անձամբ առանց Աստուծոյ հրամանին թագաւորել, մոռացեալ զաստուծային հրամանն՝ որ 'ի ձեռն մարգարէին զթագաւորսն իսրայէլի թշնամանելով ասէր. «Վայ է նոցա զի կամեցան թագաւորել և ոչ ինե», և որ այլն ևս:

Արդ՝ ոչ եթէ թագաւորս այս գովութեանց ինչ արժանի է, և վասն այսորիկ արգահատեաց 'ի նա Աստուած, այլ զաթոռն պատուէ, և զամբարտաւանութեան աղբիւրն խնու. որպէս առ Հեայսն Փրկիչն վարդապետելով ասէր. «Յաթոռն Մովսեսի նստան դպիրքն և փարիսեցիքն». որ թէպէտ ինքեանք կեղծաւորեալք էին, այլ վասն աթոռոյն՝ հրամայէ հնազանդ լինել: Ուստի և մեծն Պօղոս խրատեալ երանելի ձայնիւն այսուիկ գրէ առ Հոռմայեցիսն. «Ամենայն անձն, ասէ, որ ընդ իշխանութեամբ իցէ, 'ի հնադանդութեան կացցէ. զի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ»: չասէ զիշխանէն, այլ զիշ-

խամսութենէն, այսինքն դաթոռոյն. քանզի ոչ եթէ զամենայն իշխանս Աստուած յարուցանէ: Եւ 'ի վերայ էած, թէ «Որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ. և որք հակառակը կամ, անձանց դատաստանու ընդունին»: որպէս և սմա իսկ եղե: Զի ոչ թէ 'ի մարդկանէ ումեքէ դատեցաւ, այլ յիրաւացի Աստուծոյ դատաստանացն, որ զամենայն ինչ կշռով դատի և իրաւամբք. զի ակն է նա արթուն, և ծածուկք մեր յայտնի են առաջի ամենատես գիտութեան նորա: Որպէս երանելին Դաւիթ սաղմոսելով խոստավան լինի Աստուծոյ. «Դու ծանեար զյետին իմ և զառաջին իմ»: Ամին նման և առաքեալն զըէ առ Երրայեցիսն, եթէ «Զիք ինչ արարած աներեսոյթ յերեսաց նորա»: Զոր և մանկունքն 'ի հնոցին<sup>1</sup> գովելով ասէին. «Որ նստիս 'ի քերովքէս և հայիս յանդունդս, գովեալ ես և առաւել բարձրացեալ յաւիտեան»: զի 'ի բարձրութենէ տեղեացն՝ զստոյգ գիտութիւնն յայտ արարին ըստ սաղմոսի երգոյն, թէ «Տէր յերկնից յերկիր հայեցաւ»: Այս կերպ և բարձրն եսայիս. «Աչք տեառն բարձունք են, և մարդ տառապեալ. և խոնարհեսցի բարձրութիւն ամբարտաւանից, և բարձրասցի տէր միայն իրաւամբք և արդարութեամբք, և սուրբն փառաւորեսցի»: Այսօքիկ եղեն 'ի սկզբան թագա-  
1 Մի օր. զոլելով:

ւորութեան կոստանդեայ, յորում էր թուականիս մերոյ ամք չորեքհարիւր իննուուն: Ճ իսկ զինի երից ամաց եհաս կատարած կենաց տանս Հայոց. քանզի 'ի միում ամի զրաւեալ յաստեացս՝ բարձան 'ի կենաց երկոքին հարազատ եղբարքն Աշոտ և Յովհաննէս, որ ունէին զթագաւորութիւն մերոյ աշխարհիս: Յորում շարժեցաւ աթոռ հաստատութեան նոցա, և այլ ոչ էառ զկայումն. յորում ելին իշխանքն 'ի հայրենի ժառանգութենէ իւրեանց, և եղեն պանդուխտ յօտար երկիր. յորում աւերեցան գաւառք և գնացին յաւար տանն Յունաց: Եղեն շինանիստ աւանք՝ բնակութիւն գագանաց, և անդաստանք նոցա՝ յարօտ երկոց: Տունք ցանկալիք, բարձրաձեզունք և մեծամեծք՝ եղեն բնակութիւնք համբարուաց և ուշկապարկաց, զորովան սուրբ Մարգարէքն զամայանալն իսրայելի. «Անդ հան ողնի ձագս և սնոյց առանց երկիւղի զորդիս իւր»: Եղեն հանդիսաւոր տեղիք վանորէից՝ այրք աւազակաց. և եկեղեցիք որ 'ի նոսա՝ որ զերկնից բերէին զնմանութիւն վասն պայծառ շինուածոցն, և վասն գեղեցկաշուք զարդարանացն, և վասն անշէջ լապտերացն և ջանիցն վառման, որոց լուսոյն<sup>1</sup> առոգութիւն ընդ օդոյն տարածեալ՝ այսր անդը ճոճելով՝ զալեաց ծովութերէլ զնմանութիւն, որ 'ի հանդարտ ժամանակս

1 Մի օր. որոյ լուսոյն առոյգութիւնք.

՚ի քաղցրաշունչ օդոյն սղոխք ալեացն վէտս վէտս  
՚ի վերայ միմեանց շրջապատին, և անուշաբու-  
րակ խնկոցն գոլորշիք, որ ըստ առատութեան  
նուիրաբերացն հրոյն ներգործեալ, զգարնանա-  
բեր ժամանակին բաղիցն ցուցանեն զօրինակ, որ  
՚ի ծայրս լերանց նստեալ՝ արգելուն զճառագայթս  
արեգականն: Իսկ զբնակողացն ՚ի նոսա որ բան  
բաւական իցէ առ ՚ի պատմել զօրինակն. զքաղ-  
ցրաձայնութիւն երգոցն և զանդագար սաղմոս-  
երգութիւնն, զաստուածային գրոյն ընթերց-  
մունս, զտէրունական տօնիցն զհանդէս և զվկա-  
յիցն զպատիւս, և զմիախսորհ խորհողացն զկամս  
և զառ ՚ի յաստուածայինսն նկրտումն, և այն ևս:

Արդ այսպէս և այսքան էին յառաջ ժամա-  
նակաւ. այժմ է տեսանել յամենայնէ թափուր և  
արուգ, յամենայն բարեփառութենէ մերկ և կո-  
ղոպուտ զնոսա: Փոխանակ քաղցրաձայնութեան  
երգոցն՝ այժմ<sup>1</sup> բուէճք և<sup>2</sup> տաղեղունք դասւ-  
զլուխք են. և փոխանակ սաղմոսական նուա-  
գացն, տատրակ և աղաւնիք երգեն ՚ի նմա, ըստ  
մարգարէին՝ «Քաղցրաձայնութեամք կարդալ  
զճագս իւրեանց»: Զահքն շիջեալք, և բուրումն  
անուշահոտ խնկոցն սպառեալ. և սեղան սուրբ  
խորհրդոյն՝ որ երբեմն ժամանակաւ իրբէ<sup>3</sup> զնու-

1 Մի օր. բուրէճք:

2 Երկու օր. դատաղեղունք:

3 Այլք. զնոր հարսն:

բահարսն առագաստի չքնաղագեղ զարդու զար-  
դարեալ էր՝ պսակ փառաց ունելով ՚ի դէմս իւր,  
այժմ է տեսանել տեսութիւն ողորմելի և բա-  
զում արտասուաց արժանի, մերկացեալ ՚ի զար-  
դուց, լցեալ վշով, լեալ հանգըռուանք ագռաւուց:  
Ամենեքեան երկայնի<sup>1</sup> պիտոյ բանի պատմու-  
թեան, նաև վերին շնորհին օգնականութեան,  
որպէս զի կարիցեմք ՚ի<sup>2</sup> նպատակ՝ բանիս ուղ-  
ղել: Արդ ՚ի վերջէ<sup>3</sup> յառաջն տանելի է մեզ  
զպատմութիւնս:

Յորժամ մեծն կոստանդին հիւանդացաւ  
հիւանդութիւն՝ որով և մեռաւ իսկ, հրաման տայ  
որք մերձն կային եթէ ելեալ խնդրեցէք զայր  
ոք ՚ի Հայոց զնը և գտանիցէք, և անէք այսր:  
Եւ ելեալ խնդրակաց գտին զերէց ոմն կիւրակոս  
անուն, որ կաթողիկոսարանին հիւրատէն էր, և  
բերեալ առաջի թագաւորին,<sup>4</sup> ետ զնամակն որ  
վասն Հայոց աշխարհին ցնա, և ասէ. Տար զդիրդ  
և տնւը ՚ի թագաւորն Հայոց. և ասա, թէ որով-  
հետեւ հանգոյն ամենայն հողածնաց մահու հրա-  
ւերս և մեզ ժամանեաց, առ զգիր քո և տնւը  
զթագաւորութիւնդ որդւոյ քո, և որդի քո որ-

<sup>1</sup> Այլ օր. երկայնի պիտանի պատմութիւն. Միւսն,  
երկայնի պիտաքանի պատմութեան:

<sup>2</sup> Այլք. Վիպատակ կամ վեպատակ:

<sup>3</sup> Մի օր. յառաջնսն:

<sup>4</sup> Այլք. յաւելուն. եւ տեսեալ զնա թագաւորին:

դւոց իւրեանց մինչև յաւիտեան։ Եւ ինքն առեալ զոտս իւր՝ ի մահիմ վախճանեցաւ։ Իսկ նորա առեալ զնամակն պահեաց առ իւր մինչև ի ժամանակս Միխայէլի թագաւորութեանն, և վաճառեալ նմա՝ առ զանձ բազում։ Ո՞վ դառն վաճառոյն այնորիկ. քանի՛ արեանց զանձն պարտական կացոյց. քանի՛ եկեղեցիք ՚ի ձեռն վաճառոյն այնորիկ աւերեցան. քանի՛ գաւառք ահմարդ, ամայի դարձան. քանի՛ մեծանիստ աւանք մարդաթափ ՚ի բնակչաց եղեն։ Այլ զբովանդակն յիւրում սեղուջն ասասցուք. և մեք զկարդ պատմութեանս որպէս սկսաք՝ յառաջ վարեացուք։

Արդ՝ ՚ի հասանել համբաւոյ մահու թագաւորացն ՚ի լսելիս ինքնակալին Հոռոմոց, և գտեալ զգիր նամակին Հայոց, իրըև իւրեան սեփհական ժառանգութիւն՝ հոգ տարաւ առնուլ զքաղաքն Անի և զաշխարհն։ Իսկ մի ոմն ՚ի գլխաւոր ազատացն Հայոց Սարդիս անուն՝ եղ շուք անձինն թագաւորել ՚ի վերայ տանն Շիրակայ և որք շուրջ զնովաւ գաւառք. զի զամենայն գանձս գտեալ ՚ի տան թագաւորին Յովհաննիսի՝ յինքն ժողովեաց. վասն զի ՚ի մահուան նորա նա էր հոգաբարձու նմա։ Իսկ Վահրամ այր հզօր և անուանի, և բարեպաշտութեամբ յոյժ վեհ, որպէս թէ ոչ հաւասար նմա Պալհաւ<sup>1</sup> հանդերձ իւրովք ազգակցօք, որդւովք և եղբօրորդւովք իրըև  
<sup>1</sup> Երկու օր, ազգաւ պայշտու։

երեսուն<sup>1</sup> ազատք, ոչ միաբանեցան ընդ նմա, այլ կոչեալ առ ինքեանս զֆագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ՚ի վերայ իւրեանց, և իմաստութեամբ և հնարիւք մուծին ՚ի քաղաքն։

Իսկ Սարդիս իրըև ետես զեղեալսն, զգանձս թագաւորութեանն առեալ՝ ՚ի ներքին ամուրն մտանէ յանառն Անի։ Այլ Գագիկ այրական քաջարատութեամբ միայն իջեալ առ նա, և ողոքական բանիւք հաւանեցուցանէ զնա, և նա ելեալ յամբոցէն երթայ ՚ի բերդաքաղաքն որ կոչի Սուրմառի. այլ զամուրն ոչ տայ ՚ի Գագիկ, և ոչ զայլ ամուրմն զորս ընդ ձեռամբ ունէր. և երթեալ անդ՝ դարձեալ խորհի զխորհուրդ նանրութեան, տալ զոր ունէր՝ ընդ ձեռամբ Հոռոմոց, և ելանել առ նոսա։ Իսկ Գագիկ սակաւ արամբք երթեալ մտանէ ՚ի մէջ բանակին՝ ՚ի խորանն ուր էր Սարդիսն, և ձերբակալ արարեալ զնա, մտանէ ՚ի քաղաք թագաւորութեան իւրոյ։ Եւ զոր պարտ էր զապստամբն բառնալ ՚ի կենաց, նա զՍաւուղայն խորհեցաւ, զերկրորդ Ազադ ինայեալ՝ ընդ իւր ՚ի կառան նստուցանէր. վասն որոյ զՍաւուղայն ընկալաւ զհատուցումն, կեանք որ քան զմահ գառնագոյն է։

Յայսոսիկ<sup>2</sup> աւուրս հետամուտ եղեալ զօրքն Հոռոմոց, չորս անգամ զկնի միմեանց մտին յաշ-

<sup>1</sup> Մի օր. ազատօք։

<sup>2</sup> Մի օր. յետ այսորիկ յատրս։

Խարհն Հայոց, մինչև մարդաթափ արարին զերկիրն ամենայն սրով և հրով և զերութեամբ: Զորոյ գնշանակ չարեացն<sup>1</sup> յորժամ զմտաւ ածեմ<sup>2</sup> յիմարի անձն իմ և ափշին միտք իմ, և յահագին զարհուրանացն զլողի առեալ ձեռինս՝ զոճ տողիս ոչ կարեմ յառաջ խաղացուցանել. զի դան է պատմութիւնս, և բազում ողբոց արժանի:

Աշխարհ<sup>3</sup> որ երբեմն ժամանակաւ իբրև զդրախտ տնկախիտ առաջի իւր, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւորացն ցուցանիւր. քանզի իշխանք նստէին յիշխանական գահու զուարթահայեաց դիմօք, և զգարնանաբեր ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն՝ վու 'ի վառ գունովք առաջի կացեալք, ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք. ուր և ձայնք փողոցն և ծնծղայիցն և այլ երգեցողական արուեստիցն զլսողացն անձինս լինէին ուրախական բերկրանօք: Անդանօր և ծերք նստէին 'ի հրապարակս հարկեռոր և պատուական ալեօք բարգաւաճեալ. այլ և մարք զմանկունս 'ի գիրկս ընկալեալ, և մայրենի գըթովքն աղէխարշեալ, վասն առատ ուրախութեանցն մոռանային զտիրական ժամանակս երկանց, զօրէն աղաւնեաց զնորափետուր ձագօքն միշտ թոթոելով: Զի՞նչ ասացից և զհարսանցն 'ի

<sup>2</sup> Մի օր. յաւելու, մերոյ աշխարհին:

սենեկի, և զփեսայիցն յառագասափի զսիրահարուստ ըղձիցն զբորբոքումն և զանժոյժ բնութեանն զհակամիտութիւն: Այլ և 'ի վեր տանելի է մեզ բանս, առ հայրապետական աթոռն և առ թագաւորական պատիւն. զի մինն զօրէն ամպոյ խտացեալ 'ի պարգևացն հոգւոյն՝ 'ի ձեռն վարդապետական շնորհին, ցօղէր զցօղ կենացն. որով պարտրտացեալ սկաղարերէր եկեղեցւոյն զրախտ, արթուն պահապահն ՚ի վերայ պարսպաց նորա կարգելով զառ 'ի յինքենէ ձեռնազրեալն: Իսկ թագաւորն յառաւօտինսն յորժամ՝ 'ի քաղաքէն ելանէր, զօրէն փեսայի որ ելանէ յառագաստէ իւրմէ, կամ որպէս տունջենային արուսեակն որ 'ի զլսոյն արարածոց բարձրանալովն զամենայն տեսանելիս յինքն ձգէ, այսպէս և նա պաղպաջէր փաղփուն հանդերձիւք և մարգարտախուռն թագիւն, և զամենայն մարդ 'ի տեսութիւն և 'ի զարմանս ցուցանէր. որ և սպիտակամազ նժոյգ՝ ոսկեզօծ զարդիւք առաջի ընթանալով, 'ի ճառագայթից արեգականն որ զնովաւ հարկանէր՝ շլացուցանէր զտեսողացն տեսանելիս: Իսկ զօրացն բազմութիւն խուռն առաջի ընթանալով՝ զօրէն ծովային ալեացն<sup>1</sup> զմիմեամբ կուտակելով: Նաև<sup>2</sup> անտապատական վայրքն լցեալ և խճողեալ էին կլոնաւորական դասուք, մինչ

<sup>1</sup> Մի օր. զմիմեանս:

<sup>2</sup> Երկ. օր. անապատագոյն:

զի զգեօղս և զագարակս առ բարի նախանձ քահեալ՝ առնէին բնակութիւն կրօնաւորաց։ Զայս և որ սոցին նման է, առաւել ունէր աշխարհս մեր։ Եւ զայս զի զրեցի, զի յորժամ զսոցին հակառակն պատմեցից, ամենեցունց շարժեցից զարտասուսն։

Արդ այժմ թագաւորն անկեալ՝ ի պատուոյ, իբրև զգերի կալանաւոր նստի՝ ի հեռաբնակ տեղիս. այսպէս և հայրապետական աթոռն ամայացեալ՝ ի բնակողէն՝ ցուցանի տիսուր դիմօք իբրև զկին նորահարսն՝ մնացեալ յայրիութեան։ Հեծելազօրն անտէրունչ շրջեալ ոմն՝ ի Պարս և ոմն՝ ի Յոյնս, և ոմն՝ ի Վիրս։ Սեպուհ գունդն ազատաց ելեալ՝ ի հայրենեաց, անկեալ՝ ի ճոխութենէ, մոնչեն ուր և են իբրև զկորիւն առիւծուցն՝ ի Խշտիս իւրեանց։ Արքունական ապարանքն աւերակ և անմարդի։ Մարդաբնակ աշխարհն թափուր՝ ի բնակչացն։ Ոչ լսի ձայն ուրախութեան՝ ի կութս այգեաց, և ոչ բարեբանութիւն առ կոխօղս հնձանի։ Ոչ խաղան մանկունք առաջի ծնողացն, և ոչ նստին աթոռով ծերք՝ ի հրապարակս։ Ոչ լսի ձայն հարսանեաց, և ոչ զարդարին առագաստք հարսնարանին։ Պակասեաց այս ամենայն և կորեաւ և հչ ևս յաւելուցու յառնել ըստ<sup>2</sup> սաղմոսողին ձայնին։

1 Մի օր. հարսանց, յայլում, հարսանեաց։

2 Մի օր. Սողոմոնին, յայլում, սաղմոսին։

Այժմ յողբս փոխեցաւ մեզ ամենայն, և ուրախութեան պատմուճանն այն յարջնազգեստ խորդ փոխեցաւ։ Ո՞ր լսելիք տանիցին զթշուառութեանս մերոյ զպատմութիւն։ Ո՞ր սիրտ քարեղէն, որ ոչ լքանի հառաչմամբ և բեկանի հեծեծալով։ Փամ է ինձ յերեմիայի ողբոցն խառնել ընդմեր հառաչանս։ «Ճանապարհք սիովնի, ասէ, ուրդան, զի ոչ ոք է որ մտանէ»։ Այսոքիկ ասացան յայնժամ յաւերն երուսաղէմի, բայց կատարեցաւ այժմ։

~~Արդ~~ այս ամենայն՝ ի վաճառէն յայնմ հանդիպեցաւ Հայոց՝ զոր յառաջ սակաւ մի յիշեցաք. այս վաճառ անմարդագոյն գոլ թուի ինձ քան զՅուդային. քանզի անդ թէպէտ վաճառողն ընդպարսաւանօք, այլ վաճառն եղի զինք փրկութեան ամենայն աշխարհի։ Որպէս մեծն Պետրոս յընդհանրական թուղթսն զրէ. «Ոչ ասէ ոսկեղինօք և արծաթեղինօք զնեալ ազատեցայք՝ ի ձեր<sup>1</sup> հայրենատուր սնոտի պաշտամանցն, այլ արեամբ որդւոյն Աստուծոյ։» Իսկ աստ վաճառողն յոյժ ապառումն և տմարդի, զի այսքան չարեաց զանձն պարտական կացոյց. զի այսզի զոր տնկեաց տէր, և մշակեաց Լուսաւորիչն մեր իւրով հնգետասանմեայ քրտնալիք աշխատութեամբն, նա քակեաց զցանկ նորա և կործանեաց զաշտարակս նորա, և արար զնա կոխան անցաւորաց. մինչև

1 Մի օր. հայրենական։

ապականեաց զնա խող անտառի, և կինճ վայրի ճարակեցաւ 'ի նմա, ըստ դաւթական<sup>1</sup> երգոցն: Արդ այսոցիկ ամենեցուն լուր առ տէր հասցէ, և իրաւունք նմա 'ի տեառնէ եղիցի. և մեք 'ի մէրն դարձուցուք զո՞ն բանիս:

Արդ 'ի չորսհարիւր յիննսուն և չորս թուականին առաւ Անի, ոչ պատերազմի օրինիւ, այլ պատիր բանիւ. քանզի երդմամբ և խաչիւ հաւանեցուցին դֆազիկ՝ հրամանաւ թագաւորին, թէ Միայն 'ի տեսանելն զքեզ, դարձուցից 'ի քեզ զթագաւորութիւնդ քո, և գրեցից զքեզ ժառանգ յաւիտենից աշխարհիդ և քաղաքիդ քոյ. քանզի իմաստունն երդնու և անմիտն հաւատայ, որպէս<sup>2</sup> իմաստնոցն բերին բանք. և դարձեալ, թէ «Բանք ստոց պարարտ են իբրև զլոր, և անմիտք կլանեն զնա. հաւատայ վասն երդմանցն և խաչին, եթէ վասն խաղաղութեան մտացն եթէ վասն երկիւղածութեան վարուցն<sup>3</sup> ոչ զիտեմ. տուեալ զբանալի քաղաքին 'ի Պետրոս, որ յայնժամ ունէր զաթոռ հայրապետութեան Լուսաւորչին մերոյ, և յանձնեաց 'ի նա զամենայն հոգս աշխարհին մեծաւ դաշամբ և ուխտիւ: Եւ ոչ եկաց 'ի պատուէր Վահրամայ և այլ ազտացն որ թագաւորեցուցին զնա, այլ նենդաւո-

1 Երեք օր. ողբոցն:

2 Մի օր. իմաստնոյն բերին բանք:

3 Յերկ. օր պակասի ոչ զիտեմ:

ըին Սարգսի սաղբելոյն լուեալ՝ ել 'ի քաղաքէն, և չոգաւ 'ի Յոյնս զանդարձ ուղերութիւն. իբրև զձուկն 'ի կարթէ ըմբռնեալ կամ իբրև զհաւ 'ի ծուղակաց: Զոր տեսեալ թագաւորին՝ ոչ յիշեաց զերդմունան, և ոչ զխաչին զմիջնորդութիւնն. այլ առ իւր արգել, և խնդրէր թէ Տնւր զԱնի, և ես տաց քեզ փոխանակաւ զՄելիտինէ և զգաւառսն որ շուրջ զնովաւ: Այլ նա ոչ առնույանձն:

Եւ յերկարիլ խնդրոյս այսորիկ, Գրիգոր որպի քաջին Վասակայ, ելեալ և նա զնաց առաջի թագաւորին. քանզի այր իմաստուն էր և խելամուտ յոյժ աստուածային զրոց, որպէս թէ ոչ այլ ոք: Իբրև ետես եթէ ոչ են թողոց զՓազիկ՝ 'ի տեղի իւր, յառաջ կացեալ տայ զբանավին Բնոյ ցթագաւորն, և զամենայն զիւր զհայրէնի ժառանգութիւնն. և մեծարեալ 'ի նմանէ՝ առնու զպատիւ մագիստրոսութեան, և զտեղիս բնակութեան 'ի սահմանս միջագետաց գեօդս և քաղաքս, զըով և ոսկի մատանեաւ յազգէ յազգ մինչև յաւիտեան:

Իսկ քաղաքացի զլսաւորքն որ նստէին յԱնի, իբրև տեսին թէ արգելաւ Գագիկ 'ի Յոյնս, խորհեցան երբեմն 'ի Դաւիթ տալ զքաղաքն<sup>1</sup> 'ի Դունացին, քանզի քոյրն Դաւթի կին էր նորա. երբեմն 'ի Բագարատ թագաւորն Ափիազաց: Իբրև

1 Երկ. օր. երբեմն 'ի դունացին:

ետես հայրապետն Պետրոս զայնպիսի խորհուրդս, թէ ում և ից՝ 'ի գնալ է քաղաքս, առաքէ առ այն որ ունէր զիշխանութիւն արևելից կողմանն, որ նստէր 'ի քաղաքին Սամուսատ, զոր ասեն 'ի հիսան շինեալ Սամփոնի և գրէ, թէ Ծանս թագաւորին թէ մեղ զի՞նչ հատուցանէ փոխարէնս, և ես տաց զքաղաքս և զայլ ամուրս որ յաշխարհիս են: Իսկ նա իբրև լուսւ փութապէս ծանոյց թագաւորին. և լուեալ թագաւորին, գանձիւք և իշխանութեամբ հաճեալ զկամս նորա, և այնու տիրեցին Անւոյ և ամենայն աշխարհին:

Իսկ Գագիկ աներախտի մնաց առ թագաւորն, յորում առ մարդասիրութեան տուեալ նմա տեղիս, զոր ինքն կամեցաւ, որ յոյժ պակաս էր ըստ արժէիցն Անւոյ և այլ աշխարհին, զշնորհակալիսն և զտրից տուրսն կաթուղիկոսին հատուցին, յորմէ զքաղաքն առին: Եւ Գագիկ հրամանաւ թագաւորին առնու իւր կին զդուստը Դաւթի որդոյ Սենեքերիմայ, և տիրէ նորին բաժնին. քանզի Դաւիթ վաղճանեցաւ չունելով այլ զաւակ ժառանգաւոր:

Իսկ իշխան ոմն Ասիտ անուն, որ յառաջ կալեալ էր զտէրութիւնն արևելից, և գնա առաքէ թագաւորն տեղակալ քաղաքին Անւոյ: Որոյ եկեալ՝ անչափ պատուով մեծարէ զհայրապետն Պետրոս, և նուաճէ զաշխարհն ընդ ձեռամբ. և ինքն բազում զօրօք խաղայ 'ի վերայ քաղաքին

Դունայ: Իսկ Ապուսուար տէր քաղաքին պատերազմ տուեալ ընդ նմա, անչափ կոտորածս առնէ 'ի գուռն քաղաքին, յորում տեղողջ մեռաւ մեծ իշխանն Հայոց Վահրամ հանդերձ որդւովն, որ մեծ սուզ հասոյց Հայոց: Եւ կեցեալ Ասիտն 'ի տէրութեանն Հայոց, փոխանակէ զիշխանութիւն նորա Կամենասս ոմն, 'ի չորս հարիւր իննըսուն և երեք թուականիս մերոյ. և եկեալ՝ ոչ ըստ առաջին պատոյն մեծարէ զհայրապետն: Եւ սկսանի գրով ամբաստան լինել զնմանէ առ թագաւորն, և խաբանօք հանէ զնա 'ի քաղաքէն ասելով. Եթէ հրամայեալ է քեզ թագաւորն տեղի բնակութեան 'ի կարին գաւառին յԱրծին աւանի: Եւ եկեալ հայրապետին գայ 'ի մեծանիստ և 'ի շահաստան քաղաքս մեր, և մեծաւուրախութեամբ լցոյց զանձինս տեսողացն, որ ցանկային նմա: Եւ էր ժամանակն մերձեալ 'ի տօն սրբոյ Աստուածայայտնութեանն. Իսկ 'ի գալ մեծի տօնին իջեալ<sup>1</sup> այնչափ բազմութեամբ և յորդախաղաց ջուրն՝ որ իջանէ 'ի լերանցն որ 'ի հիւսիսակողման դաշտին են. և կատարեալ զիսրհրդածութիւն աւուրն փառաւորապէս, որպէս և վայել էր. Իսկ 'ի ժամ հեղոյ զտէրունական իւղն 'ի ջուրն, այլ մի<sup>2</sup> տաճիկ յառաջ

<sup>1</sup> Այլ օր. եղեալ այնչափ բազմովթիւն... հիւսիսակողմն:

<sup>2</sup> Մի օր. այր մի այլազգի տաճիկ:

եկեալ՝ի բազմութենէն՝ ինդրէ մկրտիլ՝ի ջուրն։  
իսկ նորա հարցեալ զպատճառն վասն որոյ զայն  
խնդրէր, և տեղեկացեալ՝ի նմանէ ցանկալ նմա  
լինել քրիստոնեայ. և հրամայէ նմա իջանել՝ի  
ջուրն։ իսկ մեռնակիրն մերձ կալով նմա, ա-  
ռեալ զշին՝ի ձեռն և հարեալ<sup>1</sup> զձեռամլն, երեկ  
զշին՝ առատապէս հեղլով զիւղն՝ի վերայ նո-  
րակնքին և ջրոյն. և յապակւոյն բեկոր ինչ հա-  
րեալ կարեվէր խոցեաց զձեռն նորա, յորդու-  
թիւն արեան յերկիր հեղլով. զոր տեսեալ բազ-  
մաց ընդ խորանօք արկեալ զեղեալմն, ասելով՝  
թէ Զէ բարւոյ ինչ նշան. որ և՝ի նոյն աւուր  
կատարեցաւ իսկ՝ Քանզի մինչդեռ ճաշաժամուն  
՝ի սեղանն էին, հասին կալանաւորք և առին զնա,  
տարան եղին՝ի բերդն՝ որ կոչի Խաղոտյ Առիճ:  
Եւ ապա ածեալ՝ի Հայոց զքեւորդի նորին զիւա-  
չիկ անուն, և եղեալ՝ի բերդին որ կոչի Սեւա-  
քար. և մնացին անդ մինչև մերձ՝ի զատիկն։ Եւ  
ապա հանեալ զնոսա անտի, տարան՝ի կոստան-  
դնուպօլիս առաջի թագաւորին. քանզի և զԱնա-  
նիս զերէց եղբայրն Խաչկայ յառաջ տարաւ ընդ  
իւր ներքինի ոմն, որ ունէր զպատիւ կէս թա-  
գաւորութեան։

1 Այլք ձեռամըն.

### ԳԼՈՒԽ ԺԱ.

ՅԱՂԱԳՍ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՈՐ ԵՂԵՆ Ի ԳԱՒԱՐՆ ԲԱՍԵ-  
ՆԱՅ ԵՒ Ի ԼԵԱՌՆ ՈՐ ԿՈԶԻ ՍՄԲԱՏԱՅ:

Հ

Ի սոյն ամս բացաւ գուռն բարկութեան  
յերկնից՝ի վերայ աշխարհիս մերոյ. և շարժեալ  
զօրք բազումք՝ի թուրքաստանէ, որոց երկվարք  
արագունք իբրև զարծուիս, և սմբակք նոցա իբ-  
րև զվէմս հաստատունք. աղեղունք լարեալք, և  
սլաքեալ նետք նոցա, գօտևորեալք քաջապէս, և  
անլուծանելի ունելով զիւրացս կօշկաց։ Եւ ելեալ  
՝ի գաւառն Վասպուրականի, յարձակեցան՝ի վե-  
րայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս անյա-  
զեալս՝ի կերակրոյ. և եկեալ մինչև՝ի գաւառն  
Բասեան, և մինչև՝ի զաստակերտն մեծ՝ որ կոչի  
Վաղարշաւան, քանդեալ ապականեցին գաւառս  
քսան և չորս սրով և հրով և գերութեամբ։ Ողոր-  
մագին և բազում ողբոց և արտասուաց արժանի  
է պատմութիւնս։ Ողբ իբրև զառիւծս ընթացան,  
և իբրև կորիւն առիւծուց անողորմարար արկին  
զդիակունս բազմաց գէշ զազանաց և թունոց  
երկնից. և կամէին այսու ձեռնարկութեամբ զալ  
ի քաղաքն կարնոյ։ Բայց որ ծովու եղ սահման՝  
ասելով «Ճայդվայր եկեսցես, և այլ մի ևս յաւե-  
լուցուս, այլ անդրէն՝ի քեզ խորտակեսցին ալիք

քոյցնա արկ զիսաւար թանձրամած աւայլի նոցա,  
և արգել զնոսա յընթացից իւրեանց: Զայս առնէ  
ըստ իւրոյ անճառ իմաստութեանն, որպէս զի  
ահիւ նոցա մեք խրատիցիմք, և նոքա ուսանիւ-  
ցին թէ ոչ իւրեանց զօրութեամք ինչ արարին  
զոր արարին. այլ ձեռն որ արգել զնոսա հզօ-  
րապէս, նոյն արար ճանապարհ զնալոյ նոցա:  
Ըսրդ հեղ զբարկութիւնն իւր ՚ի վերայ մեր  
՚ի ձեռն ազգի օտարի, վասն զի մեղաք նմա, և  
դարձեալ զղջացաւ ՚ի չարեաց<sup>1</sup> իւրոց ածել ՚ի  
վերայ մեր, զի ողորմած է. վասն որոյ ոչ ՚ի  
սպառ բարկանայ և ոչ յաւիտեան պահէ ոխս:  
Միովն ՚ի մէնջ բռնադատի՝ զիրաւացի դատաս-  
տան ՚ի մէջ բերելով, զի վասաւոր արդար է. և  
միւսովն կանխէ յողորմութիւն, վասն զի հայր  
գթութեանց է. և միւսովն զղջանայ ՚ի վերայ  
չարեաց մերոց, քանզի Աստուած ողորմութեանց  
է: Որպէս և աստատին խակ զերկուեանն եցոյց  
առ մեզ. ըստ արժանահաս վրիժուցն ծանրա-  
ցոյց զձեռն իւր ՚ի վերայ մերէ և դարձաւ փու-  
թապէս անցոյց զբարկութիւն իւր, զի մի ՚ի  
սպառ սատակեացէ զմեզ: Այլ մեք զՓարաւոնի  
ախտացաք զծանրասրտութիւն, և զյոյժ յիմարին  
յիւրոց<sup>2</sup> ախտակցաց, որ երբեմն տանջեալ՝ խոս-  
տովան լինի ասելով. «Մատն Աստուծոյ է այս».

1 Մի օր. մերոց:

2 Այլ օր. ախտակցաց, և այլ ախտատրաց:

և յանցանել բարկութեան պատուհասին՝ արբեալ  
ամբարտաւանութեամք ասէ. «Ո՞չ զիտեմ զտէր,  
և զիսրայէլ ոչ արձակեմ»: Մինչեւ ուղերձեաց  
յինքն զվերշին պատուհասն<sup>3</sup> բնակից լինելով  
անդնդային խորոյն: Բայց բարւոք ասէր վատա-  
շուէրն, թէ մատն Աստուծոյ է այս. զի ձեռն  
տասն մատամբք ունի առ գործն զկատարելու-  
թիւն. որպէս և անդ զմիոջէ սկսեալ՝ ՚ի տասն  
տւարտեաց հարուածոց զիրատ, և ապա արձա-  
կեաց զիսրայէլ: )

Արդ ՚ի հասանել բարկութեանն և ՚ի բորբո-  
քել հրատին և ՚ի շարժել եղեսնաւոր չարեացն,  
ահիւ ահաբեկ եղեալ՝ յոյժ զգողի հարեալ զար-  
հուրեցաք. բայց ողորմեցաւ Աստուած, և խա-  
ւարաւ փակեաց զճանապարհս նոցա, և խափա-  
նեաց զընթացս արշաւանայ անօրինացն: (Կար-  
ծական եղեւ մեզ բարին, և չմարդոյ գտաք առ  
շնորհակալիսն. զի զոր պարտ էր ՚ի ձեռն խրա-  
տու եղբարց մերոց ողջախոհանալ մեզ, և փու-  
թալ կանխել առ մարգարէն, և ուսանիլ ՚ի նմանէ  
զկեցուցանողն խրատն, «Դադարեցէք, ասէ, ՚ի  
չարեաց ձերոց, և ուսարուք զբարիս գործել», և  
որ զնետ սոցին գան բանիք. և յանձանց ուղղու-  
թենէ հաշտեցուցանել զԱստուած, և շիջուցանել  
զգեհենաբորբոք պատուհասն, և զբարձրացեալ  
ձեռն խոնարհեցուցանել ՚ի բարկութենէ ՚ի նե-

3 Մի օր. բնակալից:

բուժն. նա 'ի մոռացօնս եղե մեզ այս, և ոչ ծագեաց անգամ 'ի սիրտ մեր գիտութիւն նորա. այլ որ անօրինելոցն էր, անօրինէր, և որ անիրաւելոցն էր, անիրաւէր. մինչև ըստ օրինակի վարագացն՝ 'ի վերայ սրոյն մղեցաք զանձինս, զբովանդակն 'ի մեզ բերելով: Թուեր մեզ թէ նոքա մեղաւոր գոլով՝ կրեցին զպատուհան, և մեք ըստ արգարութեան մերոյ ապրեցաք. և ոչ դոյը 'ի լիշտատակ մեզ տէրունական պատուէրն և իմաստնացուցիչ խրատն. «Գալիքացիքն, ասէ, զորոց արիւնան Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա, համարիք թէ նոքա մեղաւորք էին քան զամենայն մարդիկ, ոչ. այլ թէ ոչ ապաշխարիցէք, նոյնպէս ամենեքեան կորնչիցիք»: Խսկ մեք ըստ ամովսական բանիցն, որովք նախատէր զիսրայէլ, որք զպարզեալ գինին ըմպէին, և անոյշ իւղովք փափկանային, և 'ի գահոյս փղսսկրեայս հանգչէին, և որ այն ևս, և ոչ ցաւէր նոցա վասն բեկմանն Յովսեփու: Քանզի խնդրէ Աստուած՝ զի յորժամ զոմանս տանջանաց մատնիցէ, մերձաւորքն ընդ նոսա վշտակից լինիցին. ըստ այնմ, «Լալ ընդ լացօղմն»: Այլ նոքա զնորին հակառակ առնէին. 'ի միոջէ յարենէ էին, և ընդ գերութիւն ցեղի Յովսեփու չցաւէր նոցա. վասն այսորիկ յերգ արկեալ մարգարէն՝ ամբաստան լինէր զնոցանէ: Այսպէս և 'ի մերումս հանդիպեցաւ:

Քանզի յամի չորեքհարիւրերորդի իննաներորդի եօթներորդի թուականիս մերոյ՝ որ էր երկրորդ ամ գերութեանն մերոյ, շարժեալ միւսանգամ մրուր դառնութեան լի բարկութեամբ 'ի տանէն Պարսից՝ ահագին ծփանօք, և եկեալ հեղաւ յընդարձակ դաշտն Բասենոյ և Կարնոյ. և ցայտուկս հեղեղատին կալաւ զչորս անկիւնս երկրին. յարևմուտս՝ մինչեւ 'ի Խաղաքաց գաւառն. իսկ 'ի հիւսիսի՝ մինչեւ 'ի Սպեր և մինչեւ յամուրս Տայոց և Արշարունեաց. իսկ 'ի հարաւ մինչեւ 'ի Տարօն և մինչեւ 'ի գաւառսն Հաշտենից մինչեւ յանտառն Խորձենոյ: Եւ<sup>1</sup> զետղ առեալ դադարեաց աւուրս չորեքտասան, և ծովացեալ ծածկեաց զլերինս և զմացառ վայրս, և կալաւ բնաւ զաշխարհս. որ ինձ թուի յանապակ գինւոյն յայնմանէ գոլ նմա, զոր մանուկն Երեմիս 'ի տեսաղութեան իւրում ոսկի բաժակաւ մատուակեալ արբոյց թագաւորաց, ազգաց, քաղաքաց, իշխանաց և զօրաց նոցա. և յետոյ արբոյց տանն Սիսակայ. ահա յայտնի կատարումն մարդարէութեանս դիպումն: Քանզի արք տունս Հայոց յանապակէն յայնմանէ և արբեցաւ յարբումն չար. արք և թմրեալ յիմարեցաւ. արք մինչեւ գրովանդակն յինքն ընկալաւ. և այժմ անկեալ կայ 'ի կիցս ամենայն ճանապարհացն մերկ և խայտառակեալ, և կոխեն զնա նախատանօք անպեցաւ:

<sup>1</sup> Մի օր. զտեղի:

ցաւորք ճանապարհաց: Ելեալ՝ ի տանէ, օտարացեալ՝ ի ծանօթից, հեռացեալ յընտահեաց և՝ ի բարեկամաց և յազգականաց, գերի և կալանաւոր ամենայն ազգաց:

Ժամ է ինձ զմարգարէականն զայն բարբառել բանս, եթէ «Զմանացորդս թըթըոյն եկեր մարախն, և զմանացորդս մորեխին եկեր ջորեակն, և զմանացորդս ջորեկին եկեր զրուիճն»: Իմ են և այսոքիկ, քանզի՝ ի մեզ կատարեցան ամենայն կանխասացիկ բանք մարգարէիցն. արդ թըթուրն և մորեխն այն անցեալ են. իսկ ջորեակն և զրուիճն սոքս են՝ վասն որոյ ճառս մեր արկեալ է: Քանզի յառաջին պնզամոյն՝ յորժամ ելին Պարսիկը և այլ խուժաղուժ ազգք հեթանոսաց, և մարդակոտոր սատակմամբ ապականեցին զգաւառս բազումս, և առ և գերի բազում առեալ իջին յաշխարհն իւրեանց, աւետաւորք եղեն ազգաց և թագաւորութեանց. և հրաւէր տուեալ նոցա՝ ասեն ըստ մարդարէին, թէ «Գազանք անապատի եկայք կերէք զայս որ յանտառիս է»: Եւ՝ ի գալ միւսում ամին ժողովեցան իւրեւ արծուիք՝ ի վերայ կերակրոյ անհամար բազմութիւնք զօրաց աղեղնաւորաց և<sup>1</sup> սուսերամարտից. և մեծաւ խրախուսանօք ճեպ՝ ի ճեպոյ ելին յաշխարհս մեր յամսեանն սեպեմբերի, ի տօնի սրբոյ Խաչին յաւուր չորեքշաբաթու:

1 Մի օր. սուսերամբերից:

Աստանօր մեզ պատմութիւնս ողբոց և աշխարանաց է. և<sup>1</sup> զամենեսեան հանդէսք պատմութեանս ՚ի կոծ հրաւիրէ: Զի թէ նինուէացիքն ՚ի վերայ սպառնալեաց մարդարէին, և այն զի մի անձն եմուտ ՚ի քաղաքն, օտարաշխարհիկ և անծանօթ յամենեցունց և առանց նշանաց, այնքան ահիւ ահաբեկ եղեալ՝ մինչ զի ՚ի թագաւորէն սկսեալ մինչև յայն որ՝ յազօրինն նըստէր, միաւոր եղեւ ամենեցուն կոծ, ամենեքեան խորդազգացք, ամենեքեան արջնազգեստք, ամենեքեան հատեալք ՚ի կերակրոց, և զբնութիւնն բոնադատէին առատանալ ողբովք, նաև զեղերամայր կանայս ձայնակից ինքեանց կոչէին. «Թերեւս, ասէ, զղջասցի Աստուած, և դարձցի սըրտմտութիւն նորա ՚ի մէնջ: Մերս քանիօն առաւել ողբոց արժանի է, որ ոչ սպառնալիք միայն, այլ պատուհաս բարկութեան հասեալ և՝ ի գլուխ եղեալ, և մեք չարագանեալք և կործանեալք և տեսարան աշխարհի եղեալ. զոր Առաքեալն ՚ի վերայ սըրոցն առնու զբանս, և չար պատմութիւն թողեալ զինի մեր ազգաց յազգս: Քանզի քաղաքք մեր աւերեալք և տունք այրեցեալք, ապարանք հնոցացեալք, և արքունաշէն սրահք<sup>2</sup> ածիւնացեալք: Արք ՚ի հրապարակս կոտորեալք, և

<sup>1</sup> Այլ օր. զամենայն հանդիսատեսք. միւսն, զամենեան հանդիսատեսք պատմութիւնս:

<sup>2</sup> Մի օր. անճոռնացեալ:

կանայք՝ ՚ի տանց գերի եղեալք, և կաթասուն տղայք զգարի հարեալք, և գեղեցիկ դէմք պատաշնեկաց թառամեալք: Կոյսք՝ ՚ի հրապարակն՝ ՚ի խայտառականս անկեալք, և երիտասարդք առաջի ծնրոց սրախողխող եղեալք. պատուական ալիք ծերոց ընդ արիւն և ընդ ապաժոյժ եկեալք, և դիակունք նոցա թաւալգլոր խաղացեալք: Սուրք թշնամեացն շացեալք, և ձեռք նոցա ՚ի զօրութենէ պակասեալք. աղեղանց նոցա լարք հատեալք, և նետք ՚ի կապարձից նոցա սպառեալք. անձինք նոցա ձանձրացեալք, և սիրտք նոցա յուղորմութիւն ոչ եկեալք:

Ո՞վ ողորմութեան քո Աստուած, որ այնքան ներեցեր անօրինացն խրոխտալ ՚ի վերայ խաշին արօտի քո: Յիշեա զժողովուրդ քո զոր ստացար ՚ի սկզբանէ զալստեան միածնի քո, և փրկեցեր արեամբ օծելոյդ: Ընդէր մերժեցեր Աստուած ՚ի սպառ, բարկացար սրտմութեամբ քո և մատնեցեր զմեղ ՚ի ձեռս արանց անօրինաց, խստաց և ապստամբաց: Մի յիշեր զմեղս մեր, և մի վասն մեղաց մերոց դարձուցաներ գերեսս քո ՚ի մէնչ. այլ յիշեա զձեռն քո հզօր և զբազուկ քո բարձր, որով տիրէիր մեղ, և անուն քո կոչեցեալ էր ՚ի վերայ մեր: Եւ արդ ահա դու բարկացար, և մեք մեղաք. վասն այնորիկ մոլորեցաք գերութեամբ ՚ի բազում ազգս, և եղաք իբրև զպիզծս ամենեքեան: Հողմք մերժեցին

զմեզ, և ոչ ոք իցէ որ կարդայցէ զանուն քո, և որ յիշեսցէ ապաստան առնել զքեզ. զի դարձուցեր զերեսս քո ՚ի մէնչ և մատնեցեր զմեզ վասն մեղաց մերոց: Մի յաւիտեան բարկանար մեզ, և ՚ի ժամանակի մի յիշեր զմեղս մեր:

Շ Ո՞հ և աւաղ աւուրն այնորիկ լուսանալոյ. զի լոյսն որ յաւուրն առաջնումն անմարմին տեսակաւ ՚ի բանէն Աստուծոյ գոյացաւ, և ՚ի չորրորդում աւուրն ընդ մարմնոյն պարուրեալ՝ ՚ի լուսաւորս բաժանեցաւ, իշխան տունջեան և զիշերի լինելով, և աշխարհի ճանապարհորդք յաւիտենից. մինն զմարդ ՚ի գործ յարուցանելով, և միւսն գազանաց համարձակութիւն տալով՝ Այսօր միջօրեայ աւուրն այնորիկ՝ մեզ ՚ի խաւար փոխարկեալ զիշերացաւ; <sup>1</sup> զազանաբար ազգն հեթանոսաց որք ՚ի վազնջուց ՚ի <sup>2</sup> խշտիս իւրեանց մոնչէին, ըստ մարգարէին ձայնի, և յԱստուծոյ հօտիցն խնդրէին կերակուր իւրեանց, ՚ի զիշերանալ մեզ աւուրն այնորիկ՝ ելին և տարածեցան ընդ երեսս երկրի, և գտին որս բազում և յագեցան կերակուրք, և նշխարեցին տղայոց իւրեանց յամս բազումս: Արդ թէպէտ և յամենայն տեղիս որս բաւականապէս պատրաստեցաւ նոցա, քանզի իբրև զդրախտ փափկութեան լի պտղով գտաւ երկիր առաջի նոցա.

<sup>1</sup> Մի օր. զազանասար:

<sup>2</sup> Երկու օր. ՚ի խորհուրդս, և այլ օր. ՚ի իւանս:

բայց առաւել՝ի գաւառն Մանահաղոյն՝ի լեառն՝  
որ կոչի Սմբատայ բերդ. քանզի անդ ժողովեալ  
էին բազմութիւն անթիւ փախստէիցն, և անա-  
սուն որ ոչ գոյր թիւ: Յորոց վերայ հասեալ ա-  
նօրինացն ապականեցին զամուրս նորա, և մատեալ  
'ի ներքս՝ սուր 'ի վերայ եղեալ կոտորեցին զա-  
մենեսին:

Անդ էր տեսանել տեսութիւն ողորմելի և  
բազում ողբոց արժանի. զի զոմանս 'ի նոցանէ  
որ 'ի բուռն անկանէին՝ սրաման<sup>2</sup> սպանանէին,  
և որք յառապար տեղիս անկանէին և ամրանա-  
յին, նետիւք խոցուեալ սատակէին. և զբազումս  
յանձաւին վերայ ելեալք մեծամեծ վիմօք զլա-  
ջարդ առնէին, որոց դիակունքն զլաթաւալ 'ի  
վերայ միմեանց շեղջեալ իբրև զկոյտս փայտա-  
հարաց՝ զառաջիկայ զձորն նուին: Վայ և աւազ  
շատ դառն լուսոյ աւուրն այնորիկ. զի քաջ արքն  
վառեալ զինու և սրտմատութեամբ եռացեալք, և  
վատքն թալկանային, կանացիք յիմարէին և երի-  
տասարդք խիզախէին, այլ ելս իրացն ոչ կարէին  
իմանալ: Քանզի յամենայն կողմանց պատնէշ  
թշնամեացն պաշարեալ էր զնոսա. ոչ գոյր անդ  
սէր սիրելեաց և ոչ աւաղ բարեկամաց. մոռա-  
ցաւ հայր զգութ որդւոց, և մայր զսէր նորածին  
մանկանց: Ոչ կարէր յիշել անդ կին նորահարսն

1 Միօր. անսանոցն:

2 երկու օր. առնէին:

զսէր փեսայի, և ոչ զմտաւ ածէր այր զգեղ ցան-  
կալի ամուսնոյն իւրոյ. պակասեցան երգք պաշ-  
տօնէից, և հատան ձայնք սաղմոսաց 'ի շրթանց  
սաղմոսողաց. կալաւ առ հասարակ զամենեսեան  
դողումն և երկիւդ: Եւ 'ի սաստիկ տափնապէն,  
բազում կանայք յղի գոլով՝ վիժէին զմանկունս.  
և այսպիսօրէն գործով՝ իբր վարմաւ որսորդաց  
թակարգեալ էին զիեառն ամենայն մինչեւ լքան և  
հատան 'ի զօրութենէ:

Իսկ 'ի գալ երեկոյին, առեալ զառ և զգերի  
և զկապուտ սպանելոցն, չոգան 'ի տեղւոյն: Իսկ  
զկնի ելանելոյն նոցա, անդ էր տեսանել տեսու-  
թիւն ողորմելի, և քան զառաջինն ողորմագոյն  
և բազում ողբոց արժանի: Քանզի բազմագիմի  
էին օրհասք մահուն. զի ոմանք յանկելոցն դեռ  
յոգիս կէին, և լեզուք նոցա 'ի ծարաւոյ ցամա-  
քեալք, նեղ և նուրբ ձայնիւ հայցէին հայթայ-  
թանս ծարաւոյն գտանել, և ոչ ոք էր որ տայր.  
Իսկ կէսք չարապէս վիրաւորեալք, և 'ի ձայնէ  
պակասեալք, ուժգնակի շնչէին. և այլք ընդ փո-  
վիցն զենեալք՝ կիսամեռ գոլով, դժուարաւ խը-  
ռնչէին. իսկ ոմանք 'ի դժուարին խոցուածոցն  
մարմանջեալք՝ աքսոտէին ոտիւք, և եղնգամբ  
ձեռացն զերկիր դափր հատանէին: Բայց առնո-  
սա և այլ ահագին էր տեսիլ տեսանել, որ և  
զքարինս անգամ և զայլ անշունչ արարածս շար-  
ժէին 'ի յողբս և 'ի հառաչանս. քանզի անօրէնքն

յորժամ զգերիսն հանին՝ ի լեռնէն, զտղայս առեալ՝ ի գրկաց ծնողացն՝ յերկիր ընկեցին, որովք՝ ի բազմութենէ նոցա եռայր առհասարակ տեղի բանակի նոցա: Ոմանք յանկելոցն զքարի հարեալ սատակէին, և կիսոց կուշտքն պատառեալ, և փորոտիքն յերկիր հեղեալ. իսկ զկենդանեացն զկառաչ որ լսելիք տանել կարէին. քանզի որ հետիոտիք ընթանալ կարէին, այսր անդը յածելով զմարս իւրեանց խնդրէին, յորոց՝ ի բարձրաձայնութենէ լալեացն՝ արձագանք լերինն զհետ հնչէին. իսկ այլ որք չև ևս էին հաստատեալք յոտս, ի գուճս սողալով կառաչէին. իսկ որք քան զնոսսա՝ ի տիսեղծ հասակին, ոտիւք զերկիր հարկանէին. և ի սողալոյն պակասեալք՝ ի ձայնս, ոչ կարէին արտաքս բերել գհագագն. և այսպիսի ողորմագին ձայնիւք և անհատ աղաղակաւ՝ զգառանց բերէին զնմանութիւն, որ գեռաղեռ՝ ի մարցն բաժանեալ՝ ի հորձիցն ելեելս առնէին վասն անժոյժ գոլոյ ընութեանն. և անդադար զօղանջիւք վիրաւորէին զօդն, և ձանձրացուցանէին զլսելիս լսողացն:

Այսոքիկ են չարաչար պատմութիւնք քո, ով լեառն. լեառն ամուր Սմբատայ՝ ոչ ընդ որ հաճեցաւ Աստուած բնակել՝ ի նմա, այլ լեառն արեան, կոխման և կորստեան: Ոչ է մարթ անուանել զքեզ լեառն, այլ խորխորատ տղմոց՝ ի կորուստ ամենայն բնակչաց երկրի. քանզի՝ ի

քեզ գաղանք օթագայանան, և ցինք և անգեղք պրաբին իւրեանց բնակութիւն, ի քեզ աղուեսունք երամակեալք, խայտացեալք, լցեալք՝ ի կերոյ: Ով լեառն, ոչ ըստ Հերմոնի՝ ի ցօղոյ երկնից պարարտացար՝ ի քեզ կաթելոց, այլ՝ ի ձարպոց և յարենէ դիականց՝ ի քեզ կոտորելոց: Ով լեառն, ոչ ընդ սինէականին Մովսեսի առ Աստուած խօսից եղեր միջնորդ, այլ զբազում քահանայս լսեցուցեր՝ ի սաղմոսական երգոց, որք աղօթիւք միշտ խօսակիցք Աստուծոյ լինէին: Եղիա երկուցեալ՝ ի մահուանէ, Յեղաբելայ փախըստական՝ ի Քորեք անկեալ ապրեցաւ. և սոքա՝ ի քեզ ապաստան եղեալ՝ մատնեցան՝ ի ձեռն սրոյ, և բաժինք աղուեսուց եղեն: Ով լեառն, համաձայն տեսանեմ զքեզ լերինն Գեղբուայ, յորոյ վերայ անկան<sup>1</sup> ազատքն իսրայէլի: Վասն որոյ ժամ է ինձ զառ՝ ի Դաւթայն զառ՝ ի նազասացեալսն՝ ի քեզ երկորդել: Լերինք Սմբատայ, մի՛ անկցի՝ ի վերայ ձեր անձրե, և մի ցող. քանզի արբէք գուք յարենէ հաւատացելոց՝ պրանց և կանանց՝ ի ձեզ անկելոց: Այլ որ վասն լերինն այնորիկ չար համբաւ պատմութիւն էր՝ զկայ առցէ, թէպէտ՝ ի բազմաց սակաւ ինչ ասացի: Աստանօր՝ ի մերս դարձուցից զոճ բանի պատմութեանս. և կամիմ ըստ ուժոյ իմոյ յամել՝ ի բանս, որպէս զի ամենեցունց շարժեցից 1 Յամենայն օր. ազունք:

գարտասուս: Կոչեմ և զձայնարկու կանայս ընդ  
Երեմիայ, զի ընդ իս զողբս յարդարեցեն. քանզի  
ոչ եթէ լեռանց և անձաւաց և անապատ տե-  
ղեաց առնեմ զպատմութիւնս, յոր սինլիքորք  
փախստէիցն երթեալ բնակեցան:

### ԳԼՈՒԽ ԺԲ.

ՎԱՅՆ ԱՐԾԻՆՆ ԱՆՌԴՈՐՄ ԿՈՏՈՐԱԾԻՆ:

Այլ քաղաքին, և քաղաքի այսպիսում, որ  
հոյակապ և ականաւոր էր ամենայն աշխարհաց,  
իբրև զքաղաք որ 'ի վերայ լերինն կայցէ. և ծով  
և ցամաք երկնէր և առատանայլ կրել ՚ի սմա  
զգօրութիւն իւր. որպէս բարձրն եսայիաս վասն  
Երուսաղեմի մարդարէմնայր: Արդ սա յառա-  
ջնան՝ մինչդեռ բարեացն առատութեամբ պսա-  
կեալ էր, ամենայն ինչ ըստ մտի էր սորա. և  
նման իմն էր նորահարսն կնոջ, որ գեղոյն վա-  
յելչութեամբ և զարդուցն պայծառութեամբ՝  
ցանկալի գոլ ամենեցուն: Քանզի իշխանք սորա  
էին մարդասէրք, և դատաւորքն արդարադատք  
և կաշառուցն ներողք: Վաճառականք՝ եկեղեցւոյ  
շինողք և զարդարիչք, կրօնաւորաց օթևանք և  
հանդուցիչք, և առ աղքատս ողորմածք և դար-  
մանիչք: Ոչ գոյր խարէութիւն 'ի վաճառսն, և  
ոչ նենդութիւն 'ի տուրեառիկ փոփոխմունս: Ընդ

բամբասանօք էր վաշխից և տոկոսեացն շահքն,  
և խոտեալ և անարդեալ էր 'ի նուէրս ընծայից  
պատարագ նոցա: Ամենեցուն մի նախանձ էր  
բարեպաշտութեան. քահանայք նոցա սրբակացք  
և աղօթասէրք, և եկեղեցական սպասու հլուք և  
հպատակք: Վասն որոյ և վաճառականք սորա  
փառաւորք, և օգնողք թագաւորք ազգաց: Եւ  
իբրև ակն մի պատուական լուսագեղ պայծա-  
ռութեամբ վայլէր քաղաքս մեր 'ի մէջ ամենայն  
քաղաքաց, ամենակն գեղեցիկ, բոլորովին զար-  
դարուն:

Բայց յորմէ հետէ մտին յեկեղեցիս մեր  
Սիքարայիք և Պիհուոնացիք,<sup>1</sup> և արդարութեան  
օրէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարգի եղի  
արծաթսիրութիւն քան <sup>2</sup> զատուածսիրութիւն,  
և մամոնայն քան զթրիստոս, յայնժամ ամենայն  
համեստութիւն կարգաց զառածեալ յանկարգու-  
թիւն դարձաւ: Իշխանք սորա գողակիցք եղեն  
գողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք. զա-  
տաւորք սորա կաշառառուք և վասն կաշառաց  
գողանային զիրաւունս. և դատաստան որբոց ոչ  
առնէին, և յիրաւունս այրեաց ոչ խոնարհէին:  
Վաշխից և տոկոսեաց օրէնք եղան, և ցորենոյ  
բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգե-

<sup>1</sup> Մի օր. մտին յեկեղեցին մեր Սիքարացիք եւ  
Պիհուոնացիք:

<sup>2</sup> Երկու օր. զատուածպաշտութիւն:

լու զարգանդ առ ՚ի տալոյ զպտուղ ՚ի ժամու  
իւրում առ ՚ի կերակուր մարդկան։ Որ խաբէր  
զընկերն՝ պարծէր իմաստուն գոլ, և որ յափըշ-  
տակէր՝ ասէր, ես հզօր եմ։ Զտունս տնակից՝  
աղքատացն, և զսահմանս անդաստանաց նոցա  
յափշտակէին մեծատունքն, և չկաթէր ՚ի լսելիս  
նոցա աստուածապատուէր անէծքն գրեալք ՚ի  
ձեռն Մովսեսի ծառայի տեառն։ «Անիծեալ է,  
ասէ, որ յափշտակէ զարտս ընկերին»~~Կամ զոր~~  
բարձրն Եսայիս բողոք բարձեալ սաստէ այն-  
պիսեացն։ «Վայ, ասէ, այնոցիկ, որ յարեն զտուն  
՚ի տուն և անդաստան առ անդաստան մերձեցու-  
ցանեն, զի զընկերին հանիցեն, նա աւանիկ ազդ  
եղե յականջս տեառն զօրութեանց այդ ամե-  
նայն», և որ ՚ի կարգին է, լում խնայելով ՚ի  
ձեզ։ Զգոյր ՚ի յիշատակ նոցա այդին Նաբովթայ,  
և Յեղաբէլ՝ որ յափշտակեաց զայն, թէ զինչ  
կրեաց, որ մինչև ցայսօր փող հնչէ յամենեցունց  
լսելիս։ Բարձաւ և ՚ի քահանայից երկիւղ և ընտ-  
րութիւն սրբութեան։ Նեղին և մղին մերձենալ  
՚ի սեղանն և սպասաւորեն անճառ խորհրդոյն որ  
հրեշտակաց է զարհուրելի, թնդ թէ մարդկան,  
և զայն ՚ի ձեռն արծաթոյ և հչ Աստուծոյ. և ՚ի  
մոռացօնս եղե սաղմոսական երգն որ ասէ։ «Խո-  
տեսցին այնոքիկ որ ընտրեալ են արծաթով»։

Զինչ ասացից և որ առ կանայս ամբաստա-  
1 երկու օր. տնանկաց։

նութիւն է. բաւակմն են առ ՚ի յեսայեայ ա-  
սացեալքն, չկարօտանան մերում բանիցս։ Քանզի  
նա զերուաղէմի կանայսն՝ վասն զարդասէր  
լկառութեանն այսպէս յանդիմանէ. «Փոխանակ,  
ասէ, զի հպարտացան գտտերք Ալովիի, և գնա-  
ցին ՚ի բարձր պարանոց»։ Նախ զարմատոյն ա-  
մենայն չարեաց բուռն հարկանէ, զամբարտա-  
ւանութենէն ասեմ. զի նա է մայր և սկիզբն ամե-  
նայն չարեաց, զի ՚ի մարդկանէ զես գործէ, և  
նոցին տանջանացն վիճակակից առնէ։ Արդ՝ ա-  
մենեցուն չար է ախտս այս, բայց կարի առաւել  
կանանց ազգի. վասն այսորիկ նախ զնոսա դա-  
տի, և ապա ՚ի կարգ արկեալ յիշէ զստորինսն  
ընդ երկիր զքարշիլն, և զգինզմն և զմատանիսն,  
զապարանջանսն, զքօղէմն և զմենեանզմն և զայլ  
ամենայն։ Տես լսող, և զհատուցումն նոցին։ «Փո-  
խանակ, ասէ, ոսկի զարդուցն, զլխոյն կնտու-  
թիւն»։ զի ՚ի զարդուցն մերկացուցեալ զգուփին,  
զհերսն հատանէին ծաղը առնելով զնոսա։ «Փո-  
խանակ ոսկի կամարացն չուան գօտի. և փոխա-  
նակ պատուական հանդերձիցն քրծազգեաց, ա-  
սէ, լինել»։ զի ՚ի զերութիւն հանդերձեցան,  
գերիչքն զայն շնորհեցին նոցա։

Ոչ վայրապար եղե ինձ անցանել ընդ այս  
ամենայն. այլ զի ցուցից, թէ որպէս ըստ կար-  
գի նոցա յանցանքն մեր, նոյնոքս լսոտ նոցա  
պարտ էր և խրատ ընդունել մեզ, և առաւել  
6

և. զի թէ նոքա առանց օրինակի զայն կը եցին, մերս քանի՞ծն առաւել պատժոց արժանի չիցեն՝ յետ զնոսա մեղ օրինակ ունելոյ, և Քրիստոսի խրառուն՝ որ աղաղակէ և ասէ. «Թէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան դդպշը բացն և զփարիսեցւոցն, ոչ մտանէք յարքայութիւնն երկնից»։ Եւ մեք ոչ յարդարութիւնն և եթ, այլ և 'ի մեղսն առաւել գտանիմք; և զոր ներել թողութեան ունիցիմք։

Արդ աես զգիւրակշիռ և զգէպ հատուցմունսն։ Ելին Պարսիկք 'ի վերայ Երուսաղէմի, ելին և 'ի վերայ մեր. աւերեցաւ Երուսաղէմ, և աւերեցան քաղաքք մեր։ Մտին հեթանոսք 'ի տաճարն սուրբ, և յաւարի տարան զզարդարանս նորա, և պղծեցին զտաճարն սուրբ. մտին և յեկեղեցիս մեր, և համարձակեցան յանմտանելիսն, և պղծեցին պիղծ գարշապարօք զսրբութիւնս նորա. և կապուտ կողովուտ արարին զզարդս նորա։ Հրայրեաց եղեւ տաճարն սուրբ. այրեցան և 'ի մեղ փոխանակ միոյ տան՝ բազում եկեղեցիք. և առանց համարոյ անկան քահանայք նոցա 'ի սուր. և զմերոյս ով բերէ գհամար։ Ժամ է ինձ 'ի դաւթական բանսն ելանել, և նորին ձայնիւ զմերս յօրինել զողըս։ Ընդէ՛ր տէր կացեր 'ի հեռաստանէ, և անտես արարեր զմեղ 'ի նեղութեան մերում, յանօրինել անիրաւին 'ի սրբութիւնս քո, և 'ի պարծիլ ատեցողացն զբեկ 'ի

մէջ տօնից քոց. զի տհա մտին հեթանոսք 'ի ժառանգութիւն քո, և պղծեցին զտաճար սուրբ քո. այրեցին 'ի հուր զսրբութիւնս քո, և յերկիր խոնարհեցուցին զփառս եկեղեցւոյ քո. հեղին զարիւնս ծառայից քոց որպէս ջուր, ոչ որպէս յայնժամ՝ շուրջ զերուսաղեմաւ միայն, այլ՝ թէ ամենայն երկիրս լցաւ արեամբ սպանելոցն. իսկ զթաղելոց նոցա զհաշիւ և 'ի միտս անզամ ո բերէր։

Բայց զքաղաքիս մերոյ զբազմաղիմի և զանհնարին չարիս ընդ գրով ովկ կարիցէ արկանել. զի որպէս գրեալ է վասն սողոմայեցւոցն, թէ «Արեգակն ծագեաց յերկիր, և տէր տեղաց 'ի Սոդոմ հուր և ծծումբ, և այրեաց զնա»։ Նոյնգունակ և աստ 'ի ծագել արեւուն յերկիր՝ հասին 'ի վերայ անօրինացն ժողովք իբրև շունք քաղցեալք, և շրջապատեցին զքաղաքն. և մտին իբրև հնձողք ոճոյ ագարակի, և սուր առն 'ի վերայ եղեալ հնձեցին մինչեւ անջատեցաւ 'ի կենդանոյ քաղաքս։ Իսկ զփախուցեալսն 'ի տունս կամ յեկեղեցիս՝ հուր հարեալ այրեցին անողորմաբար, բարեգործութիւն զիբոն կարծելով, որպէս կանխաւ Փրկիչն ասէր. «Եկեսցէ ժամանակ, զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ»։ և զպաճառն ինքն յայտ առնէ. «Եւ զայն արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ ծանեան զիս»։

Նաև օդոյ ձեռնտուռթիւն եղև կործանական աւուրին. զի հողմ ուժգնակի շնչեցեալ՝ բորբոք արկանէր հրատին, մինչեւ ծուխն ծառացեալ յերկինս հասանէր. և ցնցուղք լուսոյ հրատին՝ յաղթէր ճառագայթից արեգականն: Անդանօր էր տեսանել տեսիլ ողորմագին և զարհուրական յոյժ. զի ամենայն քաղաքն լի էր դիակամբք անկելոցն, վաճառափողոցք և նըքափողոցք և ընդարձակ սրահք: Իսկ զայրեցելոցն ով կարիցէ բերել դհամար. քանզի որք ՚ի սրոյ շողալոյ փախըստական եղեալ՝ ՚ի տունս ուրեք ՚ի թագստի եղեն, ամենեքեան նոքա հրայրեացք եղեն: Իսկ զքահանայսն, զորս յեկեղեցիս ըմբռնեցին՝ հրով ծախեցին. և զորս արտաքոյ՝ զոմանս սպանեալ, և զմեծամեծ խոզեանն եղեալ ի գիրկնն առ ՚ի նախատինս մեզ, և այսն կատականաց տեսողացն. իսկ զթիւ քահանայիցն, որք ՚ի սուր և ՚ի հուր փախճանեցան՝ զտաք աւելի քան զհարիւր յիսուն, որք վիճակի տեարք էին և եկեղեցւոյ. բայց գեկամտիցն, և որք յամենայն աշխարհաց անդք հանդիպեցան, զնոցա ով կարէ բերել զհամար:

Այսոքիկ են չարաչար պատմութիւնք քո, ով քաղաք երջանիկ և երանելի, յղփացեալ, ականաւոր ՚ի մէջ աշխարհաց. այժմ ամբարձ զաչս քո, և տես զորդիս քո վարատեալս ՚ի գերութիւն, զտղայս քո անողորմաբար հարեալս զքա-

րի, զերիտասարդս քո այլբեցեալս ՚ի հրոյ. մեծանարկի . և փառաւոր ծերք անկեալք ՚ի հրապարակի: Հովասուն և բարեկեցիք կոյսք և կանայք՝ անկեալք ՚ի խայտառականս, և հետի ստիւք վարեալք ՚ի գերութիւն: Առ մեզ կատարեցան դաւթական ողբոցն երգք. «Մատնեաց, ասէն, ՚ի զերութիւն զզօրութիւնս նոցա, և զգեղս նոցա ՚ի ձեռս թշնամեաց նոցա» և որ ՚ի կարգին է. բայց Քրիստոս յամէ զզարթնուլն, և ոչ որպէս յայնժամ:

Այլ որ վասն Արծինս տիսրական պատմութիւնս աստանօր զկայ առցէ. զի մեք զամենայն անցս չարեցն ոչ կարացաք ընդ գրով արկանել, այլ զթողեալն ՚ի մէնջ յաւերակացն ուսանի խնդրօղն: Այսոքիկ երկուց էր տեղեաց՝ լերին. և քաղաքի, ողորմելի պատմութիւնս. զոր աշօք մերովք տեսաք և ընդ փորձ չարեցն անցաք, զայն միայն զրեցաք. իսկ զայլ գաւառացն և զքաղաքաց զանցս աղետից, ոյր միաք բաւեն. այնոքիկ երկայն բանի<sup>1</sup> պիտոյ և ժամանակի. մեք զմերն ըստ կարի մերում համառօտեցաք:

1 Երկու օր. պիտանանայ:

## ԳԼՈՒԽ ԺԳ.

ՅԱՂԱԳՍ ՄԵԾԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ԵՂԵՒ ՚Ի ՄԵԾ  
ԴԱՇՏԻՆ ԲԱՍԵՆՈՅ, ՅՈՐՈՒՄ ՊԱՐՏԵՑԱՆ ՀՈՌՈՄՔ:

Մարդարէն Եսայիսա՝ յորժամ<sup>1</sup> զԵղիսլատաց-  
ւոցն աւերանաց մարդարէմնայր, զայսոսիկ ա-  
սէր, թէ «Յիմարեցան իշխանք Տայանու, որ  
էին իմաստուն խորհրդականք թագաւորին». որ  
և այս մեղ հանդիպեցաւ: Թանզի հեծելազօրք  
չոռոմոց ոչ սակաւք էին յարեելս պահապանք  
աշխարհին, որ մինչև ցվաթսուն հազար ասեն  
եթէ էր թիւ բանակին, որոց գլխաւորքն էին կա-  
մենաս՝ որ թարգմանի կրակ, որ ունէր զիշխա-  
նութիւն տանին Հայոց. և Ահարոն՝ որդի Բուլ-  
ղարին, որ ունէր զկողմն Վասպուրականի, և  
Գրիգոր՝ Հայոց իշխանն, որ ունէր զպատիւ մա-  
զիստրոսութեան: Եւ քանզի զիրք ասեն եթէ՝  
բազմիշխանութիւն ամբոխեալ է և անյարմարա-  
կան և մերձ՝ ՚ի լուծումն. որ և սոցա հանդիպե-  
ցաւ: Զոր պարտ էր միահաղոյն միաբանութեամք  
զյաղթօղն ՚ի պատերազմի զտէր Աստուած կար-  
դալ յօդնականութիւն, որպէս օրէն էր առաջին  
յաղթողացն. «Թանզի ոչ եթէ իւրով զօրութեամք  
զօրանայ հզօրն», այլ տէր քաղէ զզօրութիւն  
հակառակամարտին: Իսկ նոքա ոչ այնպէս խոր-  
Մի օրին, զԵղիպտական աւարացն:

հեցան. այլ որ անօրինելոց էր ՚ի նոսա՝ անօրի-  
նէր. և կարծէին մարդկօրէն հնարագիտութեամք  
զբորբոք ահազին հրատին շիջուցանել: Վասն ո-  
լոյ ՚ի ծուփս անկեալ, միոյ միոյ բանից ոչ հա-  
ւանէին. քանզի եբարձ Աստուած զիմաստութիւն  
՚ի խորհրդոց նոցա վասն չխնդրելոյ նոցա զնա:  
Եւ այս ՚ի գործոցն յայսնի է, զի զԼիպարիտն  
հայցէին գալ յօդնականութիւն, զԱսւուղայն ախ-  
տացեալ առ վհուկն ընթացեալք. կամ որպէս  
Հրեայրն, որ բարձեալ ուղառուց զգանձս իւրեանց  
տանէին առ ազգ մի; որ ոչ գոյր ՚ի նոսա յոյս  
օդնականի: Եւ զայն<sup>1</sup> ոչ ածին ՚ի յիշատակ զԴաւ-  
թայն որ առ մսեղէն ըլուրն, որ մեծաւ խրոխ-  
տանօք նախատէր զԻսրայէլ. որոյ պարսաքար  
մի միայն բաւական եղե առ ՚ի զիսելապատակ  
ուղղոյ նորա ջարդել. կամ զԵղեկիային՝ որ աղօ-  
թիւք միայն զհարիւրութսուն հազարսն յԱսոր-  
ւոց ՚ի ձեռն հրեշտակին՝ աներեւյթ սրով յեր-  
կիր յորսայսեաց:

Արդ՝ եկն Լիպարիտն բազում աղաշանօք և  
զանձուց առատատուր պարզնօք, և ոչինչ վճա-  
րեցաւ այսու. քանզի և ինքեանք իսկ չէին  
միաբանք առ միմեանս: Վասն որոյ ՚ի խմբել  
պատերազմին, որդի Բուլղարին իւրայնովքն  
՚ի թիկունս դարձեալ՝ համարձակութիւն տայլ  
թշնամեացն. որք մեծաձայն աղաղակաւ զմիւ-

<sup>1</sup> Երկ. օր. ոչ զիտէին յիշատակ զԴաւթայն:

մեանս յորդորէին, և 'ի մէջ փակեալ զլիպարիտն իւրովք քաջ արամբք, զոմանս սպանանէին, և զերիվարի նորա զջիլան հատեալ սուսերաւ զինքն ձերբակալ առնէին։ Զոր տեսեալ այլ զօրացն՝ 'ի փախուստ դառնային։ որոց գհետ մտեալ թշնամեացն, անչափ կոտրածս առնէին, զոմանս սրով, և զբագումս՝ վասն զի գիշերացաւժամն, 'ի գահից և 'ի քարանցաւաց գահավէժ առնէին։ և մացեալքն մերկ կողոպուտ հետիսպիւք ուր կարէին՝ ապրեցան։ իսկ թշնամիքն լցեալ աւարաւ առաւել քան զառաւել, ուրախ լինէին։ իսկ մերքս վայիւք և ողբովք լի՛ Եւ յայնմ օրէ և այսր՝ իբրև շունք գիշախանձք, կամ իբրե գայլք արաբացիք՝ ոչ յագեցան երթէք արեամբ քրիստոնէից, մինչև սպառեցին և բարձին 'ի միշջոյ։ Եւ եզկ երկիրս ամենայն իբրև անդաստան հասեալ 'ի հունձս, զորոյ զհետ հնձողացն ընթանան որ զորայն բառնան, և ապա զհասկաքաղն և զիսողանն միայն թողուցուն յարօտ երէոց։ Արդ յետ պատերազմին յաղթութեան, առեալ զառ և զգերի՝ մտին յաշխարհն իւրեանց, և անչափ աւարաւն լցին զերկիրն ամենայն։ իսկ զիշխանն վրաց տարեալ ետուն ցլալիփայն իբրև զմնձինչ և քան զամենայն գերին հաճելի նմա։ զոր առեալ և ընկալեալ 'ի շնորհակալիս, և մեծաւ պարգևօք արձակեաց խաղաղութեամբ յաշխարհն իւր։ Այս աստ մինչև ցայս վայր։

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Թէ ՈՐՉԱՓ ԵՂԵԿ ՀԱՅՐԱՊԵՑԻՆ ՊԵՏՐՈՍԻ ՄՆԱԼ 'Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԿԱՄ ՈՐՊԵՍ ԴԱՐՁՆ։

Թագաւորին տեսեալ զնա՝ բագում պատուով և մեծարանօք ընկալաւ, և առատ սոճկօք հրամայեաց պաշտել զնա. բայց առ իւր պահեաց զնա ամս երիս, քանզի կասկածէր թողուլ ի չայս՝ թէ երթեալ ապստամբեցուցանէ զԱնի։ Իսկ Ասոմ որդին Սենեքերիմայ առեալ զնա յերաշեխս, ած 'ի քաղաքն իւր 'ի Սեբաստուպօլիս. և տուեալ նմա տեղի ընակութեան զհանգիստ սըրբոյ նշանին, զոր իւր շինեալ էր բազմայարդար զարդարանօքն և մեծապայծառ վայելչութեամբ, յորում տեղուջ կեցեալ ամս երկուս, փոխեցաւ 'ի Քրիստոս, Եւ կացուցանեն 'ի տեղի նորա զնաշիկ զնորին քեռորդի, որ զձեռնազրութիւն հայրապետութեանն վաղնջուց ընկալեալ էր։ Զոր իբրև լուաւ թագաւորն՝ առաքեաց խնդրակն, և տարաւ զնա առ իւր և զգանձս՝ զոր և զտին թէ անդ և թէ 'ի չայս. քանզի յոյժ սիրօղ էր զանձուց Պետրոս, որ և բազումք վասն այնք եպերէին զնա։ իսկ յետ երից ամաց արձակեցաւ տէր Խաչիկ 'ի թագաւորանիստ քաղաքէն, և եկեալ 'ի սահմանս երկրորդ չայոց՝ 'ի գաւառն

որ կոչի Տարբնտայ, անդ դադարեաց. քանզի անդ հրամայեցին նմա տեղի բնակութեան:

Իսկ ժամանակ յամելոյ նորա 'ի կոստանդնուպոլիս՝ այս է պատճառն, ընդ հարկիւ կամէին արկանել զնա. իսկ նա ոչ առնու յանձն, թէ զոր մինչև յիմ ժամանակն չէ լեալ՝ և ոչ ես հաւանիմ՞՛ եւ ապա 'ի հարց և 'ի փորձ արկեալ, և սպանալիս ևս յաւելուին թէ ոչ ելանիցես աստի, եթէ ոչ զհրամայեալս 'ի մէնջ յանձն առնուցուս. իսկ երանելի անձն այն և մեծի լուսաւորչին մերոյ փոխանորդն՝ ոչ ինչ զանդիտեալ 'ի նոցա բանիցն, այլ 'ի նոյն և 'ի նմին եկաց հաստատուն: Յետ այսորիկ արք երկու, մին իշխան և միւսն վանական՝ ի հոռոմոց, յառաջ կացեալ, եթէ վասն նախանձ արկանելոյ նմա եթէ ճշմարտիւ, ոչ գիտեմ, ինդրեցին զվերակացութիւն եկեղեցւոյ և հատուցանել զհարկն. որ և երկոքեանն չարամահ սատակեցան: Ապա 'ի զեղջ եկեալ արձակեաց զնա առանց հարկի, տուեալ նմա զրով և ոսկի մատանեաւ զոր 'ի չայս իւրեանց տեղիք էին, և երկու վանս 'ի Տարբնտայ:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Թէ ՈՐՊԵՍ ԱՆՀՆԱՐԻՆ ՀԱՐԱԿ ՔԱՂԱՔՆ ՅՂՓԱՑԵԱԼ,  
ՈՐ ԿՈՉԻ ԿԱՐՍ:

Քաղաքս այս 'ի բազում ժամանակաց հետէ չէր զփորձ չարեաց առեալ. վասն որոյ յանհոգս և յանկասկածի կէին, հարպատացեալք բազում ընչեղութեամք 'ի ծովէ և 'ի ցամաքէ ամբարեալ: Արդ 'ի զալ մեծի յայտնութեան տեառն մերոյ, 'ի գիշերին՝ յորում ուրախական ձայնիւ դասք քահանայից հանդերձ բազմամբոխ ժողովրդովքն զպաշտօն աւուրն կատարէին, յանկարծակի 'ի վերայ հասին զօրք անօրինացն. և քանզի առանց գիշերագիտաց էր քաղաքն, մտեալ 'ի ներքս, սուր 'ի վերայ առն եղեալ, անողորմ կոտորեցին դամենեսին, որ յոյժ ողբոց արժանի է պատմութիւնս: Քանզի օրէն է քաղաքաց. 'ի տէրունական տօնսն բազում զարդարանօք վայելչանալ արանց և կանանց, ծերոց և տղայոց ըստ ուժոյ և ըստ կարողութեան, ըստ նմանութեան գարնանաբեր ծաղկանոցաց: Որ և զսոսա այսպէս դուեալ, յանկարծակի վայիւք և ողբովք լի եղեք քաղաքն: Զքահանայսն 'ի պաշտամանցն լուեցուցին, և զսաղմոսասացսն 'ի սաղմոսական երգոցն. հատաւ երդ օրհնութեան 'ի բերանոյ դպրաց և

տղայոց: Անդամոր էր տեսանել տեսութիւն ուղղումագին որ զքարինս և զանշունչ արարածս անդամ շարժէր յողըս հառաջանաց, թնդ թէ զզգայունս և զկենդանիս. քանզի մեծահարկի և պատուական վաճառականք չարաչար մահուամբ սպանեալք. երիտասարդք և ըմբշամարտք 'ի փողոցսն սրակուորք. պատուական ալիք ծերոցն արիւնաշաղախ առ նոքօք անկեալք. և այսպիօք էն դործովք սպառեցաւ քաղաքն յարանց. և թէ ոք ժամանեաց յամուրն ելանել որ 'ի վերայ քաղաքին կայ, նա միայն ասպրեցաւ: Եւ մնացեալ զօրն ողջոյն 'ի տեղւոջն խիլ արկեալ բրեցին զտունսն, և ապա հուր հարեալ այրեցին զքաղաքն, և ինքեանք առեալ զգերի և զկապուտքաղաքին գնացին յաշխարհն իւրեանց:

### ԳԼՈՒԽ ԺԶ.

ՎԱՍՆ ԳԱԼՈՅՆ ՍՈՒԼՏԱՆԱՅ:

Զկնի այսր պատմութեանս, 'ի գալ տարւոյն էր թուականիս մերոյ ամք հինգհարիւր երեք, 'ի նոյն ամիս և 'ի նոյն քանիս ամսոյն, ուր զառաջին աշխարհս գերի տարան, զԱրձն այրեցին, և զայլ քաղաքս և զաւանս. խաղաց գաղանն մահաշունչ արիւնարբու և մարդակառշոշն Առլտան անհամար զօրօք, փորօք, և կառօք և երիվարօք,

կանամբք և որդւովք, և բազում պատրաստութեամբ: Զանց արարեալ զԱրձիշաւ և զԲերկրաւ՝ եկեալ բանակեցաւ շուրջ զքաղաքաւն, որ կոչի Մանազկերտ, 'ի գաւառն Ապահունեաց, և կալաւ բովանդակ զընդարձակ վայրս դաշտացն: Եւ արձակեաց ասպատակս յերեսին կողմանս աշխարհին, 'ի հիւսիս՝ մինչև յամուրն Ավխազաց և մինչև<sup>1</sup> 'ի լեառն որ կոչի Պարխար և մինչև յստորոտն կովկասու. և յարևմուտս՝ մինչև յանտառն Ճանեթոյ, իսկ 'ի հարաւ մինչև ցՍիմի կոչեցեալ լեառն. և բովանդակ կալեալ զաշխարհս իբրև հնձօղք ոճոյ ագարակի:

Արդ զայնմ ժամու զչարիսն՝ զոր նոքա աշխարհիս հասուցին, ով կարէ ընդ գրով արկանել, կամ ոյր միտք բաւեն 'ի համար ածել. զի ամենայն աշխարհս լի էր դիակամբք, շէնք և անշէնք, ճանապարհք և անապատ տեղիք, քարանձաւք և առապարք, անտառախիտ մայրիք, և ափափայ վայրք՝ և յամենայն շինանիստ տեղիս հուր<sup>2</sup> հարեալ ապականեցին զտունս և զեկեղեցիս, որոյ բոց հրատին առաւել բարձրանայր քան զհնոցն Բաբելոնի: և այսովիսի ձեռնարկութեամբ ապականեցին զաշխարհս մեր, ոչ միանգամ, այլ երիցս անգամ մի 'ի միոյ վերայ դարձ արա-

<sup>1</sup> Մի օր. 'ի դուռն:

<sup>2</sup> Մի օր. հուր արկեալ:

րեալ՝ մինչև առհասարակ հատաւ երկիրս՝ ի բը-  
նակչաց, և բարձաւ կառաջ անասնոց:

Զայս արարուած տեսեալ՝ սուզ առ և կործա-  
նեցաւ երկիր, վասն զի կործանեցան բնակիչք  
նորա. բարձաւ ուրախութիւն յերեսաց ամենայն  
երկրի. յամենայն տեղիս ողբք և հառաչանք.  
ամենայն ուրեք կոծ և լալականաց հանդէսք. ոչ  
ուրեք քահանայից երգք. ոչ ուրեք լսի փառա-  
բանութիւն Աստուծոյ: Ոչ ուրեք բանին դիրք  
առ ՚ի խրատ և ՚ի մխիթարութիւն լսողաց. վասն  
զի ընթերցօղքն սրամանք ՚ի հրապարակս, և ին-  
քեանք այրեցեալք և աճիւնացեալք: Ոչ ուրեք լսի  
ձայն հարսանեաց, և ոչ աւետիք նորածին ման-  
կանց. ոչ նստին ծերք աթոռով ՚ի հրապարակի,  
և ոչ խաղան մանկունք առաջի նոցա. ոչ երա-  
մանան անդեայք ՚ի յարօտա, և ոչ խայտան գա-  
ռինք ՚ի մարզս: Ոչ լնու հնձող որայիւ զգիրկս,  
և ոչ լսէ բարեբանութիւն յանցաւորաց. ոչ լնուն  
կալք ցորենով. և ոչ զեղուն գինով. ոչ լսին  
ձայնք ուրախութեան ՚ի կութս այգեաց և ոչ  
ծանրանան<sup>1</sup> պահառք ՚ի ստոմանաց: Բարձաւ  
այս ամենայն, կորեաւ և ոչ երեկո: Ո՞ր երե-  
միա ողբասցէ զմեր կործանումնս, ՚ի ճանապար-  
հաց և ՚ի լերանց յերկարելով զողբսն. որ եսա-

1 Յոմանս. պակառք:

2 Յայլ օր ոչ . . . նոր Եսայիաս:

յիաս անհնապանդի մխիթարչացն զի յագեսցի  
ողբովք: Վայ ինձ որ վիպասեմ զայսոսիկ, հիմե-  
նացի երիտասարդին նման զոլով իմ՝ գուժար-  
կու եղէ, ոչ միում զիւղի կամ միում քաղաքի,  
այլ ամենայն աշխարհաց, ազգաց յազգս մինչև  
՚ի կատարած ժամանակաց. քանզի չիք ինչ ժա-  
մանակ կամ գործ որ զմերն հնացուցանել կարէ,  
բայց թէ որ զպղծոյն անապատի զգուշացու-  
ցանեն գիրք: Արդ զինչ արարից, թողից՝ ՚ի պատ-  
մելոյ զանհնարին չարիսն որ եհաս ՚ի վերայ  
քրիստոնէից՝ խնայելով ՚ի ձեզ, եթէ շարժեցից  
ողբս և հառաչանս ամենեցուն որք<sup>1</sup> հանդիսակից  
էք այսմ գժոխուլուր պատմութեանս. բայց գի-  
տեմ որ կամիք լսել. վասն որոյ և ես ՚ի բաց  
եղեալ զանձին զանդաղանս, զրեցից զգիսաւոր  
տեղեաց մի ըստ միոջէ զանհնարին չարիսն:

Զեռուծեան և զհանձէթն յորժամ յիշեմ և  
որ ինչ ՚ի նոսա գործեցաւ, հատկիմ արտա-  
սուօք, փղձկի սիրտ իմ, և յիմարին միտք իմ,  
և զգողի հարկանի ձեռքս և ոչ կարեմ զոճ տո-  
վս յառաջ խաղացուցանել: <sup>2</sup> Բագում և ան-  
համար հոգիք ՚ի վերագոյն գաւառացն, վասն  
տեղեացն ամբութեան՝ անդը ժողովեալ էին. յո-  
րոց վերայ հասեալ անօրինացն արագապէս որ-  
պէս թաշունք, անողորմաբար որպէս գաղանք,

1 Երկու օր. հանդիսատէր:

2 Երկու օր. բանզի բազում ... ՚ի վերագոյն յիշեալ:

սրտմտութեամբ եռացեալք որպէս վրէժխնդիրք, և խիլ արկեալ՝ ի քարանձաւս և յանտառախիտ մայրիս՝ անյագաբար կոտորեցին զորս և գտին. մինչ զի արկւնն զօրէն գարնանաբեր ժամանակին, յորժամ՝ ի ջերմութենէ օդոյն ջուրն ծորեալ ելանէ՝ ի ձեանն առուս առուս վիժելով զհող երկրին զկնի իւր հեղեղատելով, այսպէս և յայնժամ լինէր. արեան առուք՝ ի դիականցն անկելոցն ելեալ, ի զառ ՚ի կող տեղիս ՚ի յորդութեան գնացիցն զհող երկրին հեղեղատէին:

Այլ դու յայնժամ եղեալն ած զմաււ, զկրօնաւորացն զառ և զքահանայիցն՝ որ անդ հանդիպեցան, կամ զերամս ծերոցն, կամ զերիտուսարդացն զբազմութիւնս, որոց գեռաբոյս մօրուացն՝ իբրև զնկար դեղեցկայարմար զայտոն զարդարէին, և խոպոպք վարսիցն փաղփեալք՝ ի վերայ ճակատուն զօրէն վարդի վառ ՚ի վառ գունով զդիրս երեսացն պայծառացուցանէին, թէ որպէս յանկարծակի ՚ի սրոյ թշնամեացն իբրև՝ ի կարկտոյ հարեալք՝ յերկիր թաւալ անկեալ գլոր խաղային: Բեր ՚ի մէջ և զտղայոցն համար, զորս առեալ՝ ՚ի զըկաց մարցն յերկիր ընկենուին, որ մեծակական հառաչմամբ զմարսըն խնդրէին. իսկ զծնօղսն գանալից հարուածովք՝ առ շատապ ի նոցանէ բաժանէին: ԱՌ սիրութեալէն, որ զայս լսելով ոչ հեղձնու արտասուօք ընդ բազմադիմի չարեացն յաճախութեամբ՝

կոյսք՝ ի խայտառականս անկեալք, նորահարսունք յարանց բաժանեալք և՝ ՚ի գերութիւն մատնեալք. ՚ի միում վայրկենի երկիրն՝ որ իբրև զքաղաք մարդախիտ առատութեամբ խճողեալ էր, եղեւ անմարդ ամայի, յերկուս բաժանեալ կամ սրակոտոր կամ գերի: Ո՞վ Քրիստոս քո յայնժամ ներողութեանդ, ո՞վ մերում չարեաց, ո՞րքան դառն մահու մատնեալ եղաք:

Իսկ զոր ՚ի Դերջան և յեկեղեաց և՝ ՚ի միջասահմանս նոցա եղեւ կոտորումն, զայն և ընդ զբով արկանել չէ ոք բաւական. բայց դու ասացելովք կշռեա զայն: Իսկ որ ՚ի Տայն մալին, առեալ զերկիրն և հասեալք մինչև ՚ի զետն մեծ՝ որ կոչի Ծորոխ, և զկնի գետոյն դարձեալ իջին յաշնարհն Խաղտեաց. և առեալ զառ և զգերի գաւառին՝ դարձան, և եկեալ մինչև ՚ի բերդաքաղաքն որ կոչի Բաբերդ, հանդիպի և անդ գունդ մի՝ ՚ի զօրացն Հոռոմոց որ կոչին Փուանկք, որք յանդէտս միմեանց ՚ի դիմի հարեալք ճակատեցան. և յողորմութենէն Աստուծոյ զօրացան գունդն Հոռոմոց, և յաղթեալ թշնամեացն՝ զգլուխ զօրուն սպանին և զբազումս ընդ նմա, և զայլն՝ ՚ի փախուստ դարձուցեալ, զառ և զգերի զամենայն թափեցին, բայց փախստէիցն զհետ ոչ իշխեցին յերկարել, քանզի երկեան թէ զուցէ ծանր զօրու հանդիպեացին: Իսկ զերիքն որ աղատեցան, զոհացեալք զԱստուծոյ, չոգան ՚ի տունս

իւրեանց։ Իսկ որ 'ի վերայ Հայոց գնացին, զոր և գտին 'ի սուր և 'ի գերութիւն ծախեցին, և լցեալ աւարաւ՝ դարձան անդրէն. և եկեալ 'ի սահմանս Վահանդայ, որոց 'ի դիմի հարեալ քաշագուն իշխանքն Գագկայ որդւոյ Արասայ, և բազում նախճիրս 'ի տեղւոյն գործեալ։ Որոց 'ի վերայ հասեալ զօրք անօրինաց 'ի մէջ փակեցին. և քանզի յերկարել պատերազմին և յահագին կոտորուածէն 'ի զօրութենէ պակասեալք էին ինքեանք և երիվարք իւրեանց, վասն որոյ ոչ կարացեալ զպատնէշ թշնամեացն պատառել և ելանել, յորոց սուր 'ի վերայ եղեալ կոտորեցին յազատացն արս երեսուն։

Իսկ զմի ոմն յազատացն կալեալ, որում անուն էր Թաթուլ որ էր այր հզօր և պատերազմասէր, զոր առեալ տարան առ Սուլտանն։ Եւ քանզի կարեվէր խոցեալ էր զորդի Արսուրանայ Պարսից ամիրային, զոր իբրև ետես Սուլտանն՝ ասէ. թէ դա ապրի, զքեզ ազատեմ. ապա թէ մեռանի, զքեզ դմա մատաղ հրամայեմ առնել։ Որ յետ սակաւ աւուրց մեռաւ. Իսկ նորա պատասխանեալ, թէ իմ է զարկածն, չէ կենաց. թէ այլում է, զայն ոչ գիտեմ։ Սուլտանն իբրև լուաւ թէ մեռաւ, հրամայեաց սպանանել զնա, և զաջ բազուկ նորա հատեալ, ետ տանել Արսուրանայ 'ի մխիթարութիւն, թէ 'ի վատ բազկէ չէ մեռեալ քո որդին։

Արդ զինչ է ինձ մի ըստ միոջէ զանկանգնելի կործանումն քրիստոնէից ընդ գրով սահմանել. որ իբրև ծով 'ի սաստիկ հողմոց յուղեալ՝ ահազին ծփանօք, և վրիբադէզ կուտակոքն յամենայն կողմանց գայ 'ի ծփանս, այսպէս և մեզ հանդիպեցաւ. աշխարհս ամենայն յանկարծակի լի եղև խոռվութեամբ, և ոչ ուրեք գտանիւր տեղի ապաւինի. զի վասն անհնարին չարեացն՝ բարձաւ յոյս կենաց յամենայն մարդկանէ։ Զայս և Փրկիչն յառաջազոյն գուշակեաց, իբրև ծովու խոռվութեանց նմանեցուցանելով զեղեռնաւոր չարիս, յորս բազումք 'ի մարդկանէ թալկացեալք՝ ոչ կարէին պահել զոգիսն առ ինքեանս, յերկիւղէ և 'ի կարծեաց եկելոցն։

Բայց դու թողեալ զայս, եկ զարմացիր ընդ Սուլտանայ անմատութիւնն և ընդ Աստուծոյ բազմապատիկ իմաստութիւնն. ընդ նորա անմատութիւնն, զի ամենակալ համբաւէր զինքն և Աստուծոյ աթոռակից. և ընդ Աստուծոյ իմաստութիւնն, զի միով տամբ խաղաց ընդ նմա, և լի անարգանօք դարձոյց յաշխարհն իւր։ Եւ արդ դու միտ դիր ասացելոցս. 'ի կարգի յառաջին անդամոյն յորժամ եկեալ անհամար զօրօքն շըրջապատեաց զքաղաքն՝ և նոքա յանպատրաստի էին 'ի մարդոյ և յանասնոյ, և յայնժամ թէ տասն օր 'ի վերայ կացեալ էր, առեալ էր զքաղաքն. բայց Աստուծած որ ոչ 'ի սպառ բարկա-

նայ և ոչ յաւիտեան պահէ ոխս, և ոչ ըստ մեղաց մերոց առնէ, այլովքն հանդերձ, արկանէր 'ի միտս նորա խորհուրդ նանրութեան։ Յետ երից աւուրց շարժեալ ամենայն բանակաւն, խաղայ իջանէ 'ի տուարածոյ տափ, և անտի իջանէ յընդարձակ դաշն բասենոյ առ անառ ամրոցաւն որ կոչի Աւնիկ, յորում ետես աշխարհաժողով մարդոյ և անասնոյ, և ոչ ինչ փոյթ արար. քանզի 'ի հայելոյն միայն ծանեաւ թէ անառ է. և անցեալ առ նովաւ գայ 'ի գլուխն բասենոյ, մերձ 'ի գեօն՝ որ կոչի Դու։ Եւ ելեալ անտի սակաւ արամբք յանդէտս 'ի վերայ գահին որ հայի 'ի կարին, ետես զբաղաքն վառեալ ամենայն պատրաստութեամբ. և նայեցեալ յերկար ժամս՝ դարձաւ անդրէն։ Իսկ արքն Ամանազկերտոյ անկասկած 'ի դուրս ելեալ 'ի քաղաքէն՝ պատրաստեցին առատապէս դարմանս մարդոյ և անասնոյ. քանզի ժամանակն հնձոց իսկ էր։ Եւ մինչ Սուլտանն զայտու զայնու եղեալ դարձաւ անդրէն, նոքա յանհոգս եղեալ էին. և ապա եկեալ նորա վառեալ սրամտութեամբ, գնէ մարտ պատերազմի ընդ քաղաքին։ Իսկ իշխանն որ ունէր զհոգ վերակացութեան քաղաքին, քանզի այր բարեպաշտ էր, զամենակալն Աստուած կարդայր յօդականութիւն՝ պահօք և աղօթիւք հրահանգելով զինքն. և այնու սպառազինեալ՝ քաջապէս հաւակնքն. և այնու սպառազինեալ՝ քաջապէս հաւակնքն. և առ Աստուած սաղմոսելով տովիք արիանայր. և առ Աստուած սաղմոսելով

ասէր. «Ոչ երկեայց 'ի չարէ զի դու տէր ընդ իս ես». և զմիւմն, թէ «Ոչ երկեայց ես 'ի բիւրաւոր զօրաց նոցա, որ շուրջ են զինե» և որ 'ի կարգին է։ Եւ առ արս քաղաքին և առ զօրս խրախոյս տուեալ ասէ. Քաջալերեցարուք ընկերք և եղբարք իմ, քաջալերեցարուք և մի երկնչիք. գործ մի գիւրին է Աստուծոյ այս. նոքա գան 'ի վերայ մեր կառօք և երիվարօք, մեք զանուն տեառն մերոյ կարգասցուք, և Աստուծով պարծեցուք յաւիտեան, և անուան նորա խոստովան եղիցուք, զի հա տացէ զօրութիւն և հաստատութիւն ժողովրդեան իւրոյ, որ է օրհնեալ յաւիտեան։ Զքահանայս յորդորէր յաղօթս, յերգս սաղմոսաց, որք անհատական աղաղակաւ առ Աստուած կարգային 'ի տուէ և 'ի գիշերի, որ խաչիւ և ժամանարաւ բարձրածայնութեամբ 'ի վերայ պարսպացն զԱստուած աղաչէին գալ յօդականութիւն վտանգելոցն։ Յորմէ ձանձրացեալ լսելիք բռնաւորին, հարցանէր թէ զինչ է այն անհատ աղաղակն, և ուսանէր 'ի գիտնոցն՝ թէ առ Աստուած աղաղակեն։

Արդ ամսականօք աւուրբք եկաց 'ի վերայ քաղաքին, առ մի մի օր երկիցս անզամ զնէր մարտ պատերազմի ընդ քաղաքին, մի 'ի լուսանալ աւուրն և մի ընդ երեկն։ Բայց դու աստ տես զԱստուծոյ իմաստութիւնն թէ որպէս գիտէ հակառակօքն զհակառակին պտուղն շահել։ Արդ

մինչդեռ քաղաքն յայս տարակուսի և 'ի վտանգի կայր, արկանէր խորհուրդս բարւոք 'ի սիրտ իշխանի միոջ, որ էր յոյժ 'ի մտերմաց Սուլտանայ, որ զառ 'ի նմանէ խորհեալսն ծանուցանէր քաղաքին՝ կամ բանիւ կամ գրով։ Բազում անդամ գրեալ 'ի քարտիզի 'ի սլաք նետին կապէր, և պատերազմի օրինակաւ մերձեալ 'ի պարիսպն՝ զնետն 'ի քաղաքն ընկենոյր. և այնու զամենայն կոռուոյ օրինակսն ծանուցանէր նոցա, թէ առ վաղիւն այսպէս և ըստ այսմ ձեռյ է կոռուոյն օրինակն. և եթէ յայս նիշ տեղուջ 'ի գիշերին կամին 'ի ներքոյ պարսպին զերկիր փորել և մտանել 'ի ներքս. բայց դուք պինդ և ամուր կացէք, և 'ի տեղեացն վերայ զգուշացարուք։

Զայս առնէ Աստուած, որ գիտէ 'ի հեռուստ հիմն արկանել մեծամեծ իրաց. որ զԲաղաամ առ Բաղակաւ մարդարէ գործեաց՝ 'ի տեսչութիւն ժողովրդեանն, և զանխօս անասունն մարդկեղէն բանիւ ետ բարբառել. և զեղիս 'ի ձորն Քերիաթու ագուաւօքն<sup>1</sup> զերիս ամս 'ի սովին կերակեաց։ Զի՞նչ թէ և աստ 'ի ձեռն հակառակորդացն զփրկութիւնն քաղաքին տնօրինեաց։

Արդ յոր կողմ և նոքա 'ի պատերազմ կացին թէ 'ի գիշերի և թէ 'ի տունջեան, սոքա վառեալք և պատրաստք անդը գտանէին։ Յետ այսորիկ մեքենայս կանգնեալ, այնու պատերազ-

<sup>1</sup> Մի օր. 'ի լերինն զերիս ամս։

մէին։ Իսկ երէց ոմն 'ի մերոցս հնագոյն ունելով զաւուրս, որ յոյժ տեղեալ էր արուեստին, և սա իւր կանգնեալ փիլիկուանն. և լինէր յորժամ նոքա քար եղեալ 'ի պարսատիկս մեքենային և ձգէին 'ի քաղաքն, երէցն զիւր քարն դէպ ուղիղ նոցա քարին արձակէր, որպէս զի<sup>1</sup> դիպեալ քար երիցուն 'ի քար անօրինացն, 'ի վերայ իւրեանց ընկենոյր։ Զայս արարեալ անօրինացն եօթն անգամ, ոչ ինչ կարացին վճարել. քանզի զօրացաւ քարն երիցուն 'ի վերայ քարի նոցա։

Ապա այլ պատերազմական գործի պատրաստեալ, զոր ինքեանք բարան կոչէին, որ յոյժ ահագին էր, զոր ասէին թէ չորս հարիւր սպասաւողք էին նորա, ոլք զպարանսն քարշէին, և վաթսուն լիտը քար եղեալ 'ի պարսատիկսն՝ 'ի քաղաքն ձգէին. և առաջի նորա պարիսպ կանգնեցին 'ի բամբակի բեռանց և յայլ բազում կարասւոյ, զի մի քար երիցուն հասցէ 'ի նա։ Եւ իբրև զայս այսպէս յարդարեցին, արձակեցին քար մի, որ դիպեալ 'ի պարիսպն ուժգնակի, վկոյց և խոռեաց զնա. զոր տեսեալ քաղաքին՝ յոյժ գուղի հարան, և առ Աստուած աղաղակէին մեծաւ հառաչմամբ, զալ յօդնականութիւն. իսկ անօրինացն լինէր մեծ ուրախութիւն։ Իսկ 'ի գալ

<sup>1</sup> Այլ օր. դէպ քար երիցուն, կամ դէպ քարի երիցուն։

Երկրորդ աւուրճն<sup>1</sup> Որտիլմեզ՝ որ զօրուն իշխանն էր, առեալ զզօրս իւր եկեալ մարտ եղեալ կոռուէր ընդ մերսն, քանզի այլ քաջ էր. եկեալ խոռին կամէր հզօրապէս՝ի ներքս մտանել, և յանկարծակի զիւրովին երթեալ անկաւ: Իսկ որ՝ի վերայ պարսպին էին, ձգեալ զճանկ երկաթի՝ կալան զնա և քարշեալ ձգեցին՝ի ներքոյ պարսպին. և զօրացն տեսեալ՝ դարձան լի տրտմութեամբ՝ ի բանակն. իսկ քաղաքին լինէր ուրախութիւն ոչ սակաւ:

Յայնժամ մի ոմն զօրաւոր՝ի զօրացն Հոռոմոց պատրաստեալ հուր նաւթիւ և ծծմբով, և արկեալ յաման ապակեղէն, և նստեալ՝ի վերայ ազնիւ երիվարի, քաջասիրտ և արի գոլով, վահանաւ միայն դթիկունս ամրացուցեալ, և ելեալ ընդ գուռն քաղաքին՝ մտանէ՝ի բանակն այլազգեացն, Մանաստօր ձայնելով զինքն՝ այսինքն թղթաբեր. և երթեալ մինչև՝ի բարանն՝ շուրջ անցեալ զնովաւ, և յանկարծակի՝ի վեր առեալ զշին եհեղ՝ի վերայ բարանացն, և նոյնժամայն բորբոքեալ հրոյն՝ բոց ծիրանի՝ի գուրս ելանէր, և ինքն դառնայր փութապէս: Զոր տեսեալ անօրինացն,՝ի հիացման եղեալ, հեծեալ յերիվարսն, զհետ մտեալ և ոչ կարացին հասանել: Եւ նորա եկեալ խաղաղութեամբ եմուտ ՚ի քաղաքն, օգնականութեամբ Աստուծոյ ոչ ինչ ու 1 Այլք Որդեմից:

նելով վէրս յանձին: Իսկ Սուլտանն իբրև ետես զեղեալսն, ցասմամբ մեծաւ հրամայեաց զպահապանն սրակոտոր առնել:

Տեսանե՞ս զԱստուծոյ մարդասիրական խընամսն, թէ որպէս մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա. տեսանե՞ս, որպէս գիտէ փոքր երօք մեծամեծացն յաղթել. որպէս առ Մովսեսիւն Ովգայ՝ որոյ բարձրութիւնն ինն կանգուն էր հսկայի կանգնով. կամ որպէս մանկամբն Դաւթիւ՝ Գողիաթու. կամ որպէս Սիսարայ սկայազինն այլազգեաց,՝ի ձեռն Յայելի՝ կնոջն Քաբերայ. կամ որպէս զՀողեփեռնէսն՝ի ձեռն այլում կնոջ: Զայս տսացի, զի մի վհատիցիմք յորժամ՝ի մէջ անհնարին փորձանաց անկանիցիմք: Զի սովոր է Աստուած ներել առ վայր մի յայնպիսի վտանգաւոր նեղութիւնս, զի համբերօղքն արժանացին պսակին փառաց, և անօրէնքն ընկալցին զիւրեանց չարեաց զհատուցունն յարդարագատ դատաստանացն: Զոր և՝ի հնոցին առ մանկունսն լեալ տեսանեմք. քանզի ներեաց Աստուած մինչև թագաւորն զիւր սրտմութեան զայրացմունսն՝ի լոյս էած զամենայն, և հնոցն պատրաստեցաւ, որոյ բոցն՝ի քառասուն և ինն կանգուն բարձրանայր. և նա առ սաստիկ ամբարտանութեանն՝ ասէր, թէ Ո՞վ է Աստուած ո՞ր փրկէ զծեղ՝ի ձեռաց իմոց. տես առ նմին և զմանկանցն սրտապինդ հաւատս, թէ ընդ որպի-

սում գազանի կացեալ՝ի յատենի, առնէին պատասխանի համարձակագոյնս, որ յոյժ քամահանաց բռնաւորին էր. Ոչ ինչ է, ասէ, վասն այդք տալ մեղ պատասխանի. և ապա զի՞նչ։ Յորժամ թագաւորի սպառնալիքն վճարեցաւ, և նոքա կապանօքն արկան՝ի հնոցն, յայնժամ եհաս՝ի թիկունս՝ որ արագն է յօգնականութիւն, և ոչ ամաչեցուցանէ զայնոսիկ՝ որ կարդան առ նա ճշմարտութեամբ։ Տես աստանօր զԱստուծոյ իմաստիցն զխորսն՝ յոր չհասանէ ոք. զի հուրն յերկուս բաժանեաց զքաղդէացիսն. զոր գտանէր՝ կեղոյր. իսկ մանկանցն ցօղէր հրեշտակ, որ ոչ մերձենայր ամենեին՝ի նոսա, ոչ տրտմեցուցանէր՝ և ոչ նեղէր զնոսա. որ և զբարբարոսն՝ի զգաստութիւն էած, որ՝ի վերայ անպատում սքանչելեացն խոստովան եղեալ ասէր. եկայք արտաքս ծառայքդ Աստուծոյ, զի և ես ընդ ձեզ օրհնեմ՝ որ օրհնեալն է յաւիտեանս։ Նոյնպէս և աստ՝ի ձեռն աննշան առնն՝ եցոյց մեծամեծ սքանչելիս։ Արդ այս մեղ՝ի խրատ և՝ի վարդապետութիւն եղիցի։

Իսկ Վասիլն՝ որ քաղաքին իշխանն էր, հրամայեաց ուամկին՝ի վերայ պարսպին մեծաձայն աղաղակաւ անարդել և թշնամանել զԱռլտանն, որ յետ երկուց աւուրց շարժեալ բանակաւն գնաց՝ի տեղւոյն և երթեալ՝ հանդիպի քաղաքի միոջ, որ կոչի Արծկէ, որ է՝ի մէջ ծու-

վուն Բզնունեաց, և ունի մօտ յինքն բերդ ամուր և անառիկ. և քաղաքացիքն յայս ապաստան եղեալ՝ի ծովն և յամրոցն, յանհոգս կային։ իսկ արիւնարբու գազանն ծանծաղ տեղի գտեալ՝ի ծովուն, եթէ առաջնորդութեամբ ուրուք, և եթէ իւրեանց հնարագիտութեամբն, մտին՝ի քաղաքն. և սուր՝ի վերայ եղեալ կոտորեցին<sup>1</sup> զամենեսին. և առեալ զգերին և զկապուտ քաղաքին, ելին՝ի տեղուղէն։ Եւ այս սրտին դիւր եղկ Սուլտանին, և գնաց մեծաւ տրտմութեամբ յաշխարհն իւր. քանզի ոչ զոր ինչ կամէր՝ կարաց վճարել ինչ,

### ԳԼՈՒԽ ԺԷ.

ԿԱՏԱՐԱԾ<sup>2</sup> ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՄՈՆՈՄԱԽԻՆ,

Գրէ երջանիկ և աստուածայինն Սողոմոն, եթէ թագաւոր արդար կանգնէ զաշխարհս, իսկ անօրէնն կործանէ։ <sup>3</sup> Զոր և իսկ աչօք մերովք տեսաք առ սմա եղեալ. քանզի թագաւորաց օրէն է աշխարհի խաղաղութիւն և շինութիւն հոգալ, որպէս Աստուած յիւրմէ եղելոցն նախախնամէ ամենեցուն։ իսկ սա ոչ այսպէս. այլ միշտ ու-

<sup>1</sup> Երկ. օր. զամենայն։

<sup>2</sup> Երեք օր. կոտորած։

<sup>3</sup> Այլ օր. զոր եւ այժմ իսկ։

տելեաց և ըմպելեաց պարապեալ, դաղբիս մեծացուցանէր, և զգանձս, զոր 'ի հարկաց ամենայն աշխարհաց ժողովէր, զոր պարտէր 'ի պէտս հեծելոց բաշխել և բազմացուցանել հեծելազօրս ընդդէմ թշնամեաց՝ որ զաշխարհս 'ի խաղաղութեան կարէին պահել յաղթելով թշնամեացն, որպէս առնէր երանելին վասիլ յիսուն ամ թագաւորեալ, ոչ ոք 'ի թշնամեաց համարձակեցաւ յաշխարհն նորա մտանել, իսկ սա զգանձսն զոր ժողովէր, 'ի բողից ծախսն վճարէր և ոչինչ ցաւէր նմա աշխարհի աւերումն. քանզի այնքան պոռնիկ և բոզասէր էր՝ մինչզի կոստանդնուպօլսոյ կանամբքն չյագեցաւ, այլ 'ի հեռաւոր աշխարհաց տայր ածել կանայս, և զօրն ամենայն նոքօք վարսնէր: Վասն որոյ համարձակեալ թշնամեացն որպէս գայլք քաղցեալք որք յորժամ գտանեն զհօտն առանց պահապանի՝ յանինայ կոտորեն, նոյնպէս և 'ի սորա ժամանակս եղել յարելից և յարևմտից առհասարակ կործանումն քրիստոնէից, զոր 'ի վերոյ փոքր 'ի շատէ նշանակեցաք: Եւ սա այսպիսի գնացիւք վարեալ գկեանս իւր՝ վախճանեցաւ. որ թագաւորեաց ամս երեքտասան, ոչինչ բարի յիշատակաց արժանի եղեալ:

Իսկ Թէոդոռն որ էր դուստր թագաւորին կոստանդեայ, կալաւ զթագաւորութիւնն իբրև զիւր սեպհական ժառանգութիւն հայրենի՝ որում

"չ ոք կարասցէ 'ի վերայ յառնել: Առ որ առաքէ Սուլտանն տաճկաց՝ դեսպան, և զրէ առ նա հրովարտակ, որ ունէր օրինակ զայս. եթէ կամ տուր զքաղաքս և զգաւառս ինձ, զոր նախնիքն քո տարեալ են 'ի տաճկաց, կամ տուր յամենայն աւուր հազար դահնեկան: Իսկ նորա տուեալ ձիս և ջորիս սպիտակամազս, և բազում գանձս և հանդերձս ծիրանիս ևս առաքեաց նմա: Իսկ նորա վեր 'ի վերոյ ընկալեալ՝ զտարօղ գանձին առ իւր արգել, ճանապարհ առնելով նովաւ յաշխարհն Բաբելացւոց. և էր թուականիս մերոյ ամք հինգհարիւր չորս:

Եւ 'ի սոյն ամի ելին Պարսից զօրքն յանուն Սուլտանայ, բայց ասեն թէ Սպուտարայ էին. պյն որ զԴուրին և զԳանձակ ունէր, և էր վեսայ թագաւորին Հայոց Աշոտոյ, որք ելեալ էին յաշխարհն Հայոց: Յորոց հինէ՝ մարդաբնակ տեղիքն փախուցեալ՝ 'ի քաղաքն Սնի ժողովեցան, և ոչ ժամանեալ ամենեցուն 'ի ներքս մտանել, քանզի երեկոյացաւ ժամն և ածին զդրունս քաղաքին: Իսկ զօրքն Պարսից զիշերապնաց եղեալ, կալանզուուն քաղաքին, և սուր 'ի վերայ եղեալ՝ անհնարին կոտորուածս առնէին, որում ոչ ոք գոյր օդնական. զորոց առեալ զառ և զգերի, գնացին յաշխարհն իւրեանց:

Իսկ 'ի կողմանս Տարօնոյ Թէոդոռոս որդի Ահարոնի, զոր Աւանն կոչէին ըստ իւրեանց լե-

զուին, զգիրն պակաս <sup>1</sup> ունելով, որ նա էր իշխան գաւառին. առ որ եկեալ գունդ մի 'ի Թուրքաստանէ՝ հնազանդեցան նմա, և կամեցան զմիամտութիւն ցուցանել. մտեալ 'ի գաւառն Խլաթայ և առեալ աւար բազում, ածին 'ի Տարօն: Խսկ ժողովեալ զօրք 'ի Պարսից և 'ի Թուրքաստանէ յղեցին առ Թէոդորոսն՝ թէ կամ տուր զապստամբադ 'ի մեզ, կամ թէ ոչ զերկիրդ գերի տանիմք: Որում ոչ առեալ յանձն, յետ որոյ եկեալ ճակատեցան ընդ միմեանս երկիցս և երիցս, և բազում արութիւնս ցուցեալ իշխանին, յետոյ կարեվէր խոցեալ՝ յետ սակաւ աւուրց վախճանեցաւ. որ յոյժ ապաշաւանաց արժանի էր նորա վախճանն. մանուկ հասակաւ և գեղեցկաշուք կերպարանօք զԴաւթի մարգարէին ունելով զնմանութիւն, և քաջութեամբ առաւել քան զբազումս, որ տարաժամ բարձաւ 'ի միջոյ:

Խսկ 'ի գալ ձմերանին, յաւուրս աստուածայայտնութեան տօնին՝ գիշերագնաց եղեալ զօրք անօրինացն, և եկեալ 'ի քաղաքագիւղն Հարքայ որ կոչի Մանկան գոմ, և կալեալ զնոսա անհաւատքն, գեռ նոքա զգիշերական պաշտօնն կատարէին, սուր 'ի վերայ եղեալ կոտորեցին զամենեսեան, և որ շուրջ զնովաւ գիւղք և ադարակք էին. և առեալ զգերի և զաւար, չոգան 'ի գեօդն Արածանի, քանզի ընդ այն խսկ անցաւ

1 Այլք. ունել:

նէին: Եւ հանեալ 'ի վերայ պաղին զառն և զգերին, յանկարծակի հատեալ պաղին, զորս 'ի վերայ կային՝ զամենեսեան ընդ իւրեաւ ծածկեաց:

Ով քանի դառն է պատմութիւնս և ողբոց արժանի. այլ թերես ոք մեղադիր լինիցի մեզ, թէ մինչև ցԵրը զվշտաց և զնեղութեանց արկանես առաջի մեր զրոյցս: <sup>1</sup> Մարգարէքն քանի սպառնական բանս մարգարէանային, որ յետ ժամանակաց լինելոց էր. ժողովուրդն ընդ այն զժկամակս լինէին. խսկ ես ոչ թէ սպառնալեաց եմ քարոզ, այլ զեղեալ և զգլուխ ելեալ իրս պատմեմ. որպէս զի ամենեցուն՝ որք լսիցեն, շարժեցից արտասուս թէ որքան դառն ժամանակի հանդիպեցաք. կարծական եղկ մեզ այս կեանքս: Եթէ մեղք հարցն մերոց ընդ մեզ եւլն, որպէս մարգարէն ողբալով զիւրոցն ամբաստանէր, ապա աւաղ է մեզ որ մեք զպարտիս հարցն մերոց վճարեմք: Եւ ուր է այն զոր Աստուած ընդ Եղեկիելի խօսելով ասէր. «Որպէ մարդոյ զինչ է առակդ այդ զոր ասեն 'ի մէջ իսրայելի, թէ հարքն ազոխ կերան, և որդւոցն ատամունքն առին: Կենդանի եմ ես, ասէ տէր, եթէ լինիցի առակդ այդ 'ի մէջ իսրայելի. զի ամենայն անձինք իմ են, որպէս անձն հօր նոյնպէս և անձն որդւոյ», և որ 'ի կարգին. և ազաւ

1 Երկու օր. Ասեմ. մարգարէքն:

տեաց զորդի ՚ի պարտուց հօր: Եւ եթէ վասն մերոց չարեաց եկին այս ամենայն ՚ի վերայ մեր, ապա ողորմելի եմք քան զամենայն մարդիկ. աշխարհ ամենայն ՚ի խաղաղութեան բնակէ, և մեք գերիք և կալանաւորք, սրակոտորք և տնաւերք, և յընչից կողոպատածք:

Չորք աթոռք թագաւորութեան ունէր Հայք, թող<sup>1</sup> թէ զկիւրապաղատին իշխանութիւն, և զոր ՚ի հուսուց: Եւ հայրապետութիւն մեծ և նախանձելի ամենայն ազգաց. և վարդապետք<sup>2</sup> ճշմարտախօսք, հանգոյն առաջին վարդապետացն՝ ՚ի խորս գիտութեան հասեալք. յորոց բանից ամենայն փաղանգք հերձուածողացն կորակնեալք և ընդ գետին մտեալք, ոչ կարէին ՚ի փարախ հօտի հաւատացելոց մտանել. քանզի և գոնապանն ոչ ընդունէր զնոսա, որ ճանաչէ զիւրսն և ճանաչի յիւրոցն: Եւ եկեղեցիք մեր իբրև զնորահարսն զարդարեալ ամենայն վայելչութեամբ առ ՚ի հաճել զկամս անմահ փեսային. և նորածին մանկունք յանախտ արգանգէ մօրս մերոյ Սառայի իբրև զձազս աղաւնեաց երամացեալք կուկորդալիք ձայնիւ զիրեշտակական երգէին զերգս:

Երդ՝ եկ և տես զչար և զառանց մխիթարութեան զփոխարէնն զոր ընկալաք: Ո՞ւր թագաւորացն աթոռք, ահա ոչ երեխ. ուր զօրացն

<sup>1</sup> Երկ. օր. զի ՚ի կիւրապաղատին իշխանութենէն: <sup>2</sup> Երկու օր. ճարտարախօս:

բազմութիւն որ իբրև զամպս խտացեալ առաջի նոցա, զօրէն գարնանաբոյս ծաղկանց գունակ գունակ հանգերձիւք փայլէին. ահա ոչ են, և ոչ ևս երեխն. ուր հայրապետական աթոռն մեծ և հրաշալին զոր երանելի այրն Աստուծոյ մեծն Գրիգորիոս իջեալ ՚ի խորութիւն վիրապին՝ քըրտնալիք աշխատութեամբ զհնգետասան ամ փորձեաց, և ՚ի վերայ առաքելական աթոռոյն եղ զաթոռ իւր. այսօր տեսանի թափուր, դատարկ ՚ի բնակչաց, մերկ ՚ի գարգուց, փոշով և սարդիկուայնիւ լցեալ, և ժառանգ աթոռոյն յօտար աշխարհ հեռացեալ իբրև զգերի և զկալանաւոր: Վարդապետաց ձայնք և քարոզութիւնք լւեալք. և հերձուածողաց դասք, որ առ նորօք իբրև ծակամուտ մկունս այսր անդր թարչէին հալածեալք ՚ի նոցա աստուածաբանական բանիցն և յուղղադաւան խոստովանութենէն, այսօր իբրև առիւծունս հզօրեղապէս աներկիւդ ելանեն ՚ի խշտից բերանաբաց՝ թէ զն կլանիցեն յանձանց անմեղաց: Զինչ տացից և վասն եկեղեցոյ, որ յառաջն այնպէս զարդարուն էր և վայելուչ, բազմածնունդ<sup>1</sup> գերերջանիկ. որ և զմարդարէն<sup>2</sup> ՚ի հիացումն շարժեաց. իսկ այսօր նստի անշուք, անզարդ, մերկացեալ յամենայն գեղեցկութեանց իբրև զկին մի այրի անորդի, մերկացեալ ՚ի զար-

<sup>1</sup> Մի օր. եւ երջանիկ:

<sup>2</sup> Մի օր. ՚ի զարմացումն. այլ օր. բարկացումն:

դուց, անկեալ՝ ի պատուոյ, պատառատուն հանգերձիւ նստեալ առանց մխիթարի. այնպէս և աստ տեսանի. ջահք շիջեալք, ճրագունք անցեալք, խնկոց բուրմունք և անուշահոսութիւնք սպառեալք, պսակ տէրունական սեղանոյն փոշով և մոխրով ծածկեալ: Զառ ՚ի սմանէ մանկունս է տեսանել, որ ՚ի զրունս սորա ընակիտ ՚ի ձեռս առեալ զգաւթական երգս երգէին, այսօր ՚ի դուրս գիւտաքնակ կաղաղանացն՝ զոր մզկիթն կոչեն, անդր կաքաւեն ուսանելով զմահմետաւանդ զասացեալսն: Նաև կանայք պարկեշտք և ողջախոհք՝ որ զօրինաւոր ամուսնութիւնն յարանց իւրեանց մեծ թախանձանօք ընդունէին, այսօր յանառակ և այլանդակ խառնակութիւն սովորեալք են: Արդ եթէ այս ամենայն զոր պատմեցաք, վասն մեր չարեացն ենաս ՚ի վերայ մեր, ձայն տուք երկնի և որ ՚ի նմա և որ ՚ի վերայ նորա. ձայն տուք երկրի և որ ՚ի նմա կենդանիք. ձայն տուք լերանց և բլրոց, ծառոց և անտառախիտ մայրեաց, թող լան և ողբան զմեր կործանումն: Զայս և մարգարէքն առնէին ՚ի յուրախութիւնսն. լերանց և բլրոց խայտալ հրամայէին, և գետոց ծափս հարկանել և ծովու գուարճանալ և մայրից ցնծալ. քանզի սոքա ամենեքին համատոնմք են մեր, յուրախութիւնս մեր ուրախակից մեզ լինին, պարտին և սպոյն հաղորդիլ. զոր օրինակ և յառաջինսն խոնարհեցան ընդ մեզ յաւուր խո-

նարհութեան և տառապանաց մերոց, զի վասն մեր իսկ եղեն: Բայց և այս չէ մեզ օգուտ ՚ի մխիթարութիւն, զի գմեռեալ՝ թէպէտ բագում ժամանակ լան և կոծեն և ՚ի խաւարի վակին, չըերէ ինչ նմա օգուտ. զի՞նչ եղել օգուտ հրէիցն՝ երեմիայի լացն, և Քրիստոսինն՝ երուսաղեմի կամ Յուդային. ասա ինձ. և ոչինչ, վասն որոյ դայս գիւտելով, պարտիմք յանձանց ուղղութենէ հաշտեցուցանել զԱստուած. զի թէ այս յարդարիցի, և թշնամեաց սուրն պակասի ի սպառ, և դժուարինքն մեզ ՚ի գիւրինս փոխի, և առապարքն ՚ի հարթ ճանապարհ. և տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ: Զի թէ Աստուած՝ ՚ի մեր կոյս լինիցի, ով կարիցէ կալ մեզ հակառակ. քանզի ինքն յօրէնսն հրամայեաց, թէ «Թշնամեաց քոց թշնամի եղեց, և զատելիս քոստակեցից». և դարձեալ, թէ «Ոչ թողից զքեղ և ոչ ընդ վայր հարից». միայն թէ ընդ Աստուած խաղաղութիւն ունիցիմք, և առ նա սրտի մտօք կարդայցեմք՝ զգործս բարիս ՚ի միջի զրաւական ունելով, չիք ինչ ՚ի հակառակացն որ զմեզ տըրամեցուցանել կարիցէ: Տէրունի է և այս զոր յեսայիայ զամանեմք ՚ի գիրսն, թէ «Մինչչե իցէ քո կարգացեալ, ես լուայց քեզ. և մինչդեռ խօսեացիս, ասացից եթէ զի՞նչ խնդրես», որ ընդ ամենայն<sup>1</sup> ջերմագութ հարամք անցանէ այս 1 Յօր. միոււմ. չերմագոյն հարմագը:

բան։ Իսկ յանարժանիցն ձեռնթափ լինի առելով. «Ոչ եղիցի անձն իմ ընդ նոսա»։ և դարձեալ, «Իցէ զի կարգայցէք առ իս, և ես ոչ լուայց ձեզ. խնդրեացեն զիս չարք, և ոչ գտցեն»։ և դարձեալ. «Յորժամ համբառնայցէք զձեռս ձեր՝ի վեր, դարձուցից զերեսս իմ՝ի ձէնջ. և եթէ յաճախիցէք յազօթս, ոչ լուայց ձեզ»։ քանզի զի՞նչ հազորդութիւն է լուսոյ ընդ խաւարի։

Երկիցնոք եղբարք և ակն ածեսցուք<sup>1</sup> յերկնակողման պատգամացս. մի՛ լիցուք յանձանօթից նորա, զի մի՛ ասիցէ, թէ Ոչ ճանաչեմ զձեզ. այլ լիցուք՝ի բարեկամաց կարգի նորա, զի ասիցէ ցմեզ. Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանդեցէք զանպատում զկեանսն։

### ԳԼՈՒԽ ԺԸ.

ԹԱԴԱՀՈՐՈՒԹԻՒՆ ԹԷՌԴՈՍԻՆ ՈՐ ԹԱՐԳՄԱՆԻ<sup>2</sup>  
ԱՍՏՈՒԾԾԱՏՈՒՐ։

Յետ մահուանն Մոնոմախին, մոնչեալ առիւծաբար գագանութեամբ մատակ առիւծն՝ի խշտիս իւր, այն որ յառաջ ցուցաւ Դանիէլի՝ի տեսողութեան իւրում, և կոչեալ զգլխաւորս քաշզին, և զմեծամեծս յիշխանացն, առէ ցնոսաւ.

1 Մի օր. երկնային կոչման։

2 Եյլ օր. զգողողն։

Թէ ոք՝ի ձէնջ վստահանայ ելանել զօրօք յարեւելս, և՝ դադարեցուցանել<sup>2</sup> զգողն Պարսից, և նուաճել զաշխարհս՝ի խաղաղութիւն, յայնժամ թնդ համարձակ գայ նստի թագաւորութեան. Իսկ թէ ոք չառնու յանձն զասացեալս, տեղապահ ես բաւական եմ։ Զայս լուեալ իշխանացն, գնացին առանց պատասխանի տալոյ յիւրաքանչիւր<sup>3</sup> պալատ։

Իսկ թագուհւոյն զՍուլտանն իւրե զքաղցեալ գազան՝ տրոց առատութեամբ յագեցուցեալ, մինչզի մոռանալ նմա զ՝ի վերայ մեր զյառնութմն. այլ անդրէն՝ի Բաբելոն և որ զնովաւ կողմամբքն յուղէր զմարտն. քանզի յոյժ պատերազմանէր էր այրն. Բայց որ մերս էին սահմանակիցք և զրացիք՝ խանձեալ, ոչ դադարեցին զամառն և զձմեռն յապականելոյ զաշխարհս Հայոց. քանզի դիտօք որոնէին, և ուր լսէին զմարդաբնակ տեղեաց, վիշերագնաց եղեալ՝ յանկարծուստ՝ի վերայ անկանէին, և նորանշան հարուածովք անողորմաբար զամենեսեան առհասարակ սատակէին. և անհողացեալ յերկիւղից՝ բազում աւուրս առնէին

1 Մի օր. դարձուցանել։

2 Եյլ օր. զգողողն։

3 Յամենայն օրինակս զբայալթ.՝ի միումն զբայալթ այն է տեղիս. Եւ մին և եթ սրբագրեալ ունէր՝ի պատու.

'ի տեղւոջն, մինչև խիլ արկեալ տանցն, եթէ ուրուք կայր ինչ 'ի թաքստեան՝ զամենն հաւնեալ, և բնաբարձ աւերմամբ քանդեալ զվայրն, առեալ զառ և զգերի՝ յաշխարհն իւրեանց դառնային:

Եւ քանդի աւան մի էր 'ի գաւառին Բասենոյ՝ մերձ առ ստորոտով լերինն որ կոչի Ծիրանիս, և անուն նորա Օկոմի, մարդաշատ և ընչաւէտ. յորոյ վերայ գիշերագնաց եղեալ անօրինացն յաւուր մեծի աստուածայայտնութեան տօնին, և քանդի 'ի սաստիկ սատնամանեացն դաշտին՝<sup>1</sup> բրտացեալ էին ձեռք և ոտք մարդագէմ գաղանացն, որք յորժամ հասին մօտ 'ի շէնն, գտին խոտ բաղում 'ի գարմանս անամոց գիշեալք, որում հուր հարեալ, և 'ի հրատին բորբոքմանէ տոհասարակ դաշտն ամենայն իբրև միշջօրէիւ լուսաւորեցաւ. առ որ կացեալք ջեռան ինքեանք և երիվարք իւրեանց: Եւ ապա լարեալ զաղեղունսն և մերկացուցեալ զզէնսն՝ յարձակեցան 'ի վերայ շինին, հեշտացեալք իբրև յամարայնի, և սուր 'ի վերայ եղեալ կոտորեցին առ հասարակ զամենեսեան ողիս իբրև երեսուն հաշզար, ոչ մնալով 'ի բնակչաց տեղւոյն և ոչ մի, բայց թէ 'ի ճանապարհի ուրեք ոք կայր: Եւ արբարեալ 'ի տեղւոջն աւուրս երիս, և բարձեալ եղաց և իշոց և ձիոց զամբարս ցորենոյ և զմլ՝

<sup>1</sup> Երկու օր. ցրտացեալ:

թերս ընչից, և սակաւ ինչ 'ի պիտանեաց, զորս առեալ գերի, գնացին յաշխարհն իւրեանց: Այլ<sup>1</sup> զբազմագէմ չարիսն, զորս նոքա անդ գործեցին ընդ գրով ով կարիցէ արկանել. և այսպիսի ձեռնարկութեամբ ամայացաւ 'ի բնակչացն երկիրս ամենայն, ոչ մնալով կենդանի՝ բայց եթէ յամը լոց ուրեք:

Իսկ թագուհւոյն կալեալ զթագաւորութիւնն ամս երկուս, և հասեալ 'ի խորին ծերութիւնն, հիւանդացաւ զհիւանդութիւն, որով և մեռաւ իսկ. որում եկեալ առաջի գլխաւորք քաղաքին՝ ինդրեն, թէ Մինչդեռ կենդանի ես, կացն զոք թագաւոր, որպէս զի մնացէ առանց խռովութեան քաղաքս: Որում հաւանեալ թագուհւոյն, հրամայէ զոմն ածել 'ի գլխաւորաց քաղաքին՝ Միխայէլ անուն, որ իւր հարանցն ժամանակաւ լեալ էր 'ի պաշտօնէից պալատանն, այր հասկաւ խնարճեալ յալիս, և ընչաւէտ յոյժ. և կացուցանէ զնա թագաւոր հաւանութեամբ քաղաքին. և ինքն զինի երից աւուրց չոգաւ<sup>2</sup> զհանապարհ ամենայն երկրի, ուր 'ի միասին թագաւորք և անանկք ըստ գաւթական երգոյն: Իսկ եշխանք աշխարհաց մեծամեծք և փոքունք յորժամ լուսն զնորա թագաւորելն, եկին ամենեքին նմա 'ի ճնազանդութիւն: Եւ զոր պարտ էր

<sup>2</sup> Երկու օր. զբազում:

<sup>1</sup> Մի օր. զկնի . . որք 'ի միասին են . . դաւթեան:

նմա ողոքական բանիւք և պարզեցաց առատութեամբ զամենեսեան ուրախ առնել, և ընդ ինքեան իշխանութեամբ՝ ՚ի հնագանդութիւն նուաճել. իսկ նա չմարդի գոլով՝ զմոբովամուն ախտացեալ, զոմանս յիշխանաց պահէք՝ անարժան դոլ իշխանութեանն. իսկ ընդ մեծամեծան առենախօս եղեալ, առէ. կամ ելէք ընդդէմ Պարսից՝ ՚ի պատերազմ, և մի տայք զերկիր ապականել. կամ թէ ոչ, զձեր հոռոգն հարկեցից Պարսից, և պահեցից զաշխարհս՝ ՚ի խաղաղութեան: Որում ոչ հաւանեալ իշխանացն՝ ելին առանց պատասխանոյ յերեսաց թագաւորին, և միաբանութեամբ դաշն արարեալ՝ անցին ընդ ծովին, և ժողովեցան զօրք բազումք, որոց ոչ գոյր թիւ: Որոց առաջնորդք էին Կոմիանոսն որ և թագաւորեացն իսկ և Կոմինասն. և աղստամբեալք՝ ՚ի թագաւորէն երդմամբ չափ ոչ հնագանդել նորա թագաւորութեանն: Եւ այս եղե ՚ի հինգհարիւք վեց թուականիս մերոյ, յորում Հոռոմ դիքտիոնի էր տասն:

Վայ տարւոյն, վայ աշխարհաւեր խորհրդոյն, յորում կործանեալ ապականեցան բնակիչք երկիր. քանզի դարձաւ յառաջին անզարդութիւնն ըստ աշխարհապատում բանին. և երկիր, առէ, էր ամայի և անպատճաստ. վասն զի մարդ չէր որ դործէր զերկիր»: Զի զոր օրինակ զեղեցիկ դէմք առն՝ ՚ի ծաղկի հասակի սիրուն և ցանկալի տե-

սողացն ցուցանի, իսկ յորժամ զարդարիչ հոգին մահուամբ բաժանի ՚ի նմանէ, յառաջին պայծառ և զեղեցիկ զարդուցն ահարկելի և անշուք ցուցանի տեսողացն, նաև գութն ընդ նմա հատանի. ըստ այնմ, թէ «Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ՚ի սրտէ. ըստ նմին օրինակի<sup>1</sup> զերկիր է տեսանել. զի յորժամ մարդաբնակ շինութեամբ հարստանայ, յայնժամ երկրագործք առատութեամբ<sup>2</sup> սերմամբ զանդաստանս լնուն. որք յորժամ բուսանին, կանաչագեղ տեսլեամբ զվայրոն վայելչացուցանեն, և բարձրաբերձ աճմամբ՝ ՚ի վեր ընձիւղին. և յորժամ զհասկիցն զկերպարանս՝ ՚ի գագաթունսն երկեցուցանեն, յայնժամ թանձրախիտ բարձրութեամբն ամպաձև տեսողացն ցուցանի, և ՚ի քաղցրաշունչ օդոյն՝ ճօճի, ճեմի զօրէն ծովային ալեաց. այսպէս և հօտք անդէից արօտականաց ՚ի հովիտս դալարեր բուսոց առ ցուրտ աղբերակամբք խայտան խաղան, և երկիր իբրև զդայեակ՝ զեղեցիկ դիմօք զարդարի նոքօք, ըստ այնմ, եթէ «Յնծացեն դաշտք, և ամենայն որ է ՚ի նոսա:

Իսկ այժմ զնորին հակառակն տեսանեմք. երկիր աւերակ, թափուր՝ ՚ի բնակչաց. քաղաքք կործանեալք, և անդաստանք խոպանացեալք և վշագբերք, ահագին և զարհուրելի անցաւորացն

<sup>1</sup> Մի օր. երեւի ցուցանի:

<sup>2</sup> Մի օր, սերման:

ցուցանի: Նաև քաղցրաձայն հաւուց տարմք, որք մարդասէր բարոյիւք ընտանի գոլով մերային աղինս, որ քաղցրանուագ եղանակօք դվայրսն հնչեցուցանեն, և յառաւօտինսն ճռուական երգովք և բարձրաձայն<sup>1</sup> կարկաչիւք զերկրագործն ՚ի քնոյն դանդաղանաց իրրև խթանաւ զարթուցեալ, իւրաքանչիւր արուեստից պատրաստաբար յարդարէին. բայց այժմ շնչք աւերակք և ամայիք և անմարդիք, և նոցա ոչ գոյր տեղի բնակութեան. զի ուր տառեղունքն բոյն կառուցանեն, և ուր տկարք ՚ի թոշնոց ՚ի նոսա ապաւինին ըստ սաղմոսին ձայնի. և կամ Շւր ծիծառն զիւր վարանից բունիկն յարդարէ՝ աներկիւր սնուցանել զառ ՚ի յինքենէ ծնեալսն: Արդ այս աստանօր զտեղի կալցէ բանս. մեք ՚ի զլիսոյն սկզբն արասցուք դժուարալուր և չար պատմութեանս:

Արդ յորժամ յերկուս բաժանեցաւ տունն Յունաց, և գաւազանն երկաթի՝ գաւազան եղեգնեայ ջախջախ եղև, զոր Ասորեսաանեայն զեղիպացւոց թագաւորութիւնն նախատելով՝ այսպէս անուանէր. և կաթսայն որ Երեմիայի յեռանդն ցուցաւ՝ որ ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւ ձգէր յայնժամ զյնցուզս եռանդեանն, այժմ ՚ի հարաւոյ ՚ի հիւսիսի ահազին եռանդեամբ, և կիզեալ ապականեաց զազգս քրիստոնէից: Քանզի ըստ

1 Երկու օր. կարկաչանօր. այլ օր. կարկանձիւր:

տէրունի հրամանին՝ թագաւորութիւն բաժանեալ ոչ կարէ կալ, այլ կործանեալ է, արդարկ եղեիսկ. քանզի յորժամ Պարսիկք գիտացին զսոցամարտ և գհակառակութիւնս առ միմեանս, համարձակապէս ելին ՚ի վերայ մեր անդադար երթևեկս առնելով,<sup>1</sup> տարաւ յանդ զաշխարհաւեր կործանումն:

Արդ ՚ի սկսանել տարւոյն, զորոյ զյիշատակն վայիւ արարաք, և նոքա իբրև զգայլս գիշախանձս՝ որք հանդիպին հօտի՝ որոյ ոչ գուցէ հովիւ, զի ոչ թէ իւրեանց կերովն միայն շատանան կոտորել,<sup>2</sup> այլ զամենայն ջանան: Նոյնպէս և ՚ի Պարսից եկեալ զօրքն՝ ոչ թէ աւարաւ յագենային, այլ անյագ քաղց մերոյ սատակմանն ունէին. զի զոր աչօք տեսանէին, անհնար էր նմա ՚ի ձեռաց նոցա պըծանիլ, մեծ բարեգործութիւն հաշուելով զայն.

Արդ ՚ի լինել մարտին չոռոմոց, որդի Լիպարտին իւվանէ անուն, որում տուեալ էին ՚ի պարգևի՝ տեղիս բնակութեան զմեծ աւանն երիզայ ՚ի գաւառին ջաշտենից, և որ շուրջ զնովվաւ դաստակերաք, սա իբրև լուաւ զայն՝ թէ թագաւորութիւնն յերկուս բաժանեալ է, զնաց և խաբանօք էառ զամուրն Եղանց բերդ կոչեցեար և

1 Մի օր. տարեաւ յանզեալ. միւսն, տարաւ յանզեալ:

2 Յերկ. օր. պակասի, այլ զամենայն ջանան:

արարեալ զայն ընդ իւրով ձեռամբ՝ դառնայ անգրէն՝ ի գաւառն Աղորի, և յամուրն որ կոչի Հաւածիչ. և բարեկամաբար ել քաղաքն ընդ առաջնորա. և դատաւորն որ ունէր զհոգս արհելից՝ որ յանժամ անդ հանդիեցաւ, զոր իրեկ ետես՝ վաղվաղակի ունել հրամայեաց. և առեալ ի նմանէ դանձ անշափ, և ձիս և չորիս և գամենայն զոր ինչ և նա յարելից ժողովեալ էր, և զինքն եդ ՚ի յԵղնուան՝ ի բանտի. և ինքն փոյթ ընդ փոյթ չոգաւ ՚ի վերայ ամուր քաղաքին կարնոյ: Եւ առժամ մի ջանայր խաբանօք, ասելով թէ ՚ի թաղաւորէն հրաման ունիմ, իմ է քաղաքդ, բացէք զգրունս, զի մտից: Եւ իրեկ այնու ոչ կարաց հնազանդեցուցանել, ապա մարտ եղեալ պատերազմաւ կամէր տիրել քաղաքին. իսկ որ քաղաքին իշխանն էր, վաղվաղակի ծանուցանէր իշխանին որ նստէր յԱնի, և ունէր զողատիւ մագիստրոսութեան. որ իրեկ լուաւ, զմի ՚ի զիստ ւորացն հանդերձ զօրու առաքեաց ՚ի վերայ նորա: Իսկ նա իրեկ ծանեաւ զայն, ասպատակաւ առ զերկիրն և դարձաւ ՚ի տեղի իւր. և առաքեաց ՚ի Պարսիկս բերել զօրս յօդնականութիւն իւր. այս եղեւ սկիզբն անհնարին չարեացս որ անց ընդ մեզ:

Զոր իրեկ լուան անօրինաց ժողովքն զհրաւէրն, ձայն տուեալ միմեանց, առժամայն ՚ի մի վայր եկեալ, փութապէս առ նա հասանէին. իսկ

նա իրեկ ետես զբազմութիւն զօրացն, զահի հարաւ. և քանզի ոչ գոյր հակառակ ոք, քանզի իշխանն այն՝ յորոյ պատճառս նոքա եկին, յորժամ զիսօշիւն առ զնոցա զալոյն, մտեալ ՚ի մեծ ամուրն, ամբանայ: Յանժամ եկեալ զօրքն ասեն. մեզ ճանապարհ ցոյց աւարի<sup>1</sup>, զմեզ դատարկ մի դարձուցաներ. իսկ նա անճարեալ, տայ նոցա առաջնորդ յիւրայնոցն, որք եկեալ ՚ի զիշերագնաց եղեալ ընդ անապատ վայրս, հասին ՚ի վերայ գաւառին Խաղտեաց. և յանհոգս կալեալ զնոսա, ըստ իւրեանց արիւնարբու բարուցն, որոց պատահեցան՝<sup>2</sup> զարսն զամենայն սրակուոր արարին մինչև ՚ի Խրթի անտառն Ճանէթոյ. և արարեալ անշափ առ և գերի, դարձան մեծաւ յաղթութեամբ. և եկեալ առ չարեաց առաջնորդն՝ մեծատուր պարբեսօք շնորհակալիս մատուցին նմա վասն ճանապարհի յաջողութեանն որ պատահեաց նոցա. և ապա զնացին յաշխարհն իւրեանց: Եւ քանզի տեսին զերկիրն անտէրունչ և տոանց պահապանի, վասն այսորիկ հուզ ընդ հուզ գարձ արարեալ ելին ՚ի նոյն՝ չարին արբանեակք. և իջեալ ՚ի գաւառն Մանանազու, բաժանեցան յերկուս: Մի բաժինն չոգաւ ՚ի յեկեղեաց, և անկեալ զիշերայն ՚ի վերայ քաղաքին որ ՚ի նմա, և զոր ՚ի նմա գտին անպատրաստ և առանց

<sup>1</sup> Երկ. օր. առանի:

<sup>2</sup> Երկ. օր. զօրսն:

զգուշանալոյ. զորոյ զաղետաւոր և զողորմագին չարեացն չեմ բաւական ընդ զբով արկանել. զի՞ լուսանալ առաւօտուն՝ լալազին էր տեսանել տեսութիւն լի խոռվութեամբ, որ և զքարինս անդամ և զանշունչ արարածս բաւական էր յողբո՞ հառաջանաց շարժել. զի՞ ոյր ուրուք ՚ի տեսուղացն ոչ բեկանէր սիրան, և ոչ զդողի հարկանէր անձն, և ոչ խաւարամած միզաւ մթանայր լուսարանք երեսացն. զհրապարակո լի դիակամբք տեսանել, և զտունս և զընդարձակ որահս և զնրափողոց և զցանզս այգեաց. և գրեթէ ամենայն սահմանք քաղաքին ներկեալ էր արեամբ կոտորելոցն. ուր և զբազումս զեռ ՚ի հոգիս էր տեսանել, հատեալս ՚ի ձայնէ դժուարապէս շընչելով, և զայլս անողորմաբար չարաչար վիրաւորեալս. զկիսոցն զփորոտիսն հեղեալ և զլեարդն հանեալ և ՚ի բերանն եղեալ, էր զի կենդանւոյն իսկ ուտել բոնադատէին: Ո՞վ քո, Աստուած, յայնժամ ներողութեանդ. ով մերոյ չարեաց՞ առաւելութեան. զի այս երեքտասան ամ է որ զայսպիսի անհանդուրժական կիրս կրեն ազդ քրիստոնէից, և չշիջաւ սրտմառութիւն բարկութեան տեառն. այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է՝ լի բաժակաւ յանապակ գինուոյ արբուցումն չար: Ոչ ևս ՚ի ներումն և յողորմութիւն, այլ ՚ի հասուցումն ատելեաց. այսոքիւք պաշարեալ զքարաքն և որ շուրջ զնու-

վաւ զիւղք և ագարակք. մինչև չմնալ կենդանւոյ ուրուք ՚ի մարդկանէ, բայց եթէ յամուրս ուրեք: Իսկ անօրինացն լցեալք և յագեցեալք աւարաւն, հուր հարեալ քաղաքին, առեալ զգերի և զկապուտ գաւառին, գարձան անդրէն: Այսոքիկ վըշտամբեր պատմութիւնք քո, ով քաղաք, ոչ ևս քաղաք ապաստանի, այլ խորխորապտ կորստեան ՚ի քեզ բնակողացն, ՚ի բազմազինի չարեացն սակաւ ինչ նշանակեալք:

Եւ եկեալ անօրինացն՝ հասեալք ՚ի գաւառն կարնոյ մերձ՝ ՚ի զիւղն որ կոչի Բլուրս, և քանզի բնակիչք տեղույն շընապատեալ պարսպաւ զբըլուրն՝ ՚ի վերայ հողոյ եղին զհիմունս նորա, ըստ տէրունական տուակին, վասն որոյ ՚ի գալ անօրինացն զօրէն յորդեռանդն հեղեղի, ՚ի բախեն զնայ ոչ կարաց վայրկեան մի կալ ընդդէմ, այլ վաղվաղակի կործանեցաւ, և եղեւ կործանումն նորա աշխարհալուր և անմոռաց մինչև ՚ի կատարած յաւիտենից: Արդ զոր նոքա յոյս փրկանաց և տեղի ապաւինի կարծէին, եղեւ նոցա գուրք ապականութեան. և քանզի որ յայս կոյս գետոյն եփրատայ էին զեօղք և կրօնաստանք, ամենեքեան անդ էին հաւաքեալք, այլև յԱրծինն աւանէ բազումք, յորոց վերայ հասեալ թշնամեացն՝ առժամացն առակեցին զամուրս նորա, և մտեալ ՚ի ներքո՞ ՚ի փայլուն սուսերացն և ՚ի ձայնէ լարից աղեղանցն, զդողի հարեալ ամենեցուն յերկիւ-

դէն՝ իբրև շղթայիւք կապեալ եղեն։ Եւ քանզի ոչ գոյր իշխան և առաջնորդ, որ ահիւ և խրախուսանօք զնոսա յոգի զօրութեան վառէր ընդդէմ թշնամեացն, և նահատակս քաջս յորդորելով՝ որպէս օրէն է ամենայն պատերազմողաց. վասն այնորիկ անտերունչք գոլով, 'ի տեսլենէ միայն լքան, լուան, խռովեցան, սասանեցան, և ամենայն իմաստութիւն նոցա ընկլաւ. և սկսան 'ի միմեանց գողանալ զանձինս. ոմանք 'ի գալ գիշերոյն ընդ պարիսպն իշեալ՝ փախստական եղեն, և այլք կամօք անձնատուր եղեալ. իսկ որք 'ի նեքս մնացեալ, զապատերազմի հոգս թողեալ, խորափիտս փորեալ, ընդ հողով ծածկէին։ Յորոց վերայ համարձակեալ անօրինացն՝ սկսան կոտորել զնոսա, ոչ պատերազմի օրինակաւ, այլ իբրև զոչխարս արգելեալս 'ի բակի. զոմանս բուռն հարեալ և բերեալ առաջի, սուսերաւ զգլուխն հատանէին։ Կրկին մահուամբ բառնային 'ի կենաց. շողալով սուսերին 'ի վերայ՝ որ քան զման դառնագոյն է, և մահու վճռաւ. և զոմանս 'ի դիմի հարեալ սուր 'ի ձեռին ունելով, և 'ի պատահելն գտղանաբար 'ի վերայ<sup>1</sup> յարձակեալ՝ հարեալ սուսերաւն զսիրան, առժամայն սատակէին. իսկ զթանձրամարմինս և զհարստակողմն յերկիր 'ի գումա արարեալ, և պարզեալ զձեռմն 'ի ցիցս վարեալս 'ի դետինն պնդէին, և կորդեալ զմորթն եղնդամբքն հանդերձ յայսկոյս և յայն-

կոյս ընդ բազուկ և ընդ թիկունս մինչև 'ի ծայրս ձեռինս երկրորդի բոնաբար քարշեալ և հանեալ, լար աղեղամցն առնէին։ Ո՞հ. քանի՛ դառն է պատմութիւնս։

Իսկ զերիցանցն և զկրօնաւորացն որ լսելիք տանին զնորանշան չարիսն՝ զոր նոքա կրեցին. զորոց 'ի կրծիցն 'ի վեր քերթեալ զմորթս՝ տարեալ երեսօքն հանդերձ զգլխով շրջէին, և այնպիսի դառն տանջանօք տանջեալ, յետոյ ապասպանանէին. որ զի քան զայս զի՞նչ այլ ոք դառն և անհնարին տանջանս իմանայցէ, որ և 'ի սրբոց վկայութիւնս չերեի ուրեք եղեալ։

Արդ այսպիսօրէն գործով հատին սպառեցին զամենեսեան 'ի կենաց, մինչև խիլ արկեալ, և զկենդանոյն թաղեալս աշտէիւք չարաչար խոցոտելով սատակէին. որ և տանջելոցն վայիւք հնչէին առհասարակ արձագանք լերանցն, եւ յորժամ վճարեցին զամենեսեան 'ի կենաց, ապա զանկելոցն զամենեցուն զկուշտսն ծակեալ և զկեղիսն հանեալ՝ 'ի յամանս ժողովէին, գերի կանանցն զհետ իւրեանց ետուն տանել։ Այսպէս եղեկ վաղճան կործանական բանտին. այսպէս մատնեալք եղաք 'ի ձեռս արանց չարաց և անողորմից. և ոչ եղեկ մեզ այցելութիւն 'ի տեսանէ, վասն զի ոչ լուաք նմա մինչ 'ի խաղաղութեան էաք։ Նա կոչէր զմեզ աղերսական ձայնիւ 'ի ձեռն մարգարէիցն. «Եկայք, ասէ՝ լուարնեք ինձ,

և կեցցեն՝ ի բարութեան անձինք ձեր, և եթէ ախորժելով լուիջիք ինձ՝ զբարութիւնս երկրի կերիջիք»։ Մեք ապախտ արարաք զբանս նորա. վասն այնորիկ և նա ոչ լուաւ մեզ՝ ի ժամանակի նեղութեան, այլ դարձոյց զերես իւր՝ ի մէնջ. և մատնեալ եղաք՝ ի ձեռու թշնամեաց մերոց, և ատելիք մեր նեղեցին զմեզ, և արբեցաւ նետ նոցա յարեանց մերոց, և սուր նոցա եկեր զմիս անկելոց վիրաւորաց՝ արանցն պատերազմողաց ուներոց. և գնացին այսու յաղթութեամբ յաշխարհն իւրեանց. իսկ զթիւ համարոյ անկելոցն և գերեացն՝ եօթն հազար ասացին, և կըօնաւորս վաթսուն։

### ԳԼՈՒԽ ԺԹ.

ՎԱՍՆ ԱԻԵՐԱՆՍ.8 ԵՐԿՐԻՆ ՄԻԶԱԳԵՏԱ.8 ԵՒ ՈՐ ԻՆՉ  
Ի ՆՄԱ ՔԱՂԱՔՔ ԵՒ ԱՆՉԱՓ ԿՈՏՈՐԱԾԻՆ։

Այն զոր յառաջն յիշատակ արարաք՝ թէ յորժամ իջին՝ ի սահմանս Մանանաղւոյ բաժանեցան յերկուս, առաջինն զայս գործեաց զոր գրեցի. իսկ երկրորդն<sup>1</sup> ձիաթափ արագամէտ ընթացիւք ընդ Հանձէթ և ընդ Խորձանն, ոչ խոտորելով յաջ կամ յահեակ, այլ որպէս նետ ո՛ի ձեռաց աղեղնաւորին ելանէ, ուժգին ձգմամբ

<sup>1</sup> Յայլս թուի ծի սթափ։

երթեալ նպատակին հանգիպի. նոյնպէս և նոքա, ոչ աալով քուն աշաց և նինջ՝ արտևանաց, գիշերագնաց եղեալ, յանկարծակի յեղակարծումն ժամու իբրև զկարկաւտ քարախառն՝ հեղան՝ ի վերայ բնակչաց քաղաքին հարաւոյ. Եւ քանզի անպատպարան վայրս ունէր քաղաքն, վասն այնորիկ ծովային ալեաց նմանեալ բնակչացն՝ ծուփս առեալ յետ յառաջ, բայց ելս իրացն ոչ գտանէին։ Աւազ գործոցն որ յայնժամ անդք գործեցան։ Յորոց վերայ սուր եղեալ անօրինացն՝ կոտորեցին զմայր առ մանկամբ և զորգի առաջի հօր. և առժամայն եղև քաղաքն բարեշէն՝ գուբ արեան։ Եւ քանզի՝ ի սաստիկ խուճապէն, և յանկարծահաս օրհասէն մոռացեալ եղև սէր սիրելեաց և գութ արեան, իւրաքանչիւր ոք հնարէր հայթայթանս գտանել՝ զի թերևս կարիցէ ապրեցուցանել զինքն՝ ի գեճենաբորբոք բարկութենէն. վասն որոյ փախստական եղեալ՝ ի յայգիմն՝ որ շուրջ զքաղաքաւն էին, յայնս անկեալ ընդ աերեսախիա որթովքն թաքչէին. որոք ծանուցեալ անօրինաց, խոյզ արկեալ, աշտէիւք խոցեալ զամենեսեան սատակեցին. որոց արեամբքն ներկան ողկոյզք խաղողոյն. որք յետոյ սինկքորք որք մնացեալ էին, զմեռեալս իւրեանց գտանէին ընդ որթովքն, զնոսա ծածկէին ընդ հողով. բայց զայգիսն խոճէին կթել կամ՝ ի

<sup>1</sup> Երեք օր. Նիրհ։

խաղողոյ ճաշակել, տսելով թէ մարդոյ արիւնք են։ Իսկ անօրինացն պարապեալ՝ ի կոտորուածէն, դարձան ՚ի քաղաքն, և խիլ արկեալ տանցն՝ եթէ ոք զիւը<sup>2</sup> ընչուկն թագուցեալ էր ուրեք, և կամ ՚ի դարանս, մեծաւ հսարագիտութեամբ արտաքս պեղէին, և ապա հուը հարեալ քաղաքին, կիզեալ ապականեցին, և առեալ զառ և զգերի՝ ելին՝ ի տեղւոջէն, նոյնպէս և որ շուրջ զնովաւ դիւղք և աւանք՝ զամենեսեան ապականեալ սրով և հրով և գերութեամբ, մինչեւ ոչ մնալ կենդանւոյ ուշըուք՝ որ բանայր զբերանն և ճիկ հանէր։

### ԳԼՈՒԽ Ի.

ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԿՈՄԻԱՆՈՍԻ,

կոմիանոս, քանզի առատածեոն էր և գանձիւք հարուստ, բազում զօրս ժողովեաց իւր։ Թագաւորն իբրև ետես թէ պատեհութիւնքն նմա ՚ի դէպ գան<sup>3</sup> և ելանեն, յաղերս անկեալ՝ սկսաւ դեսպանս առաքել, պարզես խոստանայր և զիւրապատին իշխանութիւնն յարեելս՝ տալ նմա, միայն թէ ՚ի խաղաղութիւն դառնաս, որ քրիստոնէից արեանն խնդիր առնեմք. այլ նա ոչ հա-

1 Երկ. օր. յաւելուն, ՚ի յուտել։

2 Մի օր. ընչուցն. միւսն, ընչուքն։

3 Երկ. օր. կան։

ւատաց և ոչ առ յանձն։ Ապա ՚ի սպասիլ դեսպանացն, որ թագաւորին էին մտերիմք ջանալին պատերազմի յաղթութեամբ հնազանդեցուցանել գնա։

Եւ հանդէս արարեալ բազում զօրաց՝ եկին ՚ի վերայ նորա, և հասեալը առ միմեանս՝ ճակատեցան ՚ի պատերազմ։ ուր բազում արեաննեղութիւնք եղեն, զորոց ասեն եթէ այնպիսի կոտորուած ՚ի մի տեղի ՚ի հոռոմս չէ ոչ տեսեալ. յորում տեղոջ և բազումք ՚ի գլխաւորացն իսկ անկան, և այս յերկոցունց կողմանցն. բայց յաղթեաց զօրն կոմիանոսին։ Եւ քանզի պատրիարքն ՚ի կողմն կոմիանոսին էր, որ զբազումս ՚ի գրլիաւորաց քաղաքին միաբանեաց ընդ ինքեանս, և տարեալ ՚ի ներքս զկոմիանոս, թագաւորեցուցին. և զՄիխայիլն աբեղայ արարեալ, ՚ի կղզի անցուցին. բայց ասեն թէ ինքն յօժարութեամբ չոգաւ։ Այս ամենայն յաշխարհաւեր տարւոջս գործեցաւ։

### ԳԼՈՒԽ Ի.Ա.

ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՄԵԼՏԻՆՈՅ ՇԱՀԱՍՏԱՆ ՔԱՂԱՔԻ,

Գաւական տանջանաց և ոչ խրատու առ ՚ի ձեռն Աստուած զթուրքաստան և զտունն Պարսից,<sup>1</sup> և նոքօք դատեաց զմեղ ըստ իրաւի իւրոց

<sup>1</sup> Մի օր. յաւելու եւ սկիմթացոց։

դատաստանացն. զի խրատու գաւագանն՝ հայրական է, իսկ տանջանացն՝ դատաւորի, որպէս Դաւիթ գտանջանս մեղաւորաց ասէ. «Բազում տանջանք են մեղաւորաց. և խրատք քո ու ուռւոցէ զիս». ոժին համաձայն և Պօղոս Եբրայեցոցն գրէ. «Զի թէ 'ի խրատու կարգի կայք, առէ, իբրև յորդիս մատուցեալ է 'ի ձեզ Առոտուած»։

Արդ Քրիստոս 'ի կենարար իւրում աւետարանութեանն, իւրում Երկնաւոր հօրն տարեթշմերձ կացոյց զմեղ նմա յընտամնութիւն, և պատուիրեաց ամենայնիւ նմա նմանօղ լինել, և բարոյիցն քաղցրութեամբ զազդականութիւն պահել հաստատուն, բայց մեք ապատամբեցաք 'ի մեր քաղցր և 'ի բարի հօրէն, և յընտամնութենէն օտարացաք. վասն այսորիկ 'ի ժամանակին նեղութեան և չարչարանաց մերոց՝ անտես արար զմեղ՝ և մատնեալք եղաք 'ի ձեռն ազգի օտարի. և զօրացան 'ի վերայ մեր թշնամիք մեր, և ատելիք մեր<sup>1</sup> ապականեցին զմեղ. և խոնարհ եղեն մինչեւ 'ի հող անձինք մեր, և յերկիր մածան որոշ զե 'ի կարմիր մեր: Եւ որպէս առ Մովսեսիւ տասն հավայնք մեր: Եւ որպէս առ Մովսեսիւ տասն հարուածեայ գաւագանաւն տանջեալ զեգիպտոս ասէք Առոտուած, թէ «Այս է զօրութիւն իմ մեծ»։ ոյժմ ամենայն մեզ հանդիպեցաւ: Նոցա ջուրին բարիւն գոխեցաւ, մեր գետք և ջրաշեղք և

<sup>1</sup> Երեք օր. խաղաւարտ գորտ:

գրեթէ բովանդակ հող երկրիս՝ յարիւնն ներկաւ յարեանց մերոց. 'ի նոցա մարմինս խաղաւարտ եռաց<sup>1</sup>, մերս բովանդակ մարմինս սրակուոր եղեալ՝, անդամ անդամ յօշեցաւ. 'ի նոսա շանաձանն և մժեխն, որ գտիրական դէմս երեսացն շիթոցօքն հարեալ կուրացուցանէր. իսկ 'ի մեզ նետիցն յարձակմունքն, որ ևս դառնագոյն վիրաւորեցին. նոցա զերիս աւուրս լոյսն 'ի խաւար փոխեցաւ, իսկ մեզ շիջաւ իսկ լոյսն, զի լուսոյն իսկ ընդունարանն անկեալ մահուամբ, և ոչ ևս յաւելու տեսանել զբարութիւն տեառն 'ի կեանս իւր. 'ի նոցա տունս գժուարահայեաց ժիժմակն սողեալ մատանէր, մերս տունք և եկեղեցիք, որ սարսափումն գայ ինձ ասել, ապականագործ ախափ այլկ գժուարաւ՝ հոտեալ ապականեցան<sup>2</sup>. 'ի նոցա անդրանիկսն զընդայ մահաբեր հրեշտակն, մերս բովանդակ տունն բնակչօք սպառեալ սատակեցան: Ծովս միայն էր պակաս 'ի մէնջ. բայց թէ կշռես ըստ գործոյն, և զայն ևս տեսանես 'ի մեզ եղեալ. քանզի ո՞ր անդունդք անհնարինք<sup>3</sup> քան զթուրքաստան կամ զեզերս երկրի խորագոյն է, յորս մեր գերիքն հեռացեալ կորեան իբրև 'ի կարմիր ծովուն, որ արեամբ նոցին գերեացն ներկեալ էր: Ի նոցանէ զարդ

<sup>1</sup> Մի օր. խաղաւարտ գորտ:

<sup>2</sup> Մի օր. այսպանեցան:

<sup>3</sup> Մի օր. յաւելու աստ, զՊարսկաստան:

ուկւոյ և հանդերձից խնդրեցին իսրայէլացիքն ՚ի վարձ՝ ընդ որոց ծառայեցին նոցա. զմեղ ՚ի բնաւից կապուտ կողոպուտ արարին, և մեք նոցա չեմք ինչ մեղուցեալ: Ոհ, աւագ և վայ ՚ի վերայ անմիթար կործանմանս: Եզիպտացւոցն երկդիմի էր պատուհասիցն իրաւունքն. մի՛ վասն դառն ծառայութեան, որով նոքա զիսրայէլ նեղեցին, որոց ՚ի դատ եկեալ Աստուած ասէր. և երկրորդ՝ զի ծառայեցին արարածոց, և ոչ աշըարչին որ է օրհնեալ յաւիտեանս. մեք խոստուվանօղ լեզու ունիմք, թէպէտ ՚ի բարի զործոց թափուր եմք, և զնոցա կիրա կրեմք, քանիօն ողորմելի եմք և ողբոց արժանի: Ո՞վ տէր և արարիչ և Աստուած, ընդէր մերժեցեր զմեղ ՚ի սպառ, և արարեր զմեղ կոխան հեթանոսաց, ծաղը և այսն կատականաց թշնամեաց մերոց: Զարթիր և զարթն զզօրութիւնս քո, և եկ ՚ի կեցուցանել զմեղ, և հասն դրացեաց մերոց եօթնապատիկ ՚ի ծոց նոցա:

Արդ այլ քաղաքաց և գաւառաց աւերանաց ժամանակն ՚ի պակաս աւուրս յանդէր, ՚ի տասն կամ ևս աւելի կամ պակաս. իսկ քաղաքս այս՝ զորմէ մեր զճառս արկեալ է, սա մինչդեռ ՚ի շինութեան էր՝ երինջ երեմեան գոլով յաստիս ուժի քաջութեան, ըստ Մովաբու, գիրդ և փափուկ զոլով. որով վաճառականքն փառաւորք երկրի, և օգնողք սորա՝ թագաւորք ազգաց, որք

՚ի գահոյս վղոսկրեայս հանգչէին, և միշտ զպարշեալ զինին ըմպէին և<sup>1</sup> անոյշ իւզով օծանէին: Եւ քանզի ամենայն չարեաց սկիզբն աստի առնու, որպէս և Մովսէս զիսրայէլէ ամբաստան լինի, «Գիրացաւ, ասէ, ստուարացաւ և սոնքացաւ եթող զտէր Աստուած զարարիչն իւր». նաև Սոգոմայեցիքն այսպիսի կենաց խանձեալք՝ անկանյաննարին չարիսն, որպէս եզեկիէլ իսկ յայտառնէ ՚ի հացի լիութենէ և ՚ի յղփութենէ կենաց՝ զմայլեալս զնոսա. նաև առաջին մարդն ՚ի դրախտին բարիսն մին օր անարատ չկարաց վայելել: Եւ զի այսոքիկ են բնութեանս մերոյ սահման, յաղքատանակն տրտնջեմք և մեղադիր լինիմք Աստուծոյ, և ՚ի հարստանակն՝ ամբարտաւանիմք, և իբրև զանմահս՝ զաշխարհէս բուռն հարկանեմք. վասն այնորիկ փոխ առ փոխ փոփոխմամբ ուսուցանէ զմեղ ՚ի չափու ունել զանձինս, և քան զմեր սահմանն աւելի չամբառնալ, զի մի մեծագոյնս անկանիցիմք: Քան զհող անարդ և խոնարհ այլ զինչ ոք իմասցի. և մեր սկիզբն ՚ի նմանէ է, և դարձն անդրէն ՚ի նոյն. և որ բնութեանս մերոյ ստեղծիչն է, չկամի թէ ոք կուրիցէ, վասն այնորիկ չթողու արձակասուն զոք. որքան և տեղի լինի խրատու՝ քաղցրութեամբ և հայրաբար խրատէ. և յորժամ անլուր խրատուն վինիցիմք, տիրական իշխանութեամբն տանջէ.

<sup>1</sup> Երեք օր. առաջին:

զկէսս 'ի մեղաւորաց աստ դատի, զի անդ թե-  
թեագոյն առնիցէ զտանջանսն. և զկէսն հան-  
դերձելոցն պահէ, և են որ աստ տանջին. և անդ,  
որպէս Սոլոմայեցիքն. և են՝ որ աստ միայն,  
որպէս Հաղարսն. և են՝ որ անդ միայն, որպէս  
մեծատունն. Այլ այս աստանօր զկայ առցէ  
բանա. մեք 'ի կարդ պատմութեանս դարձուք:

Արդ վշտաբեր տարւոյն յաշուն հասանելոյ  
մինչդեռ Հոռոմք զթագաւորացն աղմկաւն էին<sup>1</sup>  
պատանդեալ, 'ի մտանել արեգ ամսեանն, դար-  
ձեալ այլ զօր ել 'ի Պարսից, թէ<sup>2</sup> յառաջնոցն և  
թէ նոր՝ ոչ գիտեմ. և ընդ անապատ տեղիս այն-  
պէս զգուշութեամբ չոգաւ, որ չկարաց ոք իմա-  
նալ՝ մինչեւ եհաս. 'ի գաւառն որ կոչի կամախ,  
և տպա անդ բաժանեալ յերկուս, կէսն չոգաւ  
մինչեւ 'ի կողոնիա, և ըստ իւրեանց սովորու-  
թեանն առեալ զերկիրն յաւարի. զոր մեք 'ի  
դարձին զանցանեն ապա իմացաք. իսկ կէսն՝  
ուշ եղեալ Մելիտինոյ, հասին 'ի վերայ նորա  
զիշերաւ. և քանզի գունդ մի հեծելազօր 'ի Հո-  
ռոմոց կայր պահապան քաղաքին, 'ի հասանել  
հինին. յանկարծակի գրոհ տուեալ արտաքս ելին.  
և 'ի պատահեն իւրեանց՝ բազում կոտորածս  
առնէին յերկոցունց կողմանց. և 'ի լինել պա-  
տերազմին, քաղաքն՝ որքան ելանել կարաց, նա-

1 Մի օր. պատահեալ պատանդեալ.

2 Մի օր. յառաջազոյն:

զերծաւ. և <sup>1</sup> մարտիկ արքն որ մնացին, այն զինտ  
փախոտականին չոգան. իսկ զոր 'ի քաղաքին  
ըմբոնեցին, զտմենեսեան որակոտոր արարին,  
կացեալք 'ի քաղաքին աւուրս երկոտասան, և 'ի  
հիմանէ բրեալ ապականեցին զնա և զդաստա-  
կերոտ նորա շուրջանակի: Եւ այս եղեւ ամբար-  
տաւանութեան նոցա հատուցումն յանկաշառ և  
յարդարադատ<sup>2</sup> տեանէ, որ հատուցանէ իւրա-  
քանչիւր զարժանն ըստ գործոց իւրոց:

Բայց գաւառք յեկեզեաց 'ի վայր, ընդ որ  
զիշերաւ անցին, յորժամ գիտացին զեղեալ չտ-  
րիս Մելիտինոյ, ժողովեցան բազում զօրք ա-  
ղեղնաւորացն և կալան զկիրճս ճանապարհին:  
իսկ անօրինացն՝ քանզի այլ ճանապարհի անտե-  
ղեալ էին, և զերինսն թանձրամած ձիւն ծած-  
կեաց, նոքա անձարացեալ հինգ ամիս զձմերոցն  
'ի գլուխ մինչեւ 'ի նաւասարդի ամիս՝ 'ի տեղին  
դարձարեցին, և զերկիրն 'ի յուսոյ կենաց բար-  
ձին. և զանհնարին չարիսն՝ զոր անդ գործեցին,  
թողին յիշատակ աղքաց յազգո. զի զտղայնն և  
զայլ տպաժամեանսն նշաւակ եղեալ, աշտէիւք  
և նետիւք խաղալով, չարաշար խոցոտելով՝ սա-  
տակէին, և ոչ կաթէր 'ի բնութիւն նոցա գութ-  
ողորմութեան. թողում ասել զորս 'ի գրկաց ծնո-  
ղացն առեալ զտղայն զքարի հարկանէին. իսկ

1 Յամենայն օրինակս Վրիգակաւ մարտի կարգն.

2 Երեք օր. դատաստանէ:

զբարեշուք կանանցն և որք 'ի սենեկի սնեալ էին աղջկունք, զնոցա խայտառականս զի՞նչ պիտոյ է մեզ և ընդ գրով արկանել. տեսանես զչափ չարեցն յորժամ Աստուած՝ 'ի ձեռաց թողու, թէ քանի անհնարին է:

Եւ վամն զի պակասեաց կերակուր մարդոյ և անամոյ, նոքա 'ի բոնութենէ կարեացն հարկեալ, ելին ընդ Խորձայն 'ի վեր. և քանզի 'ի նոցա երկիւղէ ճանապարհք հատեալ էր, և ձիւն թանձրութեամբ դեռ ունէր զերկիրն, նոքա կրկին առնէին զընթացն. յառաջ զձի և զջորի երամակ արարեալ՝ դատարկ վարէին, և ճանապարհ բանային, և աղա զգերին և զաղին յետոյ տանէին. և այսու ընթացիւք եկին մինչև 'ի դլուխ գաւառին 'ի գեօդն որ կոչի.<sup>2</sup> Մսրբանս: Եւ նոքա՝ քանզի բերդ ունէր զեօդն, ժողովեալ էին ամենայն բնակիչք տեղւոյն: Իսկ Պարսիկն յորժամ եհաս անդ, իջևանս արար, քանզի կարծեաց՝ թէ հեծեոլ կայ 'ի բերդին. կուռ հարեալ<sup>3</sup> ճայն՝ պատրաստութիւն արար պատերազմի: Եւ երթեալ, որ նոցա դլխաւոր էր՝ բերդին առաջի, սկսաւ բանս ինչ խօսել առ որ 'ի բերդին իշխանն էր. բազում շատրուանօք ծածկեալ էր զծիւնն. յորոց վերայ նստեալ ասպար առաջի

<sup>1</sup> Մի օր. կոխան:

<sup>2</sup> Մի օր. Մորմարիսեան:

<sup>3</sup> Երկու օր. ձեսն:

ունելով, և մեծամիտ ամբարտաւանութեամբ գծոխալուր բանս բարբառէր. և որ 'ի յամբոցին իշխանն էր՝ դիպօղ ժամու մնացեալ, 'ի թիւրիէ ասպարին, և նա զփողիցն հարեալ նետիւ՝ առ ժամայն սատակեաց: Եւ քանզի զօր 'ի Հոռոմոց դայր 'ի յետոյ, որք առժամայն փողս հնչեցուցին, զոր անօրինացն լուեալ, փախստական եղեն. Իսկ որ 'ի բերդին էին, ելեալ զգերի և զաւար որքան կարացին՝ 'ի ներքս տարան. բայց Հոռոմն չէր եկեալ յառաջ. Իսկ Պարսիկն յորժամ ետես եթէ չկը այլ զօր, դարձ արարեալ 'ի վերայ և յաւարառուացն որոց հանողիպեցաւ՝ զնոսա կոտորեաց, և զմնացեալն առ և դարձաւ. և երթեալ մերձ 'ի սահմանսն Եղնուտին, ելին և նոքա և մարտ եղեալ թափեցին բազում գերիս, և լցան աւարաւ, զոր առեալ մտին 'ի բերդն: Իսկ արիւնաբու գագանացն պարտաւորեալ<sup>3</sup> 'ի շիկս եղեալ, և 'ի մտանել նոցա 'ի սահմանս Տարօնոյ, իջին զօրք 'ի լեռնէն Սիմն կոչեցեալ, զոր մարդկան սովորութիւն<sup>4</sup> Սանասունք ասեն ըստ անուան նախնոյն իւրեանց. և 'ի դիմի հարեալ, յաղթեցին և կոտորեցին զամենեսեան. և զառ և զգերի թափեալ, դարձան ուրախութեամբ փառաւորելով զԱստուած:

<sup>1</sup> Առյն ամի այրեցին զգեղեցիկ ապարանս

<sup>2</sup> Մի օր. 'ի շիփս եղեալ. և միւս շիփս եղեալ:

<sup>3</sup> Մի օր. անասունք, և միւսն զանասունք:

սուրբ կարապետին, զոր Հրահատ ոմն ՚ի գործառ կաբացն մեծին Գրիգորի որդւոյ Վասակայ՝ մեծաւ ջանիւ շինեալ էր, մինչ երկրին տէր էին. գժամատունն որ առաջի սուրբ կարապետին, զոր գեղեցկայարմար պատրաստութեամբ յարդարեաց ՚ի վառս և ՚ի պատիւ մեծի վկային և կարապետին Քրիստոսի. նաև զայլ շինուածան և զփայտակերտ եկեղեցին. զոր սուրբ Գրիգոր կոչեն: Եւ էր թուականիս մերոյ ամք նինգնարիւր եօթն յորժամ այս այսպէս եղև:

### ԳԼՈՒԽ ԻԲ.

ՎԱՅՆ ԶԱՐ ԱՂԱՆԴԻՆ ԹՌՈՉՄԱԿԵՑԻՈՑ ՈՐ ԵՐԵՒԵՑԱԻ ՚Ի ԳԱԼԱՌՈՆ ՀԱՐՔԱՅ, ԵՒ ԶԲԱՋՈՒՄՍ ԽՐՈՎԵԱՅ:

Յակոբոս եպիսկոպոս ոմն որ ունէր զվերակացութիւն եկեղեցեաց տանն Հարքայ, աս ՚ի սկզբան իւրոյ իշխանութեանն առաքինական կերպարանս յանձին ցուցանէր. քրծազգած, պահեցող, բոկագնաց. և ընտրեաց իւր քահանայս, որ յար ընդ ինքեան շըշէին, խոշորագգեստս և անպաճոյնս, հատեալս ՚ի հեշտալի կերակրոց, և միշտ<sup>1</sup> սաղմոսական երգոցն պարապէին: Եւ այսու կերպարանօք ՚ի զարմանս շարժեաց զնեռա-

<sup>1</sup> Մի օր. սաղմոսացութեան. այլ օր. սաղմոսաւեանս... եւ այլ կերպարանօք:

որս և զմերձաւորս, և ամենայն ոք ցանկայր զնա տեսանել. և որք յոյժ վիսացեալք էին ամբարտաւանութեամբ վասն իշխանութեան, այնքան ետուն ՚ի հնազանդութիւն նմա զանձինս, որ թէ և զհոգիս հանել հրամայէր՝ չէր ոք որ ընդդիմանայր, և կամ իշխէր բանալ զբերանն և ճիկ հանել: Բայց կեղծաւորութիւն էր այն, և ոչ ճշմարտութիւն. քանզի պտուղն է ծառոյն ծանուցիչ՝ որպէս ՚ի տեառնէ իսկ լուաք: Նաև Առաքեալ նմին համաձայն գրեալ, առէ, թէ «Եւ սատանայ իսկ կերպարանի ՚ի հրեշտակ լուսոյ. զի՞նչ թէ և պաշտօնեայք նորա կերպարանին ՚ի ձև առաքելոցն Քրիստոսի: Զի զոր օրինակ զմահացու գեղսն յընտանի կերակորմն խառնեն, և որք առնուն՝ իբրև զկերակուր ճաշակեն, և ՚ի մահացու գեղոցն ըմբռնին. այսպէս և կարթընկէցք կերովք թաքուցանեն զկարթոն, զի ՚ի կերոյն խարեալ՝ ձուկն ՚ի կարթի ըմբռնեսցի, նոյնպէս և անօրէնութեան մշակքն. քանզի իւրեանց կորստեան վիհն չհամարձակին յայտնի ցուցանել ումեք. վասն զի և ոչ իսկ հաւանէր այնմ<sup>1</sup> թէ և կարի ՚ի մտաց անկած էր, խորասուզիլ կամօք ՚ի խորիսորատ, յորմէ չիք հսար ելանել. վասն այնորիկ մերով բարեպաշտ կրօնիւք կերպարանին առ ՚ի զպարզամիտոն խարելոյ, և քաղցրական բանիւք պատրեն զմիտս անմեղացն. քանզի<sup>2</sup> Մի օր. իբրի:

բանք նոցա իբրև զքաղկեղ ճարակին. զի որպէս ախտն այն գֆուարին է առ ՚ի բժշկել, այսպէս և ՚ի նոցանէ ըմբռնեալքն հազիւ կարեն կալ յաշ կաստանի:

Վասն նոցա իսկ պատուիրէ տէր մեր ՚ի կեշ նարար իւրում աւետարանութեանն. «Զգնյշ լեռուք ՚ի սուտ մարգարէիցն որ գան առ ձեզ ՚ի հանդերձս գառնենիս, և ՚ի ներքոյ են գայլք յաշ վըշտակողք». նաև Առաքեալն զնոյն ուսուցանէ Փիլիպպեցւոցն, խրատեալ ՚ի տէրունական հրամանացն. «Զգնյշ լեռուք ՚ի շանց անտի, զգնյշ լեռուք ՚ի չար մշակաց անտի»: Քանզի յարտաքին թշնամեացն զգուշանալ դիւրին է, բայց ՚ի ցեղակցութենէ պատերազմացն գֆուարին է ապրիլ, որպէս Հարեւի և Յովսեփայ դիպացան իրքն, արդ սոքա թէ յայլալեզու ցեղից էին, յորմէ և էին, մեզ զգուշանալ դիւրաւ էր. բայց որպէս զրէ երանելին Յովհաննէս, թէ «Առ ՚ի մէնջ ելին, այլ ոչ էին ամենեքեան նոքա ՚ի մէնջ», և այսմ գիտուն լինել գֆուարին է: Համալեզուք և համացեղք, ՚ի միոյ յականէ բղիւեալք քաղցր ջուր և դառն. թէպէտ սուրբն Յակոբ յանհնաւրին ասաց զայս, բայց սակայն առ մեօք եղեւ այս. ՚ի քաղցր ականէս յայսմանէ՝ զոր գերափառ առաջնորդն մեր հնդետասանամեայ քըրտնալիր աշխատութեամբ իջեալ ՚ի խորս երկրի, և ՚ի խորութենէ փորուածոյ բղիւեցոյց մեզ աղբիւր-

յորդախաղաց ուղիւրք, ըստ Եղեկիէլի տեսողութեանն՝ ականակիտ և յստակ, յոր հերձուածողական ժանգաբուղիս առուքն ոչ կարացին մուտ առնել: Քանզի պատուար ճշմարտութեանն ՚ի վերայ վիմի հաւատոյ հաստատապէս ամրացեալ էր, մինչև ՚ի ժամանակս վերջինս. զոր և ինքն իսկ լուսաւորիչն մեր մարգարէական հոգւովն տեսեալ, զի գառինքն գայլք եղեն և արեան ճապաղիս հանէին. և այս եղեւ ՚ի բազմանալ անօրէնութեան մարգկան ՚ի վերայ երկրի, և ՚ի նընջել բարի տանուտեառն որ ցորենոյն էր սերմանօղ. ապա թշնամւոյն ճարակ գտեալ, ցանեաց որո՞ն ՚ի մէջ ցորենոյն ըստ աւետարանական առակին: Խառնեցաւ և դառնութեան մրուքն ընդ կենեղուտ ջրոյն որ ՚ի տանէ տեառն աղբիւրանյր. բայց կանուխ յայտնեցաւ վարդապետաց եկեղեցւոյ, որք զորո՞ն վսասակար արմատաքի խլեցին ՚ի յանդէ հաւատոյս մերոյ, և զմրուքն դառնութեան քամեալ ՚ի բաց պարզեցին՝ առողջացուցանելով զջուրմն աղիւն ճշմարտութեան, ըստ սրբոյն Եղիսէի կանխայարդար յարմարման: Եւ այսոքիկ այսքան. բայց ժամ է ՚ի զլուխ ճառին դարձուցանել զբանս, որպէս զի հաւատարիմ լիցի մեզ անացեալս:

Արդ անդրանիկ արբանեակն և համաշունչ հօրն ամենայն չարեաց՝ յորժամ յաստիս յուժի զօրացաւ կեղծաւորական բարի համբաւն՝ զոր

համբաւեցին գնմանէ անմիտ մարդիկ, սկսաւ այ-  
նունեաւ ՚ի նպատակ հաւատոյն մերոյ նետաձիգ  
լինել, որոյ սլաքքն միսեալ էին կայծակամբք  
կաղնուոյ. քանզի յոյժ խօսնակ էր այրն, և ճար-  
տարալեզուութեամբ կախարդէր զբագմաց լսելիս.  
և կարծէր այսու հիմամբ տապալել զեկեղեցի  
սուրբ. և ոչ ած ՚ի յիշումն զտէրունական հրա-  
մանն և զանվրէպ խոստումնն առ Պետրոս, թէ  
«Դու ես վէմ, և ՚ի վերայ այդը վիմի շնուցից  
զեկեղեցի իմ, և գրունք դժոխոց զնա մի յաղ-  
թահարեսցեն»։ Ո՞չ հաւատաց այսմ, այլ<sup>1</sup> ա-  
ռանձնական բանս իբրև զմարդոյ ուրուք լուաւ.  
վասն որոյ ՚ի պայքար մտեալ, կարծէր սափրել  
զփառս եկեղեցւոյ, որպէս պոռնիկ կինն այն ՚ի  
հնումն՝ զհերան Սամփսոնի, զի մատնեցէ այ-  
լազգեացն զանվարտելի անձն. այսինքն օցու-  
զաց ճշմարտութեանն զեկեղեցի սուրբ, զոր զնեաց  
պատուական արեամբն իւրով տէր մեր Յիսուս  
Քրիստոս, և պսակեալ փառազարդեաց ամենա-  
յաղթ խաչին, կանգնելով ՚ի նմա սեղան խոր-  
հըրդական յօրինակ եղեմական կենաց ծառոյն՝  
որոյ պտուղն անմահացուցիչ ստուգապէս զմար-  
մին կենարարին ծանեաք, ըստ իւրում անսուտ  
հրամանին, թէ «Որ ուտէ զմարմին իմ, զմահ  
մի տեսցէ յաւիտեան»։ Արդ տես դու զնորա  
մեքենաւոր խորամանկութիւնն, թէ որպէս օձա-

1 Մի օր. առանցական։

ձեւ խարդախանօք հնարէր հեղուլ զապականիչ  
թոյնան յառողջն հաւատով։

Զառաջինն՝ ընտրութիւն սկսաւ առնել ՚ի  
մէջ քահանայից ըստ արժանաւորութեան, և ան-  
արժանիցն ասաց լոել. և իբրև այսու հաճոյ  
թուեցաւ բազմաց, ապա ՚ի վերայ սորին և այլ  
միւս ևս յաւել. քանզի արժանաւորացն հրամա-  
յէր ՚ի տարւոջն երիս միայն մատուցանել պա-  
տարագս. և զի ՚ի Նիկիական կանոնան գրեալ է,  
թէպէտ և յոյժ մեղաւոր իցէ, պարտ է զիսու-  
տովանութիւնն ընդունել, և տէրունական մար-  
մոյ և արեանն հաղորդեցուցանել, և պատարա-  
գաց և ամենայն քրիստոնէական կարգաց արժա-  
նացուցանել. զայս նա բնաւ և յանկանջալուրս<sup>1</sup>  
ոչ ընկալաւ։ Այլ այսպէս ուսուցանէր, թէ որ  
ինքն իւրով անձամբն՝ որով մեղաւն և նովիմբ  
չապաշխարեաց, նմա ոչ յիշատակք օգնեն և ոչ  
պատարագք. և իւր կամարարօքն ՚ի հենգն ար-  
կեալ ծիծաղէին, և զանասունն բերեալ առաջի  
կացուցանէին, և այսպէս ասէին. Այ տառապեալ  
չորքուտանի, թող թէ նա զիւր ժամանակն մեղս  
արար և մեռաւ, դու զինչ մեղար որ ընդ նմա  
մեռանիս։ Եւ առ այս և յերկուս բաժանեցան  
ժողովուրդք, յոմանց ընկալեալ եղեւ այս, և յո-  
մանց ոչ. և իբրև ամենայն մարդ ՚ի ծուփս և ՚ի  
տարակուսանս անկեալ կայր, և ինդրէին զելս

1 Երկ. օր. չունին ոչ։

իրացն իմանալ. նաև որք 'ի ժամանակին յանապատս և 'ի քարանձաւս առանձնական ճգամբք միշտ զհաճոյսն Աստուծոյ կատարէին, մեծաւ հառաջմամբ և արտասուալից պաղատանօք խընդրէին այցելութիւն 'ի բարերար տեառնէն։ Այլ և երկիցս ժողով եղև բազում հարց և հայրապետաց և քահանայից և խառնիճաղանճ բազմութեանց՝ որոց ոչ գոյր թիւ. բայց զի իշխանք գաւառին իբրև ամենեքեան 'ի նորա կեղծաւորական կերպարանաց իբրև շղթայիւ կապեալ էին, խոստանային պատերազմի օրինակաւ մեռանել յառաջ՝ քան թէ զնա 'ի ձեռս ժողովոյն տալ։ Եւ նա Նեստորաբար 'ի տան նստեալ մեծաւ<sup>1</sup> խրախուսանօք 'ի ձեռս պատգամաց՝ առնէր ժողովոյն պատասխանի, յուսացեալ յիշխանացն օդ նականութիւն և ոչ յԱստուած. ոչ ածեալ զմտաւ զդաւթական երգսն, թէ «Բարի է յուսալ 'ի տէր, քան յուսալ յիշխանս». կարծէր վատշուէրն մարդկան օգնականութեամբ յաղթել ճշմարտութեանն։ Այլ Աստուած՝ որ ոչ թողու զգաւազան մեղաւորացն համարձակել 'ի վիճակս արդարոցն, զի մի 'ի չարութիւն արդարքն զձեռս իւրեանց ձգեացեն. որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ, և աղօթից նոցա լսէ. որ առնէ 'ի մըրիկս հանգամաւութիւն, և ածէ յերաշտութեան անձրև, և գարաւութիւն, և ածէ յերաշտութեան անձրև, և գայն՝ միոյ արդարոյ աղօթիւք, նա յայց ել մեզ

1 Մի օր. իւրուխտանօք։

և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ, որ գիտէ ըստ խորին իմաստութեան իւրոյ 'ի հեռուստ հիմն արկանել մեծամեծ իրաց, և աստ տնտեսեաց որքան արդեօք էր օգտակարագոյն. և եղեայսպէս։

Կրօնաւոր ոմն անուն եսայի 'ի կարին գաւառէ՝ 'ի բարեպաշտ տոհմէ, որ վասն բարի համբաւոյն երթեալ յարեալ էր 'ի նա, յորժամ այսպիսի յոյզք և խնդիրք զարթեան 'ի վերայ նորա, նա ուշագրութեամբ ուշ եղեալ՝ դէտակն կալաւ 'ի վերայ. քանզի յոյժ իմաստուն էր այրն, և յոյժ մտերմութիւն ցուցեալ առ նմա՝ մի 'ի հաւատարմացն նորա ցուցանիւր. և տեսեալ և տեղեկացեալ նորա մծզնեայ կրօնիցն, անյապաղ երթեալ պատմեաց սուրբ հայրապետին Սարգսի։ Որոյ լուեալ, և 'ի վերայ հասեալ գործոյն, կոչէ առ ինքն քաղցրական բանիւք զթշուառական անձն, և ըստ արժանուոյն հատոյց նմա. քանզի 'ի քահանայական կարգէն լուծեալ, և աղուեսագրոշմ կերպարանօք խարան յերեսս նորա եղեալ, քարոզն առ նմին աղաղակէր, թէ Որ 'ի սրբոյ կուսաւորչին հաւատոյ սողոսկեալ յանօրէն Թոնդրակեցաց՝ 'ի մարդարգէմ զազանաց փարախն մտեալ միաբանի, դատ և իրաւունս զայս կրեսցէ։ Եւ հրամայէ ի բանտի արգելուլ զամենաթշուառ անձն, քանզի կամէր թէ զղանայ թերես, և խոստավանի 'ի բաց կալ 'ի պիղծ աղանդոյն. զի յոյժ ողորմէր կորուսեալ անձին։

Այլ քանզի ըստ Երեմիայի բանիցն՝ ոչ հուրն գայրեն մոռանալ կարէ, և ոչ հսդիկն զսնութիւնն, և ոչ ինձ զխայտութիւնն, այսպէս և ոչ չարն զիւր չարանալն. քանզի՝ ի վիշերի հատեալ զբանտն և փախստական եղեալ, անցանէ յաշխարհն Յունաց՝ և հասանէ՝ ի թագաւորանիստ քաղաքն կոստանդնուպօլիս. և չարախօս լինի զհաւատոյս մերոյ, և խնդրէ մկրտիլ ըստ նոցա կարգացն. Իսկ նոքա ըստ իւրեանց իմաստութեանն տեղեկացեալ, և 'ի վերայ հասեալ զործոյն՝ ոչ առնուն յանձն. այլ ասեն, թէ Զոր Հայոց<sup>1</sup> խոտեալ և անարգեալ վասն հաւատոյ՝ և մեք չընդունիմք: Եւ իբրև չյաջողեցաւ նմա այս, ելեալ գայ անցանէ՝ ի գաւառն Ապահունեաց՝ ի բնակարան սատանայի, յաստուածուրաց ժողովն և 'ի գաղանաց գառագին, որ կոչի Թոնդրակս. և անդ առժամանակ մի զանխլաբար որջացեալ. բայց ասեն՝ թէ և նոքա չընկալան զնա վասն առաւել պղծութեանն. վասն որոյ ելեալ՝ ի լեառն Խլաթայ, և անդ յիւրայոցն գտեալ յագարակս և 'ի բացագոյն տեղիս, առ նոսա դագարէ. և անցուցեալ անդ գաւուրս իւր, երթեալ չարապէս մեռանի՝ ի քաղաքն որ կոչի Մուհարկին: Ոչ երթեալ ըստ գրոց կանոնի և ոչ համաձայնեալ թրիստոնէից, 'ի բաց թողի է. վասն որոյ մեռքրիստոնէից, և թաղեցաւ իբրև զգէշ, չար յիւրաւ իբրև զէշ, և թաղեցաւ իբրև զգէշ, չար յիւրաւ կանայս, որ էին նորա տոհմակիցք. որոց

1 Մի օր. հատեալ. և միւս. ատեալ:

շատակ թողեալ զկնի իւր. զի ամենայն որ լսիցէ զպատմութիւնս զայս, անէծս արձակեսցէ զհետ նորա:

### ԳԼՈՒԽ ԻԳ.

Թէ ՈՐՊԵՍ ԵՒ Ի ՄԱՆԱՆԱՂԻՈՅ ՍԱՀՄԱՆՍՆ ԲՈՐ-  
ԲՈՔԵՑԱԿ ՀՐԴԵՑ ՄՈԼՈՐՈՒԹԵԱՆՆ, ԱՍԵԼԻ Է:

Կունծիկ ոմն շնանուն աբեղայ որ բնակէր մօտ՝ ի բերդաքաղաքն որ կոչի Շիրի, որ դեռ ևս այսօր ագարակին զնորայն անուն կոչեն. սա հնագոյն գոլով աւուրբք, ունէր յինքեան զպըզծութեան խմորն. քանզի ուսեալ էր՝ ի շնաբարոյ աբեղայէ ումեմնէ՝ որ համբաւէր զինքենէ՝ թէ յԱղուանից է. բայց նա անդրանիկ էր սատանայի, և շտեմարան խորհրդոց նորա, ուստի ծուխ հնոցի գեհենոյն մշտաբորբոք ընդ բերան նորա ելանէր, յորմէ բազումք դեղ առեալ սատակեցան: Արդ այս կունծիկս ժիր մշակ գոլով սատանայի՝ որսացաւ զկնի ոմն, որում Հրանոյշ կոչիւր. որ էր՝ ի գլխաւոր և յընտիր ազգէ և տէր ագարակի և սահմանակից նորա. և իբրև լցաւ՝ ի նորա մահաշունչ թիւնիցն՝ ոչ շատացաւ իւրով կորստեամբն, այլ զբազումս սատարս իւրոց խաբիցն յարդարեաց: Եւ նաև առաջին զերկու կանայս, որ էին նորա տոհմակիցք. որոց

անուանքն կոչին այսոքիկ, միումն Ախնի և միւսումն կամարայ, որ էր արդարեւ կամարար սատանայի, և երկոքեան սոքա քորք հարազատք. սոքա պոռնկական մոլեգին ախտիւն, որպէս օրէն է նոցին փարախին, և կախարդական արուեստիւ՝ վարդապետք եղեն սատանայի, յորս գօրացաւ հայրն ամենայն չարեաց. որք «Սրեցին որպէս սուսեր զլեզուս իւրեանց, ըստ սաղմոսական երգոյն, և լարեցին զաղեղուս իւրեանց յիրս դառնութեան»՝ նետաձիգ լինել յուղիմն սրտիւք. որք հարին և կարեվէր սատակմամբ վիրաւորեցին զբազում անմեղ ոգիս: Եւ քանզի ՚ի հայրենի ժառանգութենէ ունէին գեօղս երկուս, զնոսա կաղաղս և հանգրուանս պատրաստական արարին վիշապ օձին կամակորի, յորս բունեալ սաստկապէս եհեղ զմաղձն իւր. և նոքամատուակեալ, շուրջ զինքեամբք բնակողացն արբուցին ՚ի կորուստ. վասն սորին այսորիկ զրեաց Մովսէս. թէ «Սրտմտութիւն վիշապաց է զինի նոցա, սրտմտութիւն իմից՝ անհնարին առ ՚ի բժշկութիւն»:

Իշխան ոմն Վրվէս անուն՝ սոցին ջամուկ կանանց եղբայր կամարար եղեալ, սա յառաջ գոլով առողջ ՚ի հաւատս, յառաջաղէմ էր ՚ի հանդէս բարեպաշտութեան, մինչ զի կրօնաստան շինեաց յիւրում ժառանգութեանն՝ ճգնաւոր եղբարս ժողովեալ ՚ի նմա. և ընդարձակ սահմանօք՝

անկարօտ պահէր զկեանս նոցա, որոց առաջնորդն Անդրէսս անուն ճանաչի, յոյժ անուանի ՚ի կրօնաւորական մրցմունս: Առ սոսա գայր իշխանս այս յամենայն ամի ՚ի պահս քառասնորդացն, և հանդիսակից լինէր նոցա մինչեւ յաւուրս մեծի պասեքին. և բազում այլ գործս բարեաց ցուցանէր ՚ի սոցա սպասաւորութիւն. նաև յազքատանութիւնս և ՚ի քահանայից հնազանդութիւնս՝ քան զբազումս յառաջաղէմ ցուցանիւր: Զսա կարթեալ չարին ՚ի ձեռն կանանցս այսոցիկ, որք ապականագործ ախտիւ պոռնկեցան ընդ նմա անխտրապէս, ոչ ածեալ զմտաւ զարեան մերձաւորութիւնն. քանզի այսոքիկ են կաղաղք կուրսատեան նոցա. սոյն այս է և չորրորդ գուստը սոլոմոնեան տղրկին. վասն սորին պատուիրէ աստուածային առաքեալն, «Մի, ասէ, ՚ի ցաւս ցանկութեան, որպէս և այլ հեթանոսք, որ ոչ ճանաչեն զԱստուած»: Տեսանես զի հեթանոսական է ախտն այն. տես որպիսի հանդէս առնէ վասն նորա աստուածային երջանիկն Սողոմոն. «Որդեակ, ասէ, պահեա զքեզ ՚ի խառնակութենէ օտար կանանց, զի զորս գտանէ յանմիտ մանկանց, քաղցրական բանիւք հաւանեցուցանէ մնալ առ ինքեանս. քանզի մեղք կաթեցուցանեն շըրթունք կնոջ պոռնկի, որ ժամանակ մի քաղցրացուցանէ զքիմս հաւանելոցն, և յետոյ դառնագոյն գտանի քան զլեղի. քանզի առեալ տանի զհոմա-

նիս իւր իբրև զշուն տոռնեալ, և իբրև զզուաւրակ՝ ի զենումն, և իբրև այծեամն խոցեալ նետիւ զլերդակողմն. և ոչ կարէ բուժիլ՝ ի նմանէ մինչև հասուցանէ զնա մահու հանդերձ՝ ի դժոխս, քանզի թափք դժոխոց է տուն նորա»:

Այսոքիւք թակարդեալ ողբալին այն վրվէո, մերկացաւ զպարկեշառութիւնն, անկաւ՝ ի հաւատոց, եղև թշնամի Աստուծոյ և սրբոց նորա. եթող զտէրն՝ որ սուրբ աւագանաւն ծնաւ զնա, մոռացաւ զԱստուած՝ որ մարմնով և արեամբ իւրով կերակրեաց զնա: Ելեալ՝ ի տանէ, անկեալ՝ ի պատուոյ, մոռացաւ զուխտն աստուածեղէն, հեռացաւ՝ ի ճգնաւորական կարգացն հազորդութենէ. և որ երբեմն կըօնաւորաց ժողովարան էր տեղին՝ զոր մհծամնծ ծախիւք և աշխատութեամբ շինեալ էր, ուր դասք սալմոսասացաց և պարք պաշտօնէից քաղցրաձայն երգովք ընդ վերին զօրմն միաձայնութեամբ զԱստուած օրհնէին, այսօր լուեալ են ձայնքն, յաւեր յանմարդի է տեղին: Եւ յետ այսորիկ զի՞նչ. երթեալ թշուառականն միաբանեցաւ ընդ չարագե կանայմն, և զագարակն՝ որ իւրեանց բնական տեղիք էին, զոր յառաջ սակաւ մի յիշեցաք, որոց անուանքն կոչին միումն կաշէ և միւսումն Աղիւսոյ, զբնակիչս տեղեացն զամենեսեան ընդ ինքեանս միաբանեցին. և ապա զիւական կատաղութեամբն մոլեալ, զեկեղեցին՝ որ յիւրեանց օձաբնակ տե-

դիմն՝ ի վաղնջուց շինեալ էին, զայն՝ ի խոպան գարձուցին: <sup>1</sup>Եւ յանդաստանացն՝ ուր և դիպօդ ժամ հանդիպէր նոցա, զփրկութեան մերոյ զնըշահն և զտէրունական յաղթութեան զզէնն՝ որով ընկլաւ մահու յաղթութիւնն և բարձան առ՝ ի մէնջ առածք կամակոր թշնամւոյն, յորս երանելին Պօղոս զարարածովքս զանց արարեալ՝ ի նորին զօրութիւնն պարծէր, «Մի լիցի ինձ, առէ՝ պարծիլ, բայց միայն՝ ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», նոքա վրէժինդիր լեալ հօրն իւրեանց սատանայի, խորտակէին անամօթաբար: Բայց որովհետև զիաչն յիշեցի, ածից՝ ի պատմութիւնս և այլ սքանչելեաց զրոյցս, որ ամենեցուն սարսափումն բերէ լսողաց:

Ի հատուածս լերինն Պախրայ որ այժմ կոչի Գայլախազուտ, առաջին հարցն աւան ինչ էր զոր <sup>1</sup> Բազմազբիւր կոչեն. ուր զԱստուածային նշանն բազմապայծառ վայելչութեամբ կանգնեալ էին. որ և զանուն գեղջն՝ ի նոյն փոխեալ՝ Խաչ անուանեն մինչև ցայսօր: Յաւուր մեծի Պենտեկոստէին՝ ի գիշերին եկեալ՝ որ նոր կիւրակէն կոչի, կամարար մշակքն սատանայի, մըճով հարեալ զթագ Աստուածընկալ նշանին՝ մանրեալ յերկիր ընկեցին, և ինքեանք զանխաբար յօձաբնակ որջս իւրեանց երթեալ մտանէին. ընդ որ հիացան երկինք՝ ի վերուստ, և երկիր առհասաւ:

1 Յօր. միում. Բազում՝ աղբիւրք.

բակ զարհութեալ զդողի հարկանիւր. զայն արարուած ողբաց արուսեակն, և սգաց երեկօրեայն խրթնիք: Արդ ըստ սովորական կարգաց 'ի հաւախօսի ժամուն յարուցեալ երիցուն՝ եկն առաջի խաչին, զմեծի կիւրակէին պաշտօնն կատարել. և տեսեալ զսքանչելի տեսութիւնն՝ ձեռն զօձեօք արկեալ պատառէր զհանդերձն, և բարձրածայն կանչիւք զբնակիչս տեղւոյն ընդուատ առժամայն 'ի նորա տեսիլն հաւաքէր. որոց տեսեալ<sup>1</sup> զմեծամեծաց զարմանն, զկական բարձեալ բախէին զկուրծս և գառնային. և էր ամենեցուն յայնժամ արանց և կանանց, ծերոց և տղայոց միածայն մի ողբք հառաչանաց: Եւ մինչդեռ նոքա յայս տագնապի կային, յանկարծակի ծագեաց 'ի նոսա գիտութիւն՝ ըստ Աստուծոյ անճառ իմաստութեանն. 'ի գիշերին՝ յորում այն գործեցաւ, յանկարծակի ձիւն անկեալ, զերեսս երկրի<sup>2</sup> սպիտակացուցանէր, որ զիետ անօրինացն կալեալ՝ տարեալ 'ի նոցա կաղաղմն կացուցանէին: Եւ առժամայն ազդ արարեալ երջանիկ հայրապետին Սամուելի. որոյ լուեալ բազում ժողովով անդը հասանէր. և զգաւառի եպիսկոպոսն և զերիցունս և զհարսն առ ինքն հաւաքեալ, երթեալ

<sup>1</sup> Մի օր. 'ի մեծամեծաց զարմանան. յայլում. 'ի մեծամեծաց զարմանացն:

<sup>2</sup> Մի օր. սպիտակացոյց:

նոքօք՝ զանօրինացն<sup>1</sup> զկաղաղմն կիզեալ ապականեաց, նզովելով զինչս և զստացուածս նոցա, որպէս Յեսու յառաջինս՝ զերիքովայն, զի մի ոքիշխեցէ առնուլ ինչ. և վեց 'ի նոցանէն՝ զորավարդապետս ասէին լինել չար և պիղծ կրօնիցն, զնոսին ձերբակալ արարեալ, գայ<sup>2</sup> ժողովով 'ի քաղաքագեօնս որ կոչի Զերմայ. և<sup>3</sup> աղուէս խարսնօք զգէմս նոցա զորշմել հրամայէ, զի եղիցիայն նոցա նշան յաւիտենից՝ յայտնի և ճանաչելի ամենեցուն. զի մի ոք տղիտաբար հաղորդեցի ընդ նոսա, այլ իբրև զչար գազան հալածական լիցին յամենայն մարդկանէ: Յետ այնորիկ օրհնեալ զժողովուրդն՝ որ աշխատակից նմանեղեն, արձակէ 'ի խաղաղութիւն:

Իսկ 'ի գալ ամարայնոյն առաքի 'ի թագաւորէն գատաւոր իրաւանց աշխարհին, որում անունն էր Եղիա. որոյ հասեալ 'ի գաւառն Եկեղեցեաց, ընդ առաջ երթայ նմա ամենաչարնվրվէռ. և ամբաստան լինի զմեծարգի հայրապետէն Սամուելէ, և զայլ եպիսկոպոսացն որընդ նմա էին, եթէ Զիմ տունն յաւարի տարան, և զգեօղն աւերեալ հրդեհ արարին: Եւ բազում զանձուց և ընչից պարտս 'ի վերայ նոցա կացուցանէր: Զոր իբրև լուաւ դատաւորն՝ առաւել

<sup>1</sup> Երկ. օր. Կաղաղանս:

<sup>2</sup> Երեք օր. ժողովն:

<sup>3</sup> Երկու օր. աղուեսախարանօք:

ևս 'ի բարկութիւն բրդեալ, առաքէ զինուորս  
բերել ստիպաւ զերանելի եպիսկոպոսունս առաջի  
իւր. իսկ 'ի գալ զինուորացն, գրէ գլուխ եպիսկոպո-  
սացն հրովարտակս առ վիճակաւորս եկեղեցւոյ,  
առ երիցունս և առ անապատաւորս, զի առանց  
իրիք ինչ զմտաւ ածելոյ առ նա ժողովեսցին:  
Եւ 'ի հասանել համբաւոյն, որպէս թէ յԱստու-  
ծոյ տեսչութենէն ազդ լինի առ ամենեսեան.  
առանց յապաղանաց բազմութիւն մարդկան 'ի  
մի վայր ժողովեցան, ոչ միայն բահանայիցն,  
այլ առաւել աշխարհականաց՝ զորս ոչ ունիմ  
գհամարոյ նոցա զչափ ընդ գրով արկանել. և  
երթեալ ժողովոյն բազմութեամբ մինչև յեզր  
գետոյն Եփրատայ, ուր Մանանաղի 'ի նմա խառ-  
նի: Եւ լինի յայնմ ժամու եկեղ անձրեի. և 'ի  
յորդութենէ անձրեին զարթեաւ Եփրատէս և գայր  
լի դարիւ և դարիւ. իսկ զինուորքն բերեալ նու՝  
փութացուցանէին անցուցանել զծերունի եպիս-  
կոպոսն զՄամուէլ և զնորին եղբօրորդին զթէո-  
գորոս յայնկոյս յաւանն որ կոչի Կոթէր, քանզի  
և դատաւորն անդ իսկ էր. բայց ժողովուրդն  
բուռն հարեալ զեպիսկոպոսացն, ոչ ետուն 'ի  
ձեռս զինուորացն. իսկ նոքա ասեն, նախ զսոս  
անցուցանեմք, և ապա զժողովուրդդ. և այսու-  
բանիւ հաւանեցուցեալ զնոսա, առեալ զեպիս-  
կոպոսունս հանգերձ նաւովն անցուցին յայն-  
կոյս: Եւ դադարեցուցեալ զնաւն. եղ 'ի բանտի

զեպիսկոպոսունսն. զոր իմացեալ ժողովոյն զիսո-  
բամանկութիւն նոցա, զի ոչ դարձուցին զնաւն  
'ի նոսա՝ որպէս խոստացան, բարձր ձայնիւք և  
յորդորական բարբառով զմիմեանս քաջալերէին,  
մեռանել անցանել 'ի ջուրսն, քան թէ յառաջ-  
նորդմն հաւատոյ<sup>1</sup> լուտանաց բանս լսել: Եւ  
քանզի երեկոյացեալ էր ժամն, և արեգակն զցըն-  
ցուղս ճառագայթից յինքն ծրարեալ 'ի մայրն  
դառնայր՝ համարձակութիւն տալով երկնակամառ  
արփւոյն, յայնժամ դասք քահանայիցն յառաջ  
մատուցեալ, ոչ խորհրդով խաչին զջուրսն բա-  
ժանէին, այլ զնոյն ինքն զտէրունական զյաղ-  
թութեան նշանն ունելով 'ի ձեռս՝ և բարձեալ 'ի  
վերայ ուսոց, քաջապինդ հաւատովք հարկանէին  
զբարձրակոհակ կոյտա ջուրցն, յորմէ որպէս խըս-  
տերախ ձի 'ի սանձից ճմլեալ տեղի տայր անցի  
ժողովը կունանն, ոչ ոք վսասեալ յայնքան բազմու-  
թենէն և ոչ մի: Որք իբրև անցին, զգոհացողա-  
կան զերգմն զցայգն ամենայն Աստուծոյ նուա-  
զէին, առաջնորդ պարու իւրեանց ունելով զա-  
նարատն Մարիամ, որ է Եկեղեցի սուրբ, ունե-  
լով զթմբուէն 'ի ձեռին, այսինքն զհաւատոյ  
Ճշմարտութիւն, ոչ անձայն և անարուեստ 'ի  
հերձուածողական 'ի գէճ ախտիցն եղեալ, այլ  
չերմութեամբ ըստ Հոգւոյն սրբոյ ցամաք գոլով  
և 'ի հնչողական երգմն պատրաստական, որք

<sup>1</sup> Երկ. օր. նախատանաց:

բախեալ դաւթական կնտնտոցաւն՝ հնչեցուցանէին յամենեցունց լսելիս. «Օքնեցէք գտէր, զի սքանչելիս արար», և որ զհետ սորա անկցին բանք. և այսու բարձրածայնութեամբ հանէին զգիշերն ամենայն՝ ի գլուխ յաղօթս Աստուծոյ:

Իսկ դատաւորն յորժամ լուաւ զաստուածային անտեսութիւնն և զհրաշս զքանչելեացն, ծանեաւ՝ թէ այցելութիւն առնէ մերոյ ազգիս տէր. ի սաստիկ հիացմանէն՝ ի դողման եղեալ՝ յաղօթս ապավինի և զԱստուած յօդնականութիւն կարդայ, զի Մի տգիտաբար, ասէ, խոտորեցայց յիրաւանց քոց տէր: Եւ ի լուսանալ աւուրն, քանզի միաշաբաթ էր, երթեալ յեպիսկոպոսարանն որ Փրբիսն կոչի, և զիրաւացի դատաստանն եղեալ՝ ի դատ և յիրաւունս կացուցանէ զգըլխաւորս ժողովոյն. և հրամայեն անարժանին և պարտաւորելոյն Վրկեռայ գալ՝ ի հանդէս իրաւանց: Եւ քանզի է կենդամի ինչ, զոր սեպեանս կոչեն, զորմէ ասեն՝ թէ զամենայն զոյն փոխէ, զի յորսորդացն ապրեսցի. նոյնպէս և նա՝ ի զօրանալ ճշմարտութեանն՝ ետես եթէ ոչ կարէ զդէմ ունել, քանզի՝ ի ծագել լուսոյն՝ սպառի խաւարն, և ՚ի յայտնել ճշմարտութեանն՝ կորնչի ստութիւնն. և ապա զի՞նչ առնէ, և որպիսի հընարս իմանայ. Հոռոմ խոստանայ լինել, և լինի յօրդեգիրս եպիսկոպոսին՝ որոյ անուն Եպիստուատ յորջորջիւր՝ կաշառով գողացեալ զմիտու

նորա: Որոյ եկեալ առաջի ատենին՝ աղերսիւ խնդրէ զնա իւր՝ ի չնորհս, և դատաւորն զնոյն կամի. քանզի եղբայր անօրինին իշխանական պատուով և քաջասիրտ արութեամբ յընտրելոց և՝ ծանօթից թագաւորին էր, յորմէ յոյժ ակնածէր դատաւորն. ուստի և տայ զնա յեպիսկոպոսն յաւանդ, որպէս և խնդրեաց: Իսկ զայլսն զորս և գորին՝ ի նորին ընկերացն՝ մեծամեծ հարուածովք և զանիւ տանջեալ, հալածական արարին աւերելով զտունս նոցա. և ժողովն օրհնեաց զգատաւորն, և արձակեցան խաղաղութեամբ:

Բայց դատաստանքն Աստուծոյ կանխեալ՝ ի վերայ նորա, որ թէպէտ ՚ի պատուհասից զերծաւ, այլ՝ ի ձեռաց ամենազիտին ոչ կարաց ապրիլ. քանզի յանկարծակի վառեցաւ մարմին նորա տապով՝ որպէս զէերովդէին, և մատունք ձեռաց նորա չորացեալ՝ ոչ կարէին առ կերակուրս նպաստաւորել մարմնոյն. այլև կերակուր զոր ճաշակէր տառապանօք, մուտ կերակրոյն փակեալ էր, զներգործութիւն աղբոյն վերադարձեամբ վճարէր մինչև յօր մահուն իւրոյ. յետոյ և մարմինն իւր գողութեամբ ապականեցաւ. բայց նա ոչ եկն՝ ի զղումն, և ոչ յիշեաց զիւր զառաջին բարեպաշտութիւնն. այլ նովին դիւական աղանդով վարեցաւ՝ մինչև բարձաւ՝ ի կենաց. և տանջանք մարմնոյն միշտ յուշ առնէին զյիշատակ գեհենին յոր տանջելոց էր:

Բայց զնոցա մծղնէ զգործն անպատշաճ համարեցաք ընդ զբով արկանել, քանզի կարի աղտեղի է. և զի ոչ ամենայն ոք սկզբակազմ է<sup>1</sup> լսելեօք, բազմաց մեղացն յիշատակ՝ ՚ի խտղտանս ձգէ վլսօղմն, և ՚ի կատարումն գործոյն իսկ ածէ. վասն այսորիկ և ես խոյս ետու յայնմանէ: Այլ որ յայտնի է ՚ի նոսա, և մեզ ասելի է՝ այսոքիկ են: Զեկեղեցի և զեկեղեցւոյ կարգաւորութիւն ընաւ ոչ ընդունէին. ոչ զմկրտութիւնն, և ոչ զմեծ և զսարսափելի խորհուրդ պատարագին. ոչ զիսաչ և ոչ զկարգաւորութիւն պահոց: Այլ մեք ճշմարիտ հաւատացեալքս որբոյ Երրորդութեանն պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, զոր ուսաք ՚ի սուրբ հարցն. և ՚ի նոցա աստուածուքաց ժողովոյն ՚ի բաց դարձուացուք գերեսս, անէծս ՚ի վերայ նոցա առաքելով:



### ԳԼՈՒԽ ԻԴ.

ՎԱՅՆ Հ ՏԻԵԶԵՐԱՀՈԶԱԿ ՔԱՂԱՔԻՆ ԱՆԻՈՅ ԽՈՂ-  
ԽՈՂՄԱՆՆ ՄՐՈՎ:

Եւ արդ ընդ բազում հեթեթանօք և ընդ  
ցնորիւք անկան ազդ մարդկան, յաղագս ցոփու-  
թեան և անխոնարհելի մտաց՝ ապաստան եղեն:

1 Երկ. օր. լսելովք:

2 Մի օր. տիեզերական:

՚ի գործս իւրեանց. հսկայս կորովիս և բարձրահասակս, անդիմահարս և անմարտնչելիս՝ աստուածորդիս իւրեանց անուանեցին. և ոմանք աշտարակաւ ամրացեալք՝ անմատոյց ունելով զբարձրութիւն, ոչ կամեցան ճաշակել ՚ի բաժակէ<sup>1</sup> բարութեան տեան, որպէս այն առաջին շինուածն անմտութեան՝ բազմաշխատն և դիւրակործանն. այսպէս և բնակիչքն Երիքովի, յաղագս ամրութեան աշտարակացն՝ ոչ համարեցան զինքեանս ընդ այլ Քաննանացիսն, թէ տիրէ նոցա աջ տեան կամ սուր ամենակալին մերձեսցի առ նոսա: Զի տէր է որ շինէ և քակէ, տայ զամուրս ՚ի գողումն և զբարձր աշտարակս ՚ի կործանումն. զի և աշտարակն որ էր ՚ի մնարսն Լիքանանու, զոր շինեաց Դաւիթ, և ամրացոյց սուսերաւ և վահանաւ հակառակ Դամասկոսի, ոչ եղեւ խափան և դիմահար Եղերայ, որ յարեաւ սատան. Սողոմոնի. զի սրբութիւնն է ամրութիւն, և պարիսպ ընտիր գործք աստուածպաշտութեան:

Եւ արդ դարձուք անդրէն ՚ի կարգն ըստ յառաջազրելոցդ. մի սակաւ կամ փոքր համարել մեղս՝ որք ոք զզանան կամ ապաշխարեն, կամ ձգեն զմերձակայ և զսահմանակցացն զպատուհանն՝ որ ըստ յանցանացն հանդիպի. ողբալնուայն յաղագս մայրւոյն, և դժնկին յաղագս

1 Մի օր. բարկութեան:

ձիթենւոյն. զի ոչ եթէ ամենեքեան արժանի են  
մահու, ըստ տեառն հրամանին, յորոց աշտա-  
րակն՝ ի վերայ անկաւ, այլ մերձակայիցն և յայ-  
լոց մեղաց ըմբռնումն, և հեռաւորացն խրատն և  
զգուշութիւն։ Զի ոչ եթէ վաղ իմն գործեցաւ,  
կամ բազում ժամանակ ընդ մէջ անցեալ աղա-  
ւաղեաց զանցս աղէտիցն որ ընդ Արծն եղեւ. վասն  
զի ոչ սակաւք էին որ աչօք տեսին, և ոչ լսե-  
լեաց կարօտացան. զի բազում աշխարհ և քա-  
ղաքք այն էին որ ապրեցան յայսմ հինձ. այլ  
ստամբակեցան ՚ի միտ իւրեանց, և ամբու-  
թեամբն ապստամբեցան ոչ ՚ի մարդկանէ՝ այլ  
յԱստուծոյ, որ տայ զբարձր աշտարակս ՚ի կո-  
խումն և զբաղաքս ամուրս ՚ի հողաբուրս. ոչ  
իմացան և ոչ տոխն ՚ի միտ զահ տեառն և զսպառ-  
նափս որ ՚ի նմանէ. և զմբուր բարկութեան և  
զսրտմութեան՝ որ ՚ի նմանէ խոնարհի յարբումն  
մեղաւորաց, սպառեալ համարեցան. մանաւանդ  
ամուրն Անի և որ շուրջ զնովաւ դստերք իւր՝  
տուաել յամբարտաւանութիւն կրթեալ՝ ընդդէմ  
երկնից կայթս հարկանէին. մինչև շարժեաց Աս-  
տուած զթագաւորն Պարսից<sup>1</sup> փոխանակ ինքեան՝  
տեանել թէ զի՞նչ գործի ՚ի ՚ի նմա։ Եղեւ գործ  
պատերազմի յերկիրս Հայոց ընդարձակեցուցա-  
նել զբնակութիւնս իւրեանց, և տիրել ՚ի վերայ

<sup>1</sup> Երկ. օր. պատույ.

աահմանի այլոյ թագաւորութեան. և էր թուակա-  
նիս մերոյ ամք հինգհարիւր երեքտասան։  
Արդ եկեալ հասանէր թագաւորն բազում  
բիւրուք և անթիւ սպառագինօք. մտեալ յաշխարհս  
մեր՝ ահ և երկիւղ հասուցանէր հեռաւորաց և  
մերձաւորաց. կոխէր, տապալէր զաշխարհս բա-  
զումս, մինչև եհաս ՚ի քաղաք՝ որ զմեղս իւր ՚ի  
կատարումն լրիւ իւրով ունէր։ Կանզնեաց զիո-  
րանն իւր ընդդէմ քաղաքին Անւոյ, և տարածեաց  
զբանակս ընդ լայնութիւն երկրին. Զանայր, հնա-  
րէր՝ զի զգուռն երկաթի և զնիգս պղնձի ՚ի բաց  
խլեսցէ, որ կայր ընդդէմ թագաւորութեանն իւ-  
րոյ. և անյոյս լեալ յաղագս ամրութեանն՝ թէ-  
ալէտ և զմարտն սաստկացուցանէր, կամէր չուել։  
Եւ զայն ոչ գիտացեալ թէ էարկ տէր ՚ի մէջ  
պահապանաց և իշխանացն երկպառակութիւն և  
անմիաբանութիւն, ամբոխումն և բաժանումն. և  
անդէն թողեալ զգործ պատերազմին՝ ՚ի փա-  
խուստ դարձան, և խուճապեալք յերկիւղէն՝ ոչ  
ոք յազգայինսն կամ ՚ի կարևոր բարեկամմն հա-  
յեցաւ, այլ իւրաքանչիւր ոք ահիւ ըմբռնեալ։  
Եւ տեսեալ զայս սպառազէն զօրացն՝ որ արտա-  
քոյ մարտնչէին, հանդէպ ինքեանց ՚ի վերայ պա-  
րըսպին ճանապարհ առնէին, և իբրև զկուտա-  
կումն աղեաց ծովու ՚ի ծոց քաղաքին հեղուին, և  
զպարսկական սուրն ՚ի գործ արկեալ, ոչ ումեք  
ինսոյէին։ Թակ բազմութիւն արանց և կանանց

յապարանս թագաւորացն դիմեալ՝ իբր թէ կարիցեն ապրիլ, և այլքն ճողովրեալ յամուրն որ<sup>1</sup> ներքի բերդ կոչի: Իսկ որ 'ի մէջ քաղաքին ամբարքի բերդ էին; իբրև գիտացին թշնամիքն թէ անրացեալ էին; իբրև գիտացին թշնամիքն թէ անպատճառք են, և ոչ գոյ 'ի նոսա այր պատեղազմօղ կամ կերակուր և ըմպելի, վաղվաղակիրազ կամ կերակուր և ըմպելի, վաղվաղակիրազ ապատեալ և շաապ տագնապի հասուցանէին, շուրջ պատեալ և շաապ տագնապի հասուցանէին, մինչև յակամայ արաւաքս հանին:

Անդ էր տեսանել զիշտոս և զտագնապս իւրաքանչիւր հասակի. զի 'ի գրկաց մարցն յափշտակեալ լինէին մանկունք՝ անողորմաբար գրարի հարեալ, և մարքն արեամբ և արտասուօք զմանկունս իւրեանց թանային. զհայր և զորդի մի սուր խողխողէր. զի ծերք և երիտասարդք, քահանայք և սարկաւագունք զմի սրոյ ճաշակ մահու ընկալան. զի լցաւ քաղաքն լի ծայրիւ և ծայրիւ, և ճանապարհ էր մարմին սպանելոցն. զի 'ի բազմութենէ կոտորելոցն և յանթուելի դիականցն՝ վտակն մեծ, որ անցանէ առ քաղաքականէր արեամբ. և գաղանք վայրի և քամն, ներկանէր արեամբ. զի լուսական գիտականցն. վամն զի ընտանի՝ եղեն գերեզման դիականցն. վամն զի ոչ գոյր որ թաղէր և հարկաւոր հողովու ծածկէր զիսողխողեալսն: Այլ և 'ի<sup>2</sup> ճարպոյ անիրաւու թեան 'ի նմա գործելոցն տոչորեցաւ բարձրաշէն և գեղեցկայարմար ապարանքն, և եղեւ ամենայն

1 Մի օր. Նիրք:

2 Երկ. օր. 'ի ճանապարհաց:

բնակութիւնն իբրև հողաբլուր. և վաշխն և նենգութիւնն որ 'ի նմա՝ խափանեցաւ:

Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և 'ի քրտանց տընանկաց վարթամանան, և 'ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն. և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առաղքատս և տնանկս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և 'ի գործոց աղտեղութեան ոչ խորշին, այլ միայն արբեալ լինին 'ի յանկութեանցն որ զնոսա ըմբռնեալ ունի: Եւ արդ զինչ լինի նոցա 'ի հասանել բարկութեան տեառն. սպասին և պակասին որպէս մոմ յերեսաց հըոյ, եթէ թագաւոր իցէ և եթէ իշխան, որպէս ծանեաք 'ի<sup>1</sup> գրելոցա: Բայց թագաւորն Պարսից բազում գաւառաց տիրեալ, և անթիւ տւարաւ դարձաւ յաշխարհն իւր<sup>2</sup>:

1 Երկ. օր. 'ի գրել զայս:

2 Յերեք օր. աստանօր միաշար զնի յաւելուածս 'ի յետանց. Երկորդի Դաւթի թուսկան ՇՀԳ. Երրորդ Դէորդի թուսկան ՈՓ. 'ի ՈԶէ Թաթարն էտ զԱնի եւ զալենայն տիեզերս:

## ԳԼՈՒԽ ԻԵ.

ՅԱԴՎԳԱՐ ԹԱԳԱՐԻՈՐԻՆ ՅՈՒԽԱՅ, ՈՐ Ի ԹԱԳԱՐԻՈՐԵՆ  
ՊԱՐՄԻՑ ԶԵՐԲԱԿԱԼ ԵՂԵՒ.

Եւ արդ ոչ է պարտ անհաս և անձեռնարկելի իրաց պատմօղ լինել, կամ ընդ գրով արկանել, զորոց ոչ այլոց աշխատութիւն տուեալ է մեզ, և ոչ յումեքէ պահանջեցաւ 'ի մէնջ, և ոչ մեք կարօղ եմք ձեռն արկանել. վասն այնորիկ բազում ինչ հարկաւոր պատմութեանց որ ընդ սոքօք են՝ անտես արարաք, այլոց թողլով ճարտարաց և հարուստ մտաց, զի թերես պահաջեցէ ոք 'ի նոցանէ. և այսու նախանձ արկից կարողացն. բայց առոգանք ոչ սակաւ համարեցաք՝ զանց առնել զերկուց թագաւորացն զնանդէս պատերազմի. այլ փոքր բանիւ զմեծամեծ իրս վճարեսցուք:

Բայց թագաւորն Դիոժէն որ էր վաթմներորդ 'ի մեծէն կոստանդիանոսէ՝ ըստ համարոյ թագաւորացն, փոքր ինչ աւելի կամ նուազ, իբրև ետես զի թագաւորն Պարսից ոչ սակաւ աշխարհ հատուած արար 'ի յիւրմէ թագաւորութիւնէն, և զկողմնակալսն Յունաց փախստական արար, և ինքն մեծաւ աւարաւ և զերութեամբ դարձաւ յաշխարհ իւր. ապա և թագաւորն Յու-

նաց զկնի տասն ամաց գործ պատերազմի յանձն առնու ըստ նախանձու և արիական բնութեանն. զի մի անարի և վատ երևեցի, և զկնի ինքեան վատ յիշատակ թողեց. խրոխտալով և մեծաւ ցասմամբ իրք ՚ի վերայ ցամաքի ընդ ծով անցանէր, և զետեղեալ յաշխարհն Բիւթանացւոց, անհուն բազմութիւն յինքն կուտէր: Զի դեռ ունէր զլայն և զբնդարձակ թագաւորութեանն զսահմանն, 'ի հովտացն Փիւնիկեցւոց՝ ուր է մեծն Անտիոք, մինչև յամուրն Վան, և զամենայն երկիրն Ռշտունեաց յանդիման Հերայ: Իբրև ետես զայնքան բազմութիւն զօրաց 'ի մի վայր ժողովեալ, ամբարտաւանեալ հպարտացաւ 'ի միտս իւր չյաղթիլ յերկրածին թագաւորաց. և ոչ զբան մարգարէին ածէր զմտաւ, թէ ոչ բազմութիւն զօրաց կարիցեն ապրեցուցանել զթագաւորն, և ոչ զհսկայ՝ զօրութիւն իւր. այլ աջ և բազուկ ամենակալին:

Արդ խորհուրդ իմն անվայելուչ 'ի միտ արկանէր, և բազում զօրս 'ի ձեռն սպարապետաց ընդ այլ ճանապարհ արձակէր. և ինքն բազում ամբոխիւ յարեելս ճանապարհ կալեալ գայր, հասանէր 'ի մեծ քաղաքն Թէոդորովիս. և անդ զայրուձի կազմէր: Զարաչար են մեղք, և զորդեզը թիւն և զիմաստութիւն մերկացուցանէ 'ի գործելեաց. բայց առաւել ևս ամբարտաւանութիւնն, որով վարին իշխանք և թագաւորք, և ոչ

հաւանին յիշատակաւ առաջին ամբարտաւանիցն եղծելոցն. զի նոյն ախտս այս չարութեան՝ ապականիչ է ամենեցուն որ կը են զսա. զի ոչ եթէ այլ ոք դիմակաց է ամբարտաւանին, այլ Աստուած է հակառակ՝ ըստ առակողին: Վասն որոյ ոչ ետ թոյլ գօրացն հանգիստ առնուլ մինչև դայցեն ժողովեսցին 'ի նա այլ բազմութիւնքն, և զիրեարս յորդորեսցեն 'ի քաջութիւն և յարութիւն և լինիցին մեծ բանակ՝ թշնամեացն սոսկալի. այլ իւրովքն կամեցաւ զգործ պատերազմին յաջողել. վաղվաղակի ուր թագաւորն Պարսից բանակեալ էր, անդր հասանէր առ սահմանօքն Մանազկերս գաւառի. և անդ զիւր արքայական խորանն հարկանէր յանդիման Պարսից յական խորանն հարկանէր ամբացուցանէր, և օրդնդին, և շուրջ զիւրեաւ ամբացուցանէր, և օրպատերազմի սահմանէր:

Բայց թագաւորն Պարսից խորամանկութեամբ առ երկիւղի զպատերազմեն խնդրէր. զի միցրուեալ զօրացն եկեալ՝ զթագաւորն ամբացուցեն, և անմարտնչելի նման ճակատն լինիցի: Լաւ համարէր երկու մասին քան թէ երիցն դէմ կալ: Չափապ տափնապի յարուցանէր, մինչև անդէն աւկամայ յունական ճակատն կազմէր ընդդէմ կազմ ճակատուն Պարսից: Եւ իբրև խրոխտալով առ իրեարս յարձակէին, և պատերազմական հանդիւստ ընդ միմեանս բաղխէին, և դեռևս ոչ երեէր և ոչ միոյ գնդի պարտութիւն. անդէն վաղվա-

ղակի մեծ գունդ մի՛ առ որս չիք 'ի նոսա աստուածաշաշտութիւն, ապստամբեալ 'ի թագաւորէն Յունաց՝ 'ի կողմ թշնամեացն յաւելուին: Վասն որոյ բազում բեկումն զօրացն եղեւ. և յայնմ հետէ յապաղանօք և ոչ քաջութեամբ 'ի դասնմատչէին, և զՊարսիկսն գրգուեալ՝ ժիր և անմարտնչելիս կազմէին: Բայց թագաւորն Յունացանպատճառ և անտեղեակ լի ցամամբ կայր ընդ զօրս Հայոց և ընդ ազգն, և ընդ ակամբ հայէր 'ի նոսա. բայց իբրև ետես միամտութեամբ զպատերազմն և զքաջ արանցն զնահատակութիւնն, որ ոչ զանգիտէին 'ի կորովի աղեղնաւորացն Պարսից, այլ արութեամբ ընդդէմ կային հանդիսին, և ոչ զթիկունս դարձուցանէին. թէպէտեբազումք 'ի սիրոյ թագաւորին բաժանեցան. սակայն միամտութեամբ նոքա զման յանձն առին, զի և զինի մահու՝ միամտութեամբ քաջութեան վայելուչ յիշատակ թողցի. ապա սէրս անդէպս ցուցանէր, և պարզես անձեռնարկելիս խոսանալի:

Անդ 'ի վեր հայեցեալ թագաւորն՝ յորում բազմեալն էր, և նկատեալ հայէր առ ախոյանսն. և տեսեալ յիւրոց զօրացն խուճապեալ և 'ի փախուստ դարձեալ, անդ և անդը վաղվաղակի զսպառազինի և զինուորի ձև զգեցեալ, և իբրև զփայլակն հասանէր 'ի ճակատ մարտին. և 'ի քաջարանցն Պարսից բազումս դիաթաւալ կացուցանէր, և շտապ տափնապի զօրացն առնէր: Այլ

զայն ոչ իմանայր թէ զօրավար զօրացն տեսոն  
էք ընդ նմա, որ Յեսուս երկեցաւ և տայր  
զյաղթութիւնն. և ոչ ել տէք ընդ զօրս մեր զի-  
նու և վահանաւ, և ոչ ենան սուր ընդգէմ թշշ-  
նամեացն և արգել. և ոչ տէք զօրութեանց ընդ  
մէջ իւր ածաւ, և ոչ եղջիւր փրկութեան և յու-  
սոյ եղե մեզ տէք: Այլ յինքն ամփոփեալ զզօ-  
րութիւն իւր ՚ի մէնջ, և մատնեաց զմեզ ՚ի ձեռս  
թշնամեաց մերոց և ՚ի նախատինս դբացեաց  
մերոց. և իբրև զոչսար ՚ի զենումն ետ. աղե-  
ղունք մեր փշրեցան, և զէնք մեր խորտակեցան.  
զօրականք մեր տկարացան և լքան. զի երարձ  
տէք զզօրութիւն իւր և զսիրս քաջութեան ՚ի  
զօրականաց և յլշխանաց մերոց. առ զսուսեր և  
զկարողութիւն ՚ի նոցանէ՝ և ետ թշնամեացն, յա-  
ղագս անպատշաճ վարուց նոցա:

Արդ զայն աշխարհակալ և զմեծ աթոռոյ  
տէք, իբրև զստրուկ մի անարի մեղացն՝ ձեր-  
բակալ արարեալ, առաջի թագաւորին Պարսից  
կացուցանէին. այլ Աստուած՝ որ հարկանէ և  
բժշկէ, որոյ անբաւ է քաղցրութիւն մարդասի-  
րութեանն, և ոչ ՚ի սպառ ՚ի վայր հարկանէ զոր  
խրատէն, այլ սակաւ փորձութեամբ ներէ՝ զի  
զիտացուք մեք զմեր տկարութիւնս, խնայեաց  
և մեծարեաց զիւրոյ պատուանդանի աթոռոյ  
տէքն, և արկ ՚ի սիրտ գաղանամիտ թագաւորին  
Պարսից զսէր և զինամ իբրև ՚ի վերայ եղբօր

սիրելւոյ. բազում դիւրութեամբ և խնամով ար-  
ձակեաց զնա:

Եւ արդ զոր Աստուած ազատեալ՝ ՚ի ձեռանէ  
այլազգույն կորզեալ ենան, որ իւրքն էին՝ նես-  
գութեամբ և խայտառականօք խաւարեցուցին  
զլուսարանս նորա և սպանին, և անջնջելի արիւն  
՚ի վերայ այնմ թագաւորութեանն հեղին: Յայնո՞  
հետէ բարձաւ զօրութիւն յիշխանաց և ՚ի զին-  
ուորաց, և ոչ տուաւ յաղթութիւն այնմ թա-  
գաւորութեան. և իշխանք նենզութեամբ և մա-  
խանօք առ իրեարս կային, և զդատաստանաց  
իրաւունս բարձին. միայն զաշխարհն աւերէին և  
ոչ փրկութիւն զործէին: Մինչև բարկացեալ սըրտ-  
մառութեամբ տէք՝ հրաւիրեաց զազգս բազումս  
՚ի վրէժինդրութիւն ինքեանց, ՚ի Լուսնալերանց  
և ՚ի մեծէ գետոյն որ անցանէ ՚ի հիւսիսակողմն  
Հնդկաց, այլալեզու և չար ազգաց գալ հեղուլ  
իբրև զջուրս բազումս ՚ի վերայ աշխարհաց մե-  
րոց, արկանէլ զհիմունս իւրեանց առ եզերը ծո-  
վուն Ովկիսանոսի, և կանզնել զխորանս իւրեանց  
յանդիման քաղաքին մեծի. և լնուլ զամենայն  
աշխարհն արեամբ և գիւսկամբք, և բառնալ զկարդս  
և զկրօնս քբիստոնէութեան:

Բայց իբրև ետես թագաւորն Պարսից Ալ-  
ֆասան զայնքան յաղթութիւն՝ որ ՚ի ձեռն իւր  
եղե, և զաջողակ երից պատերազմացն, զի զա-  
ռաջինն թէպէտ անառ մնաց Մանազկերտ՝ սա-

կայն բազում աշխարհ սրով և գերութեամբ տապալեաց. և երկրորդ զՇնի խողխողմամբ սրոյ և հրակիզութեամբ ամայի և անապատ արար. վասն այսորիկ աներկիւղ և խրոխտ մտօք դայ ընդ առաջ թագաւորին Յունաց: Եւ ուխտ եղեալ 'ի մտի, եթէ 'ի բուռն արկանի՝ սիրով և պատուով արձակեմ զնա յիւր թագաւորութիւնն. և երդմամբք դաշինք հաստատեալ, զի խաղաղութիւնն եղիցի ընդ Պարսից թագաւորութիւնս և ընդ Յունաց: Բայց իրեւ եղեւ բարձր 'ի գլուխ և յայսմ պատերազմիս, և զոր ինչ կամէրն<sup>1</sup> եղեւ և 'ի գլուխ եհաս. և յորմէ գողայրն և զարհուրէրն՝ կապանօք առաջի իւր յոտին կացուցեալ կայր իրեւ զմի 'ի ծառայից իւրոց. յայնժամ ապա յիշեաց զդաշինսն զոր եղ ընդ Աստուծոյ, և յարուցեալ նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ. և իրեւ զբարեկամ հաւատարիմ մեծարեաց զնա, և ուխտ ետ ընդ նմա, թէ յայսմ հետէ մի եղիցի ընդ իս և ընդ քեզ խոռովութիւն. այլ խաղաղութեամբ զթագաւորութիւն քո ունիցիս, և մեք զպարս կական տէրութիւնս. բայց զոր առի պատերազմաւ ինձ լիցի, և այլ մի արշաւեսցուք յաշխարհն ձեր. և արձակեաց զնա մեծաւ պատուով: Զկնի այսր իրեւ ետես եթէ գաւաճանութեամբ յիւրոց նախարարացն ըմբնեալ եղեւ, և յաշիցն զըկեցին, և ոչ եհաս 'ի թագաւորութիւնն, այլ չար-

1 Մի օր. կամեցաւ:

չարանօք մեռաւ, լի եղեւ խոռովութեամբ և ցամամբք. կամէր զսիրեւոյն հատուցանել, և անդէն ժամանեաց նմա մահ, և ել յաշխարհէս զկնի ամենայն երկրածնաց, ուր 'ի միասին են թագաւորք և տնանկք:

### ԲԱՆ ՅԻՇԱՃԱԿԱՐԱՆԻ ՆՈՅՆ ՀՐՈՅՄ

Կարեոր համտրեցայ առ սիրելի եղբարս մեր զրով յիշեցուցանել վասն գիտութեան ծանուցելոց իրաց, որպէս սկիզբն եղեւ բանիցս ճառել զԱստուծոյ նախագիտութիւնն, զանբաւութիւնն սակաւ բանիւք. թէ որպէս արագաքայլ և աշխարհայեաց գեղեցիկ և լուսաւոր տարբն՝ զի մինչդեռ էր կատարելապէս լուսով, և<sup>1</sup> զմիջակն ունէր ճանապարհի ընթացս, երագընթաց շարժմամբ ընդ ճանապարհն ձեպէր 'ի կիսագունդն անստուեր, գերկիր ընդ ինքեամբ ունելով, բազմաժամանակեայ մեղաց նիւթեալ լայնատարած պատմուճան, արկեալ զնա ինքեան. և այնպէս թանձր պարուրեալ շուրջ զնովաւ, որ զանհնարին փայլումն ճառագայթիցն արգել. և որ ոչ է ական համարձակ տեսանելի՝ նուաստագոյն քան զաստեզս երկեալ, միայն բոլորն երևէր: Որ ցուցանէր ինքեամբ օրինակաւ զանստուեր և լուսաւոր կարգս եկեղեցւոյ խաւարաւ փակեալ. և

1 Երկու օր. զվլջական:

զպայծառութիւն ոգւղց և զճառագայթս ճանապարհի առաքինութեան, անտեսանելի և աղջամըդին եղեալ։ Զի յայնմ հետէ՝ զոր յառաջազոյն ասացի, յորում էր թուական Հայոց չորեք հարիւր ութսուն և երկու, մինչև ցայժմ ուխտ սրբութեան և կարգ եկեղեցեաց քայլայեալ ապականեցան, և ոչ համբու խաղաղութեան կամ աւետիս<sup>1</sup> բարեաց լուաք. և ոչ մի արձան յաղթութեան կանգնեցաւ, և ոչ թագաւորաց և ոչ իշխանաց։ Եւ ոչ այդ միայն, նաև ոչ մարթացին կրօնաւորքն զդիմի հարկանել պատերազմաւէր դիւխն. այլ տկարացեալ և անզօր եղեալ, անժուժկալ և կամակոր՝ ընդ ձեռամբ թշնամեացն անկեալք, խոռվութեամբ և բարկութեամբ լի և պատարուն եղեւ երկիր. զի<sup>2</sup> ոտն առ ոտին եղեւ ճշմարիտ մարդարէւութիւն խաւարումն նորա. զի յայնմ հետէ յարձակեցան թշնամիք՝ ի վերայ մեր, և զգեցուցին մեղ հանդերձ սպոյ և տըրտմութեան, և բարձաւ ուրախութիւն յաշխարհէ։

Արդ իբրև այնպիսի աղէտք տարակուսանաց և աշխարհանեծ երկունք տարածեցաւ՝ ի վերայ ամենայն երկրի, և ել հուր հարաւային և եկեղ զամուրս բարձունս, և զաշտարակս անմատոյցս իբրև զմոմ հալեալ սպառեաց, պակասեալ նուշգեցան թագաւորք և իշխանք, և յոյս ակնկալու-

1 Երկու օր. բարութեան։

2 Մի օր. եւ որպէս զխոտն առ ոտին։

թեան ապաստանի բարձաւ՝ ի մէնջ։ Այլ տարածեցաւ առնասարակ՝ ի վերայ մեր բարկութիւն սրտմտութեան տեամն. զի քակեցան տունք ազօթից, և օծեալ իւղով սրբութեան քարինք՝ հիմն ապարանից այլազգեաց արկան։ և պաշտօն սըրբութեան բարձաւ՝ ի միջոյ, և եղաք յայպն և՝ ի նախատ հեթանոսաց. և մաշեցաք և կորացաք, և յերկիր կցեցան մէջք մեր. և եղաք իբրև զոսկերս ցամաքեալս, յորում ոչ գոյր՝ յոյս շնչոյ կամ կենդանութեան. և յանցանք հարց մերոց՝ ի մեզ լցեալ կատարեցաւ, խնդրել՝ ի մէնջ զպարտիս վըիժուց նախնեաց մերոց. եօթնապատիկ հատուցումն՝ ի ծոց մեր ընկալաք. վասն զի անուն քրիստոնէութեան՝ ի նախատինք և յայպն կատականաց համարեալ լինէր։ Զի իրաւունք և դատաստան բարձաւ՝ ի մէնջ, և արտասուաց և հառաջանաց մերոց տեղի ոչ գոյր. զի բարեպաշտութիւն նոցա յայն էր՝ զըկելն և կողոպտելն և սպանանելն զմեզ։ Զար թուէր նոցա հարկաւոր զգեսան որ զխայտառակութիւնս մեր ծածկէր, այլ յորժամ տեսանէին զմեզ մերկս և ծանակս՝ այնու առաւել ուրախանային. զի՝ ի բազում վըշտացն՝ որ պատահէր մեղ, երիթացեալս և խըռուացեալս իբրև ստուեր շրջէաք՝ ի վերայ երկրի Դողալով և զարհուրելով. կերակուր մեր անզօր, և ըմպելի դառն յերկիւղէ և՝ ի սպառնաեաց տերանց մերոց. վասն զի ոչ համարէին թէ դոյ

մեր Աստուած յերկինս, և կամ ազօթք մեր և  
պաղատանք առ նա հասցեն։ Զի կամեցաւ տէր  
այնպիսի խոշտանկանօք լլկել զմեզ, և հալածել  
և չարչարել, և գամենայն հասակ արկանել ընդ  
տանջանօք. արտաքսել և մերժել զմեզ յերեսաց  
իւրոց, որպէս պատժապարտն և յանցաւորս.  
ցըռել և հեռացուցանել զմեզ ընդ ազգս օտարս,  
թէ թերեա կարասցէ զստամբակ և զանհնազանդ  
միտս մեր և զիստերախ, արկանել զմեզ ՚ի ներ-  
քոյ խրատու գաւազանին իւրոյ իբրև զիսրայէլ  
յաւուրսն Եղիայի, և զՄամարիա յաւուրսն Եղի-  
նէի։ Վասն զի գոյր առ նոսա մասն յուսոյ,  
զթագաւորացն և զիշխանացն վերակացութիւնն,  
և որ քան զամենայն վերագոյն՝ զշնորհալից և  
զուրախարար բան մարգարէիցն, որ այսու զօ-  
րանային, և ընդդէմ կարէին կալ նեղութեան  
փորձութեանցն, զոր ընդունէին ՚ի տեառնէ։ Իսկ  
մերս ծանրագոյն և առաւելագոյն է քան զամե-  
նեսեան, անթագաւոր և անիշխան. անտերունչ և  
անվերակացու՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և  
ոչ գոյ մի տեղի ապաստանի գտանել մեզ. այլ  
նուաղեալ և հնազանդեալ եմք ՚ի ներքոյ թագա-  
ւորութեան հեթանոսաց կալ, և զսաստիկ հա-  
րուած գաւազանի նոցա օր ըստ օրէ ընդունէլ  
զի որով ոչ ծառայեցաք տեառն՝ ծառայեցուք  
այլազգեաց, և որով քամանեցաք զերկիւղ տեառն,  
երկիւղիւ սոցա տագնապեցուք օր ըստ օրէ. և

վասն զի զպաշտօն տեառն պղերգութեամբ մա-  
տուցաք, պաշտեսցուք և սպասաւորեսցուք սոցա  
՚ի առուէ և ՚ի զիշերի։ Զի ՚ի եթէ ըստ յանցանաց  
մերոց խրատեաց զմեզ, այլ զթութեամբ և ողոր-  
մութեամբ արկ զմեզ ՚ի բով խրատու յաղագս  
զգաստացուցանելոյ զմեզ և պիտանիս առնելոյ։  
Զի եթէ զիցես զմեզս մեր ՚ի կշիռ, ծան-  
ըրգոյն է քան զխրատ մեր՝ զոր ընկալաք ՚ի քէն,  
և թեթևագոյն պատուհասք քան զգարտիս մեր.  
զամենայն զրօսանս տանջանաց արկ ՚ի վերայ  
մեր, այլ յերեսաց քոց մի մերժեր, տէր. և զա-  
մենայն ալիս փորձութեան յարն ՚ի վերայ մեր,  
այլ ՚ի սիրոյ քո մի մերժեսցես զմեզ տէր։ Լաւ  
է անկանել ՚ի ձեռս քո և ընդունել ՚ի քէն խրատ  
և պատուհաս, քան թէ ՚ի բաց կալ ՚ի քէն ան-  
խրատաբար. լաւ է մերձենալ ՚ի քեզ չարչարա-  
նօք և նեղութեամբ, քան թէ հեռանալ ՚ի քէն և  
կալ անդորրութեամբ և դիւրութեամբ. շատ է  
մեզ այս՝ զի անուն սուրբ քո կոչեցեալ է ՚ի  
վերայ մեր, համարելով զմեզ քեզ ՚ի ժառան-  
գութիւն, ստանալ զմեզ քեզ ժողովուրդ նորոյ  
ուխտիս պատուական արեամբ։ Արդ մի թողուը  
զմեզ ՚ի ձեռանէ քումմէ վասն արարչական կա-  
մաց քոց, զի մի ՚ի սպառ չարչարիցիմք ՚ի հե-  
թանոսաց յատելեաց քոց. զի այս ամենայն և  
տառելագոյն քան զիլ մատենիս եկն ՚ի վերայ  
մեր վասն մեղաց մերոց։)

Եւ արդ շատ համարեցաք զամենայն ծփանս  
ալեկոծութեան գրել որ եղեւ յաւուրս մեր. և  
մասնաւորս բաժանել, որ ինչ հանդիպիւր յանց-  
նիւր տեղեաց, աշխարհաց և քաղաքաց, որոր ինչ  
կրեցաք 'ի հեթանոսաց: Զի ոչ մի օր, կամ միոյ  
ժամանակի հանդիպեցաք անդորրութեան կամ  
դիւրութեան. այլ ամենայն ժամանակ աւուրց  
մերոց լի եղեւ խոռվութեամբ և նեղութեամբ. և  
օր ըստ օրէ յաւելոյր ևս 'ի չարչարանսն և 'ի  
տառապանսն: Եւ ոչ ոք 'ի նոցանէ բարեմիտ ե-  
ղեւ առ մեզ, թէպէտ և բազում ամօք բնակեցան  
առ մեզ. ոչ արգելաւ սրտմտութիւն նոցա որ-  
պէս իժի, և ոչ եղեւ յագումն ազահութեան նոցա  
իբրև հրոյ. զի ամենայն խորհուրդը նոցա որ  
վասն մեր, 'ի չարութեան են, և բանք նոցա լի  
նենգութեամբ: Վասն զի ամենայն առաւոտու-  
նորագոյն սկիզբն չարեաց առնէին. զի այն էր  
խորհուրդ նոցա ամենեցուն՝ մաշել և սպառել  
զմեզ իբրև զնացեալ ձորձս, և բառնալ զյիշա-  
տակս մեր 'ի միջոյ իւրեանց, զի բնաւ մի հա-  
յեսցին և տեսցեն զմեզ կենդանիս, այլ եղիցին  
գերեզմանք մեր անհետ 'ի ներքոյ ոտից նոցա:  
Վասն այնորիկ կարօտացաք հին ժամանա-  
կագրացն պատմութեան, զի ըստ պատշաճի և  
յարմարական բանիւք իւրեանց դրոշմեսցեն զայս  
զիք մատենի, զներկայից և զանցելոց զհանդի-  
պումն անսխալապէս 'ի մի հաւաքելով որ ինչ

եղեն, թողլով զկնի իւրեանց յիշատակս իրացն՝  
որ եղեն, որպէս ցուցանէ առաջնոցն պատմա-  
գրութիւնն: Իսկ որ աստ յայսմ մատենիս զրե-  
ցան՝ հչ լիով, այլ միայն զսկիզբն իրացն որ եղեւ  
և անց ընդ մեզ, զի ոչ զկատարումն իրացն կա-  
րացաք բովանդակ զմտաւ ածել կամ զրել. բայց  
զայս ամենայն յաղագս այնորիկ եղաք, զի ըն-  
թերցջիք և գիտասջիք, եթէ մեղքն եղեւ այս ա-  
մենայնի պատճառ որ անց ընդ մեզ. զի հայե-  
ցեալ ընդ մեզ՝ զարհուրեսջիք երկնչել յերեսաց  
տեառն, և դողալ յահէ զօրութեան նորա. կան-  
խել յառաջագոյն խոստովանութեամբ և ապաշ-  
խարութեամբ՝ վաղ ժամանել քան զշարժել պա-  
տուհապին, և ընդդէմ կալ:





**ՏԱՐԱԿ ԱՆԹԻԱՆՑ**

## ՑԱՆԿ ԱՌՈՒԱՆՑ

- Արաս՝ հայր Գագկայ 98:  
 Արխողոմ 47:  
 Ագադ 55:  
 Ալիքասլան թագաւոր Պար-  
     սից 173:  
 Ախնի 152:  
 Ահարոն որդի Բուլղարին  
     86, 87:  
 Ահարոն որ և Աւան 109:  
 Աղիւսոյ 154:  
 Աղուանը 151:  
 Աղօրի աշխարհ 4:  
 Աղօրի գաւառ 124:  
 Ամիրա 35:  
 Անանիա՝ եղբայր Խաչկայ  
     64:  
 Անանիաս 43:  
 Անդրէաս առաջնորդ 153:  
 Անդրոնիկէ 22:  
 Անի 9, 10, 55, 60, 61, 62,  
     89, 109, 124, 162, 164,  
     165, 167:  
 Անտիոք 39, 169:  
 Անտիոքացիք 32:  
 Աշոտ 7, 9, 10, 51:  
 Աշոտ թագաւոր Հայոց 109:  
 Ապահովնեաց գաւառ 93,  
     150:  
 Ապահովնիք 43, 93:  
 Ապուսուար 63, 109:  
 Առիճ Խաղաղոյ 22, 64:  
 Ասիտ իշխան 62, 63:  
 Ասորեստանեայք 122:  
 Ասորիք 34, 87:  
 Աբուրան որդի Ամիրայի  
     98:  
 Ատոմ որդի Սենեքերիմայ  
     89:  
 Արածանի գեօլ 110:  
 Արծակ 41:  
 Արծէէ 106:  
 Արծն, Արծին 63, 78, 85,  
     92, 127, 164:  
 Արծրուկնեաց աշխարհ 40:  
 Արծրունեաց գաւառ 27:  
 Արծրունիք 27:  
 Արծէշ կամ Արծիշ գաւառ  
     31, 93:

Աւան որ և Ահարոն 109:  
Արշարունեաց ամուրք 69:  
Արշարունիք 69,  
Աւնիկ ամրոց 100:  
Ափխաղ և Ափխաղք 5, 7, 9,  
13, 22, 24, 25, 28, 61, 93:  
Բարելացիք 27:  
Բարելացւոց աշխարհ 109:  
Բարելոն և Բարելովը 17,  
19, 93:  
Բարերդ 97:  
Բագարատ թագ. Ափխա-  
ղաց 5, 7, 61:  
Բազրատունի ցեղ 7:  
Բազրեանդ 5:  
Բազմազրիւր 155:  
Բազամ 102:  
Բաղակ 102.  
Բարսեղ 40:  
Բասեն և Բասեան 12, 18,  
21, 100:  
Բասենոյ գաւառ 66, 118:  
Բասենոյ գաշտ 21, 69, 86,  
100:  
Բերկի 40, 93:  
Բզնունիք 107:  
Բզնունեաց ծով 107:  
Բիւթանացիք 169:  
Բլուրս գիւղ 127:  
Բուլղարաց աշխարհ կամ

երկիր 6:  
Բուլղարք 6, 39:  
Բջին 61:  
Գագիկ 7, 8, 9, 55, 60—62:  
Գագիկ որդի Արասայ 98:  
Գալիլեացիք 68:  
Գայլախաղուտ 155:  
Գանձակ 109:  
Գեղբուայ լեառն 77:  
Գէորգ թագաւոր Ափխա-  
ղաց 7, 9, 10:  
Գէորգի 10—13, 23, 25,  
30:  
Գողիաթ 105:  
Գուրգէն 5, 23:  
Գրիգոր Լուսաւորիչ 113:  
Գրիգոր որդի Վասակայ  
61, 86, 142:  
Գրիգոր սուրբ (Եկեղեցի)  
142:  
Գրիգոր վարդապետ 8:  
Դամասկոս 163:  
Դանիէլ մարգարէ 38, 116:  
Դաւիթ Դունացի 61:  
Դաւիթ Մարգարէ 4, 29,  
48, 50, 77, 87, 105,  
110, 134, 163:  
Դաւիթ որդի Սենեքերիմայ  
62:

Դաւիթ Կիւրապաղատ 3,  
22:  
Դաւիթ որ և Սենեքերիմ  
20:  
Դեմեսլիկոս 39, 45:  
Դերջան 97:  
Դիոժէն կայսր 168:  
Գու գեօլ 100:  
Դուկն 63, 109:  
Եբայեցիք 50, 134:  
Եգիպտացիք 86, 136:  
Եգիպտացւոց թագաւորու-  
թիւն 122:  
Եգիպտոս 27, 134:  
Եղեր 163:  
Եղանց բերդ 123:  
Եղելիա մարգարէ 87:  
Եղելիէլ 111, 137, 145:  
Եկեղեաց գաւառ 3, 12, 97,  
125, 139, 157:  
Եղիա դատաւոր 157:  
Եղիա մարգարէ 77, 102,  
178:  
Եղիսէ մարգարէ 145, 178:  
Եղնուտ 124, 141:  
Եպիսառատ եպիսկոպոս  
160:  
Եսայի կրօնաւոր 149:  
Եսայի, Եսայիա մարգարէ  
5, 50, 78, 80, 81, 86, 94:

Երեմիա մարգարէ 69, 94,  
115, 122, 150:  
Երիզա աւան 123:  
Երիքով 157, 163:  
Երկրորդ Հայք 89:  
Երուսաղէմ 43, 59, 78, 81,  
82, 83, 115:  
Եւսերի 43:  
Եկրատ և Եկրատէս գետ  
127, 158:  
Զաքարիա եպիս. 23, 24:  
Զոյի՝ դուստր Կոստան-  
դիանոսի 32:  
Հռատ մեծ իշխ. 13:  
Հռուզը 4:  
Թաթուլ 98:  
Թեսաղոնիկեցիք 40:  
Թէսաղոնիկէ 39, 40:  
Թէոդոռայ՝ դուստր Կոս-  
տանդիայ կայսեր 108:  
Թէոդոս կայսր 116:  
Թէոդորոս 110:  
Թէոդորոս որդի Ահարոնի  
109:  
Թէոդորոս Եղբօրորդի Սա-  
մուէլ կաթողիկոսի 158:  
Թէոդուլովիս 11, 169:  
Թէոդորա 44:

Թոնդրակեցիք 142, 149:  
Թոնդրակը 150:  
Թուբքաստան 65, 110,  
133, 135:

Իվանէ որդի Լիպարտի  
123:  
Իսրայէլացիք 136:  
Իսրայէլ 25, 41, 48, 49,  
51, 67, 68, 77, 87, 111,  
136, 137, 178:

Լիբանան 163:  
Լիպարիտ 87, 88:  
Լուսաւորիչ 8, 59, 60, 90,  
145, 149:  
Լուսաւորչի աթոռ 8:  
Լուսնալերինք 173:

Խալիֆայ 88:  
Խաղակը և Խաղակաց գա-  
ւառ 12, 16, 69, 97,  
125:  
Խաղաոյ Առիճ—բերդ 22,  
64:  
Խաչ գիւղ 155:  
Խաչիկ կաթողիկոս 64, 89:  
Խլաթայ գաւառ 110:  
Խլաթայ լեանն 150:  
Խորձան և Խորձայն 87,  
140:

Խորձեն 95:  
Խորձենոյ անտառ 69:  
Խրթի անտառ 125:  
Խտրիկ 41:

Ծիրանիս լեանն 118:  
Ծորոխ գետ 97:  
Ծուալիկ որդի Փոկասայ  
19:

Կաթուղիկէ 37:  
Կամախ գաւառ 138:  
Կամարայ 152:  
Կամենաս ոմն իշխ. 63, 86:  
Կաշէ ագարակ 154:  
Կարապետ սուրբ 142:  
Կարին կամ Կարնոյ քա-  
ղաք 12, 22, 65, 100,  
124, 149:

Կարնոյ գաւառ 63, 127:  
Կարնոյ գաշտ 11, 69:  
Կարս քաղաք 91:  
Կաւալիսաս 41:  
Կեսար 44, 46:  
Կիւրակոս երէց 53:  
Կոթեր աւան 158:  
Կողոնիա 138:  
Կոմենս կայսր 120:  
Կոմիանոս ոմն 30:  
Կոմիանոս կայսր 120, 132,  
133:

Կոստանդ որ և Մոնոմախ  
46, 50, 53:  
Կոստանդին 28, 29, 30,  
108:  
Կոստանդիանոս Մեծն 168:  
Կոստանդիանոս որդի Վաս-  
ի 28, 30, 32:  
Կոստանդնուպօլիս 3, 20,  
28, 52, 34, 39, 64, 89,  
90, 108, 150:

Կովկաս 93:  
Կունծիկ արելզայ 151:

Հարել 144:  
Հալպ քաղաք 33:  
Հայք 7, 17, 26, 37, 53,  
54, 59, 63, 64, 86, 89,  
90, 98, 112, 150, 171:  
Հայոց աշխարհ և երկիր  
3, 7, 8, 53, 56, 109,  
117, 164:  
Հայոց տուն 43, 50, 69,  
86:  
Հանձէթ 95:  
Հաշտենք և Հաշտենից գա-  
ւառ 69, 123:  
Հարք 5, 43, 110, 142:  
Հաւածիչ ամուրն 4, 124:  
Հեր գաւառ և գաշտ 26,  
169:  
Հերմոն լեանն 77:

Հերովդէս 161:  
Հնդիկը 173:  
Հնձուք 8:  
Հողէփեռնէս 105:  
Հոռոմուի վանք 17:  
Հոռոմք և Հոռոմ 3, 10, 11,  
16, 18—20, 25, 31, 32,  
37, 38, 40, 41, 54, 55,  
86, 90, 97, 112, 123,  
133, 141, 160:

Հոռոմց աշխարհ և գա-  
ւառ 6, 36:  
Հոռոմց զօրք 7, 13:  
Հոասիմ 5:  
Հոռմայեցիք 49:  
Հրահատ ոմն 142:  
Հրանոյշ 151:  
Հրէայք 49, 87:

Հազարոս 138:  
Ճաղարոս 138:  
Ճանեթ-անտառք 93, 125:  
Մազդաշտ 19:  
Մանակլերտ 5, 93, 100,  
170, 173:  
Մանանաղի 43, 74, 125,  
130, 151, 158:  
Մանեակ իշխ. 36, 47:  
Մանկան—Գոմ գիւղաքարտ  
Դաք 110:

Մանտատօր 104:  
 Մարիամ 159:  
 Մելիտինէ 61, 133, 138, 139:  
 Միւսայէլ կայսր 38, 39, 54, 133:  
 Միւսայէլ կայսր (այլ) 119:  
 Միջազգեաթ 130:  
 Մոնոմախ կայսր 46, 50, 53, 107, 116:  
 Մովաք 136:  
 Մովաքացիք 25:  
 Մովսէս մարդարէ 27, 49, 77, 80, 105, 134, 137, 152:  
 Մորբանս գիւղ 140:  
 Մուհարկին քաղաք 150:  
 Յակոբ առաքեալ 144:  
 Յակոբոս ոմն եպիսկոպոս 142:  
 Յայել կին Քարերայ 105:  
 Յեղաբէլ 77, 80:  
 Յենովը վարդապետ 8:  
 Յեսու 157, 172:  
 Յիսուս 146, 155:  
 Յոբ 14:  
 Յոյնք 19, 51, 58, 61, 122, 168, 171, 174:  
 Յունաց աշխարհ 150:  
 Յովհաննէս առաքեալ 144:  
 Յովհաննէս եղբայր Աշո-  
     տոյ 9, 17, 51, 54:  
 Յովհաննէս Մկրտիչ 33:  
 Յովհաննէս վարդ Կողեռն  
     կոչեցեալ 8:  
 Յովսէփ նահապետ 68, 144:  
 Յովսէփ վարդապետ՝ նա-  
     խագահ Հնդուց 8:  
 Յովրամ 24:  
 Յուդայ 115:  
 Յուդայ մատնիչ 59:  
 Նաբովթ 80:  
 Նեռն 42:  
 Ներքի բերդ 166:  
 Նիկիացիք 28:  
 Նիկիական կանոնք 147:  
 Նիկիտոմ ներքինի 31:  
 Նինուէացիք 71:  
 Շատիկ 10:  
 Շիրակ 54:  
 Շիրի բերդաքաղաք 151:  
 Շղիայ 23, 24:  
 Ովք 105:  
 Ովկիանոս 173:  
 Որտիլմեղ 104:  
 Ուխթիք կամ Ուխտիք 5,  
     7, 12:  
 Ուռնա քաղաք 35:

Պահլաւ 54:  
 Պախրայ լեառն 155:  
 Պաղակացիս ծովակ 13:  
 Պառիկիմանոս 31 «  
 Պարիար լեառն 93:  
 Պարսիկք և Պարսք 9, 20, Սամուէլ վարդապետ 8,  
     23, 40—42, 58, 69, 70, Սամուսատ քաղաք 36,  
     82, 98, 109, 110, 117, 120, 123, 124, 138, 140, Սամփոն 36, 62, 146:  
     141, 164, 167, 168, 170—174:  
 Պարսից աշխարհ 26:  
 Պարսից դուռն 30:  
 Պարսից տուն 133:  
 Պետրոս առաքեալ 59,  
     146:  
 Պետրոս կաթողիկոս 11, 16,  
     17, 60, 62: 89:  
 Պիհունացիք 79:  
 Պիղատոս 68:  
 Պոնտոս 16, 18:  
 Պողոս առաքեալ 49, 135,  
     155:  
 Քերմայ քաղաքագիւղ 157:  
 Ուշունիք 169:  
 Ուռուպամ 120:  
 Ուռմանոս կայսր 32, 36,  
     37, 39:  
 Սալամայ 35:  
 Սալբորա /21, 23, 24:  
 Սամարիա 178:  
 Սամուէլ կաթողիկոս 157,  
     158:  
 Սարսիկք և Պարսք 9, 20, Սամուէլ վարդապետ 8:  
     23, 40—42, 58, 69, 70, Սամուսատ քաղաք 36,  
     82, 98, 109, 110, 117, 120, 123, 124, 138, 140, Սամփոն 36, 62, 146:  
     141, 164, 167, 168, 170—174:  
 Սառպից աշխարհ 26:  
 Սառպից դուռն 30:  
 Սարգիս 54, 55, 61:  
 Սարգիս կաթողիկոս 8, 11,  
     17, 149:  
 Սարգիս վարդապետ 8:  
 Սաւող 48, 55, 87:  
 Սեալ լեառն 33:  
 Սեաւ-քար բերդ 64:  
 Սեբաստիա քաղաք 20:  
 Սեբաստուպօլիս 89:  
 Սելովմայ ջուր 5:  
 Սենեքերիմ 20, 62, 89:  
 Սեանայ կղզի 8:  
 Սեքարացիք 79:  
 Սիկլառոս-Վարդ 19:  
 Սիմն լեառն 93, 141:  
 Սիմոն ներքինի 31:  
 Սիսակայ տուն 69:  
 Սիսար 105:  
 Սիովիս 81:

Սմբատ որ և Յովհաննէս 7, 9, 10:  
 Սմբատայ բերդ 74, 76:  
 Սմբատայ լեռն կամ լե-  
 րինք 65, 76, 77:  
 Սողոմ 83:  
 Սողոմացիք, Սողոմայեցիք  
 83, 137, 138:  
 Սողոմոն իմաստուն 29,  
 58, 107, 153, 163:  
 Սուլտան, 92, 98, 99, 100,  
 102, 105—107, 109,  
 117:  
 Սուրբ Գրիգոր եկեղեցի  
 142:  
 Սուրբ Կարապետ 142:  
 Սուրմառի 55:  
 Սպեր 69:  
 Ստեփաննոս Տարօնացի:  
 Վահրամ իշխան Հայոց 54,  
 60, 63:  
 Վաղարշակերտ և Վաղար-  
 շուկերտ 12, 23:  
 Վաղարշաւան-դաստակերտ  
 65:  
 Վան 169:  
 Վանանդ 12, 98:  
 Վասակ հայր Գրիգորոյ  
 իշխանի 61, 142:  
 Վասիլ իշխան 106, 108:

Վասիլ կայսր 3, 7, 20, 26,  
 30, 32, 108:  
 Վասպուրական 41, 65, 86:  
 Վարդ-Միկլառոս 19:  
 Վիրք 9, 19, 28, 58, 88:  
 Վրաց աշխարհ և գաւառ  
 31:  
 Վովչու իշխան 152, 154,  
 157, 160:  
 Տարէլ 5:  
 Տայան 86:  
 Տայք և Տայոց աշխարհ 4,  
 7, 18, 97:  
 Տայոց ամուրք 69:  
 Տայոց զօրք 4, 7:  
 Տայոց տուն 4, 7, 13:  
 Տարընտայ գաւառ 90:  
 Տարընտայ վանք 90:  
 Տարոն և Տարօն 69, 109,  
 110, 141:  
 Տիրան վարդապետ 9:  
 Տուարածոյ տափ 100:

Փրրիսն - հալիսկոպոսաթան  
 160: Քորեփ 77:  
 Քրիստոս 79, 82, 85, 89,  
 97, 115, 134, 142, 143,  
 146, 155:  
 Քարեր 105:  
 Քաղդէացիք 19:  
 Քանանացիք 163:  
 Քերպիաթու ձոր 102:  
 Օկոմի աւան 12, 118:  
 Օռթանոռոս 39:

1872. 10. 11. 1872. 10. 11. 1872. 10. 11.  
1872. 10. 11. 1872. 10. 11. 1872. 10. 11.  
1872. 10. 11. 1872. 10. 11. 1872. 10. 11.  
1872. 10. 11. 1872. 10. 11. 1872. 10. 11.  
1872. 10. 11. 1872. 10. 11. 1872. 10. 11.

«Ազգային գրադարան



NL0412119

6119

